Նշված նորմերի համաձայն՝ վճռի դատաճառաբանական մասում դեմք է նշվել դատարանի կողմից դարգված գործի հանգամանքները, ադացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ադացույցները մեճելու փաստարկները, ինչդեա նաև այն օրենքները, ՀՀ միջազգային դայմանագրերը և այլ իրավական ակերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

Դատարանի կողմից վճռի դատաճառաբանական մասում չի նշվել որևէ իրավական ակքի նորմ, որի հիման վրա բավարարվել է հայցվորների դատահանջը: Ուստի, Դատարանի կողմից կայացված դատական ակքը հիմնավորված չէ:

Վճռաբեկ բողոք բերած անձը վերը նշված հիմքերով դատահանջել է բեկանել Դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 13 թիվ 06-2965 վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր բնության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայցվորներ Գյուլխանում և Մկրտիչ Գասադարյանները ամուսիններ են:

2) Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Երևան ֆաղափ Ն.Շենգավիթի Կալինինի անվան կոլտնտեսության վարչության 1971 թվականի դեկտեմբերի 12-ի նիստի թիվ 13 արձանագրության համաձայն՝ Գյուլխանում Միսակի Գասադարյանը ընդունվել է աշխատանքի 3-րդ բրիգադում, և նրան որդես սնամերձ հողամաս հասկացվել է 400 ֆմ հողասարածֆ:

3) ՀՀ հարկային դեպարտամենտի 28.07.1996 թվականի համար 238013 թիվ 4/964 վճարման ծանուցագրի համաձայն՝ հայցվորները վճարել են հողի հարկը:

4) Կադաստրի 2005 թվականի նոյեմբեր 21-ի թիվ 1Կ-04/4-5538 գրության համաձայն՝ Երևան ֆաղափ Ն.Շենգավիթի 11-րդ փողոցի 2-րդ նրբանցքի տուն 29 հասցեում անբաժ գույք գրանցված չէ:

4. Վճռաբեկ դատարանի դատառաքանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակի հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն իրավահարաբերության նկատմամբ կիրառելի 29.01.1991 թվականի ՀՀ Հողային օրենսգրքի (Ն-0248-Ն) 9-րդ հոդվածի համաձայն՝ հողային բարեփոխումների ընթացքում դեպարտամենտի ֆոնդի հողերը որդես սեփականություն սրամադրվում են որդես սնամերձ՝ հողամասի հասկացման դահի վիճակով հաշվարկված կադաստրային գնահատման արժեքի վճարմամբ, բացառությամբ այն ֆաղափացիների, որոնք հարգելի դատառքներով հողային բարեփոխումների ընթացքում հնարավորություն չեն ունեցել իրացնելու հողի նկատմամբ սեփականության իրավունքը կամ չեն հանդիսացել գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսության անդամ: Այդ ֆաղափացիներին սնամերձ հողամասերը որդես սեփականություն սրամադրվում են անհատայց:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Գյուլխանում Միսակի Գասադարյանը հանդիսացել է գյուղացիական կոլեկտիվ տնտեսության անդամ (ընդունվել է աշխատանքի 3-րդ բրիգադում), և նրան որդես սնամերձ հողամաս հասկացվել է 400 ֆմ հողասարածֆ: Հետևաբար, նշված հողամասի նկատմամբ 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով ծագել է հայցվորի սեփականության իրավունքը:

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 273-րդ հոդվածի համաձայն՝ հայցվորները կարող էին դիմել Դատարան՝ նշված հողասարածֆի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու դատառքով:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից այդ հողասարածֆի վրա գտնվող սան նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչմանը, ադյա բողոքն այս մասով հիմնավոր է հետևյալ դատառքաբանությամբ.

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի (Սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը) համաձայն՝ օրենքի և այլ իրավական ակտերի դատառքների դատառքանմամբ՝ անձի իր համար դատառքաբան կամ ստեղծած նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում այդ անձը:

Նշված հողվածից հետևում է, որ անձը սեփականության իրավունք կարող է ձեռք

բերել օրենքի և այլ իրավական ակտերի դափնանմամբ ստեղծած գույքի նկատմամբ:

Միաժամանակ օրենսդիրը ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է ինքնական կառույց հասկացությունը, համաձայն որի՝ ինքնական կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նդասակի համար չհասկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված դայմանների կամ ֆաղաֆաժինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքեր, շինությունը կամ այլ կառույցը:

Սույն գործի փաստերը հաստատում են այն հանգամանքը, որ հողամասի վրա կառուցված շինությունները օրինական չեն: Հետևաբար, Վճռաբեկ դասարանը գտնում է, որ նշված տունն ինքնական կառուցված համարելու համար Դասարանը բավարար հիմքեր է ունեցել:

Ինքնական կառույցի նկատմամբ սեփականության իրավունք կարող է ձևանաչվել միայն, երբ այն օրենքի և այլ իրավական ակտերի դափնանմամբ դառնում է օրինական:

Նման ընթացակարգ են նախատեսում ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը և դրան համադասախսան ընդունված ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնական կառույցների օրինականացման և սնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումը:

ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դափնանմամբ ելնելով, մասնավորադեպ՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դափնանմամբ համաձայն՝ ինքնական կառույցները ենթակա են ֆանդման: Հետևաբար, ինքնական կառույցի նկատմամբ չի կարող ձևանաչվել անձի սեփականության իրավունքը, ֆանի դեռ այն, ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն, չի ձևանաչվել օրինական:

Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ինքնական կառույցները կարող են ձևանաչվել օրինական՝ համայնքների ղեկավարների Երևանում՝ Երևանի ֆաղաֆադեփի, համայնքի վարչական սարաժներից դուրս՝ մարդդեների կողմից, կառավարության սահմանած կարգով:

Երևանի ֆաղաֆադեփը հայցվորին դասկանող կառույցը օրինական չի ձևանաչել: Հետևաբար, Դասարանի կողմից ինքնական կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ձևանաչման իրավական հիմքը բացակայել է:

2) *Բողոդը երկրորդ հիմնով հիմնավոր է հեկկյալ պասճառաբանությանը.*

ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝ վճռի դասճառաբանական մասում դեփ է նշվեն դասարանի կողմից դարգված գործի հանգամանքները, ադացուցները, որոնց վրա հիմնված են դասարանի հեկկությունները, այս կամ այն ադացուցները մերժելու փաստարկները, ինչդեպ նաև այն օրենքները, ՀՀ միջազգային դայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դասարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դասարանն իր որոշումներում արդեն անդրադարձել է նշված իրավական հարցի գնահատականին (սեպ՝ ՀՀ կառավարությանն առընթեր դեփական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ դասախանասվությամբ ընկերության 21.12.2006 թվականի ֆաղաֆացիական գործ թիվ **3-2504(ՏԳ)** (գումար բռնագանձելու դափնանմամբ):

Վճռաբեկ դատարանը, կարևորելով վճռաբեկ բողոքի սույն հիմնում արված իրավական հարցադրումը, հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին, քանի որ ներհոսարարյալ դատողությունները վերաբերում են նաև Երևան ֆաղափ Ն.Շենգավիթի համայնքի առաջին ասյանի դատարանի կողմից սույն գործով կայացված վճռին:

Յուրաֆանչյուր դեղմում Դատարանը դարձավոր է սալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համադասասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն դեմ է ցույց սալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ դեմ է դասճառաբանվի, թե հասկադես ինչու դեմ է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչդես Դատարանի, այնդես էլ նրա վճռի իրավակիրառ գործառնությունը, արճացում դասական գործունեության և դասական վճռի օրինականությունը: Մինչդես, Դատարանի վճռում նշված չեն և ոչ մի օրենք կամ այլ իրավական ակտ, որոնցով ղեկավարվել է Դատարանը վեճը լուծելիս:

Վճռաբեկ դատարանն անհրաճես է համարում արճանագրել, որ Դատարանի վճիռը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչդես նաև հեղինակավոր:

Այսդիտով, Վճռաբեկ դատարանը գճնում է, որ Քաղաքադեսի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիրեն:

Սույն ֆաղաքադեսական գործի վարույթը Երևան ֆաղափ Ն.Շենգավիթի 11-րդ փողոցի 2-րդ նրբանցի թիվ 29 սան նկասմամբ Մկրճիչ և Գյուլիսանում Գասղարյանների սեփականության իրավունքը ճանաչելու մասով ենթակա է կարճման հեսկյալ դասճառաբանությանը:

ՀՀ ֆաղաքադեսական դասավարության օրենագրի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կեսի համաճայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում ֆննության: Նույն օրենագրի 236-րդ հոդվածի համաճայն՝ դասական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, եթե գործի վարույթը կարճելու հիմքերն ի հայտ են եկել սոսրադաս դատարանում գործի ֆննության ժամանակ:

Հիմք ընդունելով սույն որոճման առաջին հիմքի դասճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գճնում է, որ ինֆնական կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասով վեճը ենթակա չէ դատարանում ֆննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաքադեսական դասավարության օրենագրի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երևանի ֆաղաքադեսարանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիրեն: Բեկանել Հայասանի Հանրադեսության ֆաղաքադեսական գործերով վերաֆնիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 06-2965 վճիռը Երևան ֆաղափ Ն.Շենգավիթի 11-րդ

փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 29 սան նկասմամբ Մկրտիչ և Գյուլխանում Գասդարյանների սեփականության իրավունքը ճանաչելու մասով և այդ մասով ֆաղաֆացիական գործի վարույթը կարճել:

2. Վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրատարակման ղսհից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով
վերաբերող դատարանի վճիռ
Քաղաֆաղիական գործ թիվ 06-3478
Նախագահող դատավոր՝ Լ.Գրիգորյան
Դատավորներ՝ Կ.Հակոբյան
Ա.Խառնայան

Քաղաֆաղիական գործ թիվ 3-101 (ՎԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒԲՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի հունվարի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր անձաբժ գույքի կադաստրի ղեկական կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբերող դատարանի 20.11.2006 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Էդուարդ Գևորգյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անձաբժ գույքի կադաստրի ղեկական կոմիտեի Ձեյթուն սարածֆային ստորաբաժանման (այսուհետ նաև՝ Կադաստր)՝ անձաբժ գույքի նկատմամբ սեֆականության իրավունքի ղեկական գրանցման ժամկետը բաց թողնելու դատաձառը հարգելի համարելու և ղեկական գրանցում կատարելու դատահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախադասմունքներ.

Դիմելով դատարան՝ Էդուարդ Գևորգյանը դատահանջել է Երևանի Ն.Ձեյթուն 2 փողոց, թիվ 19 հասցեում գտնվող 101,4 մ հողատարածքի նկատմամբ սեֆականության իրավունքի ղեկական գրանցման համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու դատաձառը ձանաչել հարգելի և դատարարեցնել ՀՀ կառավարությանն առընթեր անձաբժ գույքի կադաստրի ղեկական կոմիտեի Ձեյթուն սարածֆային ստորաբաժանմանը կատարելու Ն.Ձեյթուն 2 փողոց, թիվ 19 հասցեում գտնվող 101,4 մ հողամասի նկատմամբ ձանաչված սեֆականության իրավունքի ղեկական գրանցում:

Արաբկիր և Քանաֆեռ-Ձեյթուն համայնքների առաջին ասյանի դատարանի 10.08.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ ֆաղաֆսցիական գործերով վերաֆննիչ դասարանի 20.11.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է ՀՀ կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադաստրի ղեկական կոմիտեն:

Վճռաբեկ բողոքին դասասխսան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դահահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը ֆննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներհիիեյալ հիմնավորումներով.

1) ՀՀ ֆաղաֆսցիական գործերով վերաֆննիչ դասարանը սիսալ է մեկնաբանել «Ինֆնական կառուցված շենֆների, շինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենֆի 10-րդ հողվածը և «Վարչարարության հիմունֆների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենֆի սահահանջները և չի կիրառել ՀՀ ֆաղաֆսցիական օրենագրֆի 188-րդ հողվածի 2-րդ կեի, «Գույքի նկասմամբ իրավունֆների սեկական զրանցման մասին» ՀՀ օրենֆի 43-րդ հողվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն և 18.05.2006 թվականի 731-Ն որոշումների սահահանջները, որոնֆ սեկս է կիրառել:

Բողոք բերած անձը նեված ղնդումը դասճառաբանում է հետևյալ փաստարկներով.

«Ինֆնական կառուցված եենֆերի, եինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենֆի 11-րդ հողվածի 2-րդ մասի համաճայն՝ այդ օրենֆի գործողության ժամկետը երկու սարի է, այն ավարսվել է 22.02.2005 թվականին: ՀՀ կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադաստրի ղեկական կոմիտեի 22.02.2005 թվականի թիվ 2 դաեոնական դարգաբանման համաճայն՝ ինֆնական կառուցված եենֆերի, եինությունների և ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի վերաբերյալ մինչև 22.02.2005 թվականի աեխասանֆային օրվա ավարսը (ժամը 18:00) սրված դիմումները ղեկս է ֆննարկվելին ու դրանց վերաբերյալ որոեումները ղեկս է կայացվելին 22.02.2005 թվականից հետո «Ինֆնական կառուցված եենֆերի, եինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենֆով նախասեակած կարգով, դայմաններում և ժամկետներում: Ինֆնական կառուցված եենֆերի, եինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի վերաբերյալ մինչև 22.02.2005 թվականի ժամը 18:00-ին սրված դիմումները ֆննարկող մարմինները (սվյալ դեղոնմ Երևանի ֆաղաֆսցիական) իրավունֆ ունեն «Վարչարարության հիմունֆների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենֆով նախասեակած կարգով 30 օր ժամկետով երկարացնել դիմումների ֆննարկման ընթացֆը, այսինֆն՝ մինչև 22.04.2005 թվականը: 22.04.2005 թվականից հետո համադասասխսան մարմինների կողմից ընդունված որոեումներն ու դրանց հիման վրա կազմված փաստաթղթերը իրավական ուժ չունեն և դրանցից ծագող իրավունֆները ենթակա չեն ղեկական զրանցման: Մինչև 22.02.2005 թվականը ներադյալ ընդունված և մինչև 22.04.2005 թվականը կայացված որոեումների հիման վրա «Ինֆնական կառուցված եենֆերի, եինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենֆի 10-րդ հողվածի դահահանջների համաճայն՝ ինֆնական կառուցված եենֆերի, եինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի նկասմամբ իրավունֆների ղեկական զրանցման վերջնաժամկետ եր սահմանվել 22.08.2005 թվականը, իսկ ՀՀ վարչաղեի 25.11.2005 թվականի ««Ինֆնական կառուցված եենֆերի, եինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենֆի գործողության ավարսից հետո ծագած խնդիրները

կանոնակարգելու մասին» թիվ 936-Ա որոշմամբ այդ ժամկետը երկարաձգվել է մինչև 01.03.2006 թվականը:

«Ինֆնական կառուցված շենքերի, շինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված թայմաններին բավարարող շենքերի, շինությունների նկատմամբ օրենքի գործողության ժամկետում իրավունքները չգրանցվելու դեպքում դրանց հետագա կարգավիճակը որոշվում է ՀՀ ֆաղաֆագիական օրենսգրքով սահմանված նորմերի կիրառմամբ, իսկ ՀՀ ֆաղաֆագիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ղեկավարող սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինֆնական կառույցի նկատմամբ ճանաչվում է ղեկավարող սեփականության իրավունքը անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Երևանի ֆաղաֆագի 05.09.2005 թվականի թիվ 1884-Ա որոշման հիման վրա իրավունքների ղեկավարող գրանցում կատարելը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի ղեկավար կոմիտեի Չեյթուն սարածֆային ստորաբաժանման կողմից մերժվել է «Ինֆնական կառուցված շենքերի, շինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի գործողության ժամկետը ավարտված լինելու, ինչդեպ նաև օրենքով սահմանված իրավունքների ղեկավարող գրանցման ժամկետը ավարտված լինելու դատաճառով, քանի որ Երևանի ֆաղաֆագի թիվ 2463-Ա որոշումը կայացվել է 28.12.2004 թվականին, ըստ որի՝ մերժվել է հայցվորի կողմից ինֆնական զբաղեցված հողամասը օրինական ճանաչելու նրա դիմումը, այսինքն՝ նշված որոշումը Երևանի ֆաղաֆագի կողմից կայացվել է «Ինֆնական կառուցված շենքերի, շինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի գործողության ժամկետում: Այնուհետև Երևանի ֆաղաֆագի մեկ այլ՝ 05.09.2005 թվականի թիվ 1884-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել թիվ 2463-Ա որոշման համադասասխան կետը, և այս անգամ 101,4 քմ հողամասի նկատմամբ ճանաչվել է սեփականության իրավունքը օտարման դայմանով: Այսինքն՝ Երևանի ֆաղաֆագի կողմից կայացվել է որոշում նշված օրենքի գործողության ժամկետի ավարտից հետո, այն է՝ 05.09.2005 թվականին, այն դեպքում, երբ Երևանի ֆաղաֆագի կողմից օրինականացման մասին որոշում կարող էր կայացվել մինչև 22.04.2005 թվականը, որից ծագող իրավունքները ենթակա են ղեկավարող գրանցման մինչև 01.03.2006 թվականը՝ ՀՀ վարչապետի 25.11.2005 թվականի թիվ 936-Ա որոշման համաձայն:

Ուստի, Երևանի ֆաղաֆագի նշված որոշումների հիման վրա իրավունքի ղեկավարող գրանցում կատարելը կհակասեր ՀՀ օրենսդրության դատախազներին, հետևաբար Կադաստրի կողմից այն մերժվել է «Գույքի նկատմամբ իրավունքների ղեկավարող գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «ա» ենթակետին համադասասխան, ըստ որի՝ իրավունքների ղեկավարող գրանցում կատարելը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերով խախտվում են օրենսդրության դատախազները:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը դատախազել է բեկանել ՀՀ ֆաղաֆագիական գործերով վերաքննիչ դասարանի 20.11.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի ֆաղաֆաղեցի 28.12.2004 թվականի թիվ 2463-Ս որոշմամբ հայցվորի ամուսին Մարի Գևորգյանին մերժվել է շինության նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը՝ համասեփականաժիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով գրավոր համաձայնություն ներկայացրած չլինելու դատառով (գ.թ.5):

2) «Երևան ֆաղաֆաղում ինֆնական կառուցված շենքերի, շինությունների և ինֆնական զբաղեցրած հողամասերի կարգավիճակի վերաբերյալ Երևանի ֆաղաֆաղեցի համադասասխան որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ֆաղաֆաղեցի 05.09.2005 թվականի թիվ 1884-Ս որոշմամբ (43-րդ կետ) Երևանի ֆաղաֆաղեցի 28.12.2004 թվականի թիվ 2463-Ս որոշման 2-րդ հավելվածի 63-րդ սողի 10-րդ սյունակը ուժը կորցրած է համարվել, և ճանաչվել է հողասարածի նկատմամբ Մարի Գևորգյանի սեփականության իրավունքը՝ հողի օտարման դայմանով (գ.թ.6-8):

3) Մարի Գևորգյանը մահացել է 21.09.2005 թվականին:

4) Հանգուցյալ Մարի Գևորգյանի գույքի՝ Երևանի Ն.Չեյթուն 2-րդ փողոցի թիվ 19 հասցեում գտնվող անճարժ գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունել է Էդուարդ Գևորգյանը (գ.թ.10):

4. Վճռաբեկ դատարանի դատառարանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառարանությամբ.

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունը ինֆնիչխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական դեմոկրատիա է:

Իրավական դեմոկրատիայում դեմոկրատիայի մարմինների գործունեության հիմնարար սկզբունքներ են հանդիսանում ի թիվս այլ սկզբունքների.

- դեմոկրատիայի սահմանափակված լինելը մարդու և ֆաղաֆաղու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որդես անմիջականորեն գործող իրավունք.

- դեմոկրատիայի և ճեղական ինֆնականապարման մարմինների ու դատճոնատար անձանց իրավատրությունը կատարելու միայն այնդիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով.

- անձանց ազատությունը այնդիսի դատրականություններից, որոնք սահմանված չեն օրենքով:

Մույն գործով դեռես 2004 թվականին Մարի Գևորգյանը դիմել է Երևան ֆաղաֆի Ն.Չեյթուն 2-րդ փողոց, 19 հասցեում գտնվող ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող 1750 մ² հողամասին կից ինֆնական զբաղեցված 101,4 մ² մակերեսով հողասարածի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման խնդրանքով, համասեփականաժիրոջ համաձայնության բացակայության դատառով Երևանի ֆաղաֆաղեցի 28.12.2004 թվականի թիվ 2463-Ս որոշմամբ այն մերժվել է: Մերժման հիմքերի վերանալուց հետո նույն խնդրանքով Մարի Գևորգյանը դիմել է Երևանի ֆաղաֆաղեցարան, և Երևանի ֆաղաֆաղեցի՝ «Երևան ֆաղաֆաղում ինֆնական կառուցված շենքերի, շինությունների և ինֆնական զբաղեցրած հողամասերի կարգավիճակի վերաբերյալ Երևանի ֆաղաֆաղեցի համադասասխան որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.09.2005 թվականի թիվ 1884-Ս որոշմամբ (կետ 43) ուժը կորցրած է համարվել Երևանի ֆաղաֆաղեցի 28.12.2004 թվականի թիվ 2463-Ս որոշման 2-րդ հավելվածի 63-րդ սողի 10-րդ սյունակը, և ճանաչվել է հողասարածի նկատմամբ Մարի Գևորգյանի սեփականության

իրավունքը՝ հողի օսարման ղայմանով:

Այսինքն՝ Երևանի ֆաղափաղի 05.09.2005 թվականի որոշումը ոչ թե բավարարվել է հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին Մարի Գևորգյանի նոր հայտը, այլ նշված որոշումը վերանայվել է համասեփականացման համաձայնության բացակայության դատաճանաչման սեփականության իրավունքը չճանաչելու մասին ֆաղափաղի 28.12.2004 թվականի սկզբնական որոշումը: Փաստորեն, սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ Մարի Գևորգյանի 2004 թվականին ներկայացրած դիմումի վերջնական լուծումը սրվել է միայն 05.09.2005 թվականին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և դատականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Տվյալ դեպքում Երևանի ֆաղափաղի 05.09.2005 թվականի թիվ 1884-Ս որոշումը վարչական ակտ է, որով ուժը կորցրած է համարվել Երևանի ֆաղափաղի 28.12.2004 թվականի թիվ 2463-Ս որոշման 2-րդ հավելվածի 63-րդ սողի 10-րդ սյունակը, և ճանաչվել է հողատարածքի նկատմամբ Մարի Գևորգյանի սեփականության իրավունքը՝ հողի օսարման ղայմանով: Այդ վարչական ակտում առկա չեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական ակտն առաջին լինելու հիմքերից որևէ մեկը, հետևաբար այն առաջին չէ, ինչից հետևում է, որ կադաստրի այն ղոնդումը, որ ընդունված որոշումը չունի իրավական ուժ և դրանից ծագող իրավունքները ենթակա չեն դատական գրանցման անհիմն է:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ով դատարար է ելնել այն կանխավարկածից, որ Երևանի ֆաղափաղի որոշումն ընդունվել է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված՝ իր լիազորությունների շրջանակում: Դա հետևանքով դեմ է եզրակացնել, որ Երևանի ֆաղափաղի որոշումը իրավաչափ է և որևէ անձ, մասնավորապես, դատական մարմինը, չի կարող կասկածի սակ դնել այդ ակտի իրավաչափությունը:

Նշված դատաճանաչման ղայմանը հիմնավոր չեն դատարարի կողմից «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների, ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դատաճանաչման սխալ մեկնաբանման վերաբերյալ բողոքի փաստարկները Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում:

21.09.2005 թվականին Մարի Գևորգյանի մահվան դատաճանաչման վերջինիս՝ Երևանի ֆաղափաղի 05.09.2005 թվականի որոշումը ճանաչված սեփականության իրավունքը դատական գրանցման չի ենթարկվել: Մարի Գևորգյանի մահից հետո Էդուարդ Գևորգյանը ՀՀ ֆաղափաղի օրենսգրքի 1216-րդ, 1225-րդ և 1227-րդ հոդվածների դատաճանաչման համադատարարական ընդունել է վերջինիս ժառանգությունը: ՀՀ ֆաղափաղի օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին դատարարի կողմից գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և դատարարությունները: Նշված հոդվածի հիմքով, Էդուարդ Գևորգյանը ընդունել է նաև վիճարկվող հողատարածքի նկատմամբ Մարի Գևորգյանի սեփականության իրավունքը (գույքային իրավունք):

Փաստորեն, Մարի Պևրգյանի մահից հետո նրա սեփականության իրավունքը՝ որդես գույքային իրավունք, Էդուարդ Պևրգյանին է անցել 28.03.2006 թվականին, որից հետո միայն հայցվորը կարող էր դիմել սեփականության իրավունքի ղեկավար գրանցման համար, ինչը և արվել է վերջինիս կողմից: Հեռաբար, սույն վեճով կիրառման ենթակա չեն «Ինֆնական կառուցված շենքերի, շինությունների և ինֆնական զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարությանն առընթեր անժամ գույքի կադաստրի ղեկավար կոմիտեի նախագահի 22.02.2005 թվականի թիվ 2 դաշնական դարգաբանմամբ և ՀՀ վարչադեպարտի «Ինֆնական կառուցված շենքերի, շինությունների, ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի գործողության ավարտից հետո ծագած խնդիրները կանոնակարգելու մասին» 25.11.2005 թվականի թիվ 936-Ա որոշմամբ սահմանված ժամկետային սահմանափակումները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կադաստրի կողմից 21.06.2006 թվականի թիվ 1139 գրությամբ Մարի Պևրգյանի իրավահաջորդ Էդուարդ Պևրգյանի հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ղեկավար գրանցման մերժումը՝ «Ինֆնական կառուցված շենքերի, շինությունների և ինֆնական զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի, Երևանի քաղաքապետի որոշումների գործողությունների և իրավունքների ղեկավար գրանցման դիմումների ընդունման ժամկետները ավարտված լինելու դաշնառաքանությամբ, իրավաչափ չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և դատարանությունները ծագում են օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, մասնավորապես՝ ղեկավար և շեղական ինֆնականավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որդես քաղաքացիական իրավունքների և դատարանությունների ծագման հիմք:

Ինչպես վերը նշվեց, «Ինֆնական կառուցված շենքերի, շինությունների և ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա (ղեկավար մարմնի ակտով) ծագել է Մարի Պևրգյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Ն.Չեյթուն 2 փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 101,4 քմ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ նրա մահվանից հետո նշված իրավունքը որդես ժառանգություն անցել է Էդուարդ Պևրգյանին: Հեռաբար, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով՝ Հայաստանի Հանրապետությունը սահմանափակված է Էդուարդ Պևրգյանի վերը նշված իրավունքներով:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային դաշնամարտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են դաշնամարտի նորմերը: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշնամարտության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

Սույն գործով «Գույքի նկատմամբ իրավունքների ղեկավար գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի սխալ կիրառման արդյունքում Կադաստրը խախտել է Էդուարդ Պևրգյանի՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշնամարտության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածով երաշխավորված իրավունքը:

«Գույքի նկատմամբ իրավունքների ղեկավար գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ

հողվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է այլ Պատճառներով գույքի նկատմամբ իրավունքների ղեկավար գրանցման մերժումը, քան նրանց, որոնք սահմանված են այդ օրենքով, այդ թվում՝ աննորմալապահարմարության Պատճառաբանությամբ: Նույն հողվածի 3-րդ մասի համաձայն՝ մերժումը ղեկավար է լինի օրենքի կամ նորմատիվային ակտի խախտման Պատճառի նշաններով: Տվյալ դեպքում օրենսդիրն ի նկատմամբ ունի դիմողի կողմից օրենքի կամ նորմատիվային ակտի խախտումը, և որևէ ձևով այն չի կարող այլ կերպ մեկնաբանվել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Էդուարդ Վարդյանի կողմից որևէ օրենք կամ նորմատիվ ակտ չի խախտվել:

Նշված Պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում դատարանի կողմից «Գույքի նկատմամբ իրավունքների ղեկավար գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը չլիքառելու մասին բողոքի փաստաթուղթը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ֆաղափարակալական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնները տվյալ իրավապահարմարության նկատմամբ կիրառելի չեն, քանի որ ՀՀ ֆաղափարակալական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնները վերաբերում են ինքնակամ կառույցին և դրա իրավական կարգավիճակին, իսկ սույն գործով վեճի առարկան ոչ թե ինքնակամ կառույցն է, այլ ինքնակամ զբաղեցված հողամասը: ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն և թիվ 731-Ն որոշումները վերաբերում են ղեկավար կամ համայնային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ ղեկավար կամ համայնային սեփականության իրավունքի ղեկավար գրանցմանը, ֆաղափարակալական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով ղեկավարող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների, բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերում, այդ թվում՝ շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքում ֆաղափարակալական կամ իրավաբանական անձանց կողմից ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը, ինչպես նաև ղեկավար կամ համայնային սեփականության իրավունքով ղեկավարող հողամասերում այն կառույցների օրինականացմանը և սնօրինմանը, որոնց նկատմամբ գրանցված է ղեկավար կամ համայնային սեփականության իրավունքը:

Մինչդեռ սույն գործով վիճելի հողամասի նկատմամբ ձևանշվել է Մարի Վարդյանի սեփականության իրավունքը: Հետևաբար, նշված Պատճառաբանությամբ դատարանի կողմից ՀՀ ֆաղափարակալական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն և թիվ 731-Ն որոշումները չլիքառելու մասին բողոքի փաստաթուղթերը Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափարակալական դատարանի օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ կառավարությանն առընթեր անհաճ գույքի կադաստրի ղեկավար կամիստի վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ ֆաղափարակալական գործերով վերաբնիչ դատարանի 20.11.2006 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման ղեկից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
Տնտեսական դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ ՏՎ-205
Նախագահող դատավոր՝ Տ.Նազարյան
Դատավորներ՝ Ե.Սողոմոնյան
Ա. Սարգսյան

Քաղաքացիական գործ թիվ 3-2388 (ՏԳ)
2006

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒԴՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007թ. հունվարի 26-ին

դռնբաց դատական նիստում, ֆիննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դեղատոմսի ծառայության որոշ հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՏՎ-205 վճռի դեմ՝ ըստ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն» ԲԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումի ընդդեմ ծառայության 2006 թվականի հունվարի 27-ի թիվ 1002412 ստուգման ակտի մասնակի անվավեր ճանաչելու դիմումի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1.Գործի դատարանական նախադասմունքներ.

Ընկերությունը 2006 թվականի հունիսի 23-ին դիմում է ներկայացրել ընդդեմ Ծառայության խնդրելով մասնակի անվավեր ճանաչել վերջինիս 27.01.2006 թվականի կազմած թիվ 1002412 ստուգման ակտը:

ՀՀ տնտեսական դատարանը 2006 թվականի մայիսի 16-ի թիվ 1427/06 վճռով Ընկերության դիմումն ամբողջությամբ բավարարել է:

Ծառայությունը 2006 թվականի հունիսի 6-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ տնտեսական դատարանի 2006 թվականի մայիսի 16-ի թիվ 1427/06 վճռի դեմ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարանի 2006 թվականի հուլիսի 24-ի թիվ 3-1468 (ՏԳ) որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակի և բեկանվել է ՀՀ տնտեսական դատարանի 2006 թվականի մայիսի 16-ի թիվ 1427/06 վճռի՝ ակտի 4-րդ և 14-րդ

կետերն անվավեր ճանաչելու մասը, և գործն այդ մասով ուղարկվել է նոր ֆինուրային: Վճռի մնացած մասը թողնվել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքն այդ մասով՝ առանց բավարարման:

ՀՀ սննտապահպանության նախարարի վերահսկողական կանոններով ֆինուրային փառագեղանակապատճարման գործն ըստ դիմումի «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն» ԲԲ ընկերության ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեկավարական ծառայության խոստում հարկ վճարողների հարկային ռեզիստանսի 27.01.2006 թվականի թիվ 1002421 ստուգման ակտը մասնակի՝ ակտի 4-րդ և 14-րդ կետերի մասով, անվավեր ճանաչելու դառնալի մասին՝ իր 2006 թվականի հոկտեմբերի 24-ի վճռով մասամբ բավարարել է Ընկերության դիմումը և անվավեր ճանաչել 27.01.2006 թվականի կազմած թիվ 1002412 ստուգման ակտի վիճարկվող 14-րդ կետը:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեկավարական ծառայության խոստում հարկ վճարողների հարկային ռեզիստանսը:

Վճռաբեկ բողոքին տրամադրվում է չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկերը և դառնալիքը:

Սույն վճռաբեկ բողոքը ֆինուրային է հետևյալ հիմքերի սահմաններում ներհանրապես հիմնավորումներով:

Ըստ բողոքագրի ակտի՝ դատարանը խախտել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև 26-րդ հոդվածի պահանջները:

Վճռի կայացման ժամանակ դատարանը հիմնվել է այն հանգամանքի վրա, որ ստուգող մասնագետների կողմից վիճարկվող ակտը կազմելիս խախտվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետը, համաձայն որի՝ սույն հոդվածով նախատեսված աղյուսակի գործունեության իրականացման դեպքում իրացման Երջանառությունը (համախառն եկամուտը) և ակտիվների արժեքները որոշվում են հարկային մարմինների կողմից՝ կիրառելով սույն օրենքի 22-րդ հոդվածի դրույթները: Տվյալ դեպքում ստուգող մասնագետները «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն» ԲԲ ընկերության կողմից աղյուսակի գործունեությանը զբաղվելու արդյունքում առաջացած իրացման Երջանառությունը հաշվարկել են՝ չկիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթները: Իսկ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված է այդ հոդվածի կիրառման անհրաժեշտ նախադրյալներ, որոնք են՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվարկային հաշվառման (հարկային օրենսդրությանը կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կողմից խախտումներով, կամ ակնհայտ կեղծ սվյալներ է մտցնում հարկային ռեզիստանսը ներկայացված հաշվարկայիններում, հայտարարագրում, հաշվարկներում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությանը սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային տարաբաշխությունը:

Բողոքագրի մղումամբ կոնկրետ դեպքում առկա չեն նշված նախադրյալներին և ոչ մեկը: Հետևաբար, դատարանի այն եզրահանգումը, որ ստուգող մասնագետները «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն» ԲԲ ընկերության կողմից աղյուսակի գործունեության արդյունքում առաջացած իրացման Երջանառությունը (համախառն եկամուտը) ղեկավարել է հաշվարկելին ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգով, կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթները՝ հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոքը բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ սննտապահպանության

դասարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՏՎ-205 վճիռը՝ ակտի 14-րդ կետն անվավեր ճանաչելու մասով:

3. Վճարել բողոքի ֆինոթյան համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի ֆինոթյան համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 2005 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2005 թվականի հունվարի 27-ը Ընկերության մոտ Ծառայության դեմ 08.11.2005 թվականի թիվ 1002412 հանձնարարագրի հիման վրա իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին դասակարգումների կատարման ճշտության ստուգում, ինչի արդյունքում 27.01.2006 թվականին ծառայության կողմից կազմվել է թիվ 1002412 ստուգման ակտը, որի 4-րդ և 14-րդ կետերով դասաստիսանողին առաջադրվել է համադասաստիսանաբար 3.501.500 ՀՀ դրամ և 4.487.100 ՀՀ դրամի չափով լրացուցիչ դարձվորություններ:

2) Վիճարկվող ակտի 14-րդ կետով արձանագրվել է, որ «ընկերությունը խախտելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 18-րդ կետի դասակարգումները, զբաղվել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ (հացի արտադրություն), չունենալով համադասաստիսան լիցենզիա նշանակում գործունեությամբ զբաղվելու համար, որի իրացման երջանառությունը կազմել է 8.974.300 ՀՀ դրամ» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով, սուգանքի սեփով, առաջադրվել է հարկային դարձվորություն, գումարով 4.487.100 ՀՀ դրամ:

3) ՀՀ սնտեսական դասարանն իր 2006 թվականի հոկտեմբերի 24-ի վճռով հաստատված է համարել այն փաստը, որ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն» ԲԲ ընկերությունն առանց լիցենզիայի զբաղվել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ, մասնավորապես՝ զբաղվել է սննդամթերքի (հացի) արտադրությամբ, ինչն էլ հաստատվել է նման լիցենզիայի բացակայությամբ և կողմերի բացատրություններով:

4. Վճարել դասարանի դասճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարել բողոքները նշանակում հիմքերի սահմաններում՝ Վճարել դասարանը գտնում է, որ բողոքը *պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.*

Տնտեսական դասարանն իր 2006 թվականի հոկտեմբերի 24-ի վճռով հաստատված է համարել այն փաստը, որ ընկերությունը, չունենալով համադասաստիսան (սննդամթերքի (հացի) արտադրության) լիցենզիա, զբաղվել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ, այն է՝ զբաղվել է հացի արտադրությամբ: Ծառայությունն իր 27.01.2006 թվականին կազմած թիվ 1002412 ստուգման ակտի 14-րդ կետով արձանագրելով այս խախտումը, կիրառել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը, համաձայն որի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված կամ առանց լիցենզիայի կամ սլյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ամօրինի գործունեություն)՝ գանձվում է սուգանք այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման երջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով:

Տնտեսական դասարանը գտնել է, որ սլյալ դարձվորություն Ընկերության իրացման

Երջանառության հաշվարկումը Ծառայության կողմից նդասակ է ունեցել կիրառելու «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթները, մինչդեռ, նույն հոդվածի 5-րդ մասն իմդերաշիվ կարգով ամրագրում է, որ սույն հոդվածով նախատեսված ադորինի գործունեության իրականացման դեդդում իրացման Երջանառությունը (համախառն եկամուտը) և ակշիվների արժեքները որոշվում են հարկային մարմինների կողմից՝ կիրառելով սույն օրենքի 22-րդ հոդվածի դրույթները: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասին համադասասխան, եթե հարկ վճարողն ակնհայտ կեղծ սվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններում, հայտարարագրերում, հաշվարկներում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային դարավորությունը, ադա հարկվող օբյեկտները և հարկային դարավորությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Նման դարագայում հարկային մարմիններն իրենց լիազորություններն իրականացնելիս դարավոր էին դեկավարվել ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ, որով սահմանվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառման ընթացակարգը:

Նման դարագայում տեստական դարարանը սխալ է մեկնաբանել օրենքը, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը արդեն իսկ նախատեսում է դասասխանատվություն առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար: Ինչ վերաբերում է նույն հոդվածի 5-րդ կետին, ադա այն նախատեսում է իրացման Երջանառության հաշվարկումը նույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետը ընդամենը սվյալների անբավարարության դեդդում հնարավորություն է ընձեռում հարկային տեսչությանը իրացման Երջանառությունը հաշվարկել ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Ստուգումն իրականացնող մարմինն ինքն է որոշում, թե արդյոք ներկայացված փաստաթղթերը բավարար են իրացման Երջանառությունը հաշվարկելու համար, թե ոչ: Իսկ սվյալ գործով ստուգումն իրականացնող մարմինը գտել է, որ ներկայացված փաստաթղթերը բավարար են իրացման Երջանառությունը հաշվարկելու համար և կարիք չկա դա հաշվարկել ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով: Բացի դա, ինչդեռ երևում է գործի նյութերից, ընկերությունը ստուգումն իրականացնող մարմնին ներկայացրել է ստուգման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Նման դայմաններում հիմնավոր է վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ սվյալ դարագայում բացակայում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նշված նախադայմաններից և ոչ մեկը, հետևաբար, ստուգող մասնագետները Ընկերության կողմից ադորինի գործունեության արդյունքում առաջացած իրացման Երջանառությունը չդետեստել հաշվարկելին ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգով:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դարարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դարավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված, ստորադաս դարարանի ակտը փոփոխելու, Վճռաբեկ դարարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշտանության մասին» Եվրոդական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դարարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը

հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դասաֆնության իրավունքի սարր, հեճևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վճանգ են դարունակում նեված իրավունքի խախտման ճեճանկյունից: Տվյալ դեղում Վճոաբեկ դասարանի կողմից սոռադաս դասարանի դասական ակսը փոփոխելը բխում է արդարադասության արդյունավեճության շահերից: Այսղիսով, Վճոաբեկ դասարանը գճնում է, որ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դեճական ծառայության որոճ հարկ վճարողների հարկային ճեճության վճոաբեկ բողոքը դեճ է բավարարել, իսկ ՀՀ ճնեճական դասարանի 24.10.2006 թվականի վճիռը փոփոխել:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ ֆաղաֆաղիական դասավարության օրենսգրքի 236-239-դ հոդվածներով՝ Վճոաբեկ դասարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դեճական ծառայության որոճ հարկ վճարողների հարկային ճեճության վճոաբեկ բողոքը բավարարել:

2. Բեկանել ՀՀ ճնեճական դասարանի 24.10.2006 թվականի վճիռը 27.01.2006 թվականի թիվ 1002412 սոռոգման ակսի 14-դ կեճը անվավեր ճանաչելու մասով և այդ մասով վճիռը փոփոխել:

3. Դիմումը 27.01.2006 թվականի թիվ 1002412 սոռոգման ակսի 14-դ կեճը անվավեր ճանաչելու մասով մերժել:

4. Մոյն որոճումն օրինական ուժի մեղ է մճնում հրադարակման դլահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սոռազրոթյուն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սոռազրոթյուններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
ֆաղափացիական գործերով
վերաքննիչ դատարանի վճիռ
Քաղափացիական գործ թիվ 06-1885
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան
Դատավորներ՝ Տ.Սահակյան
Ա.Թումանյան

Քաղափացիական գործ թիվ 3-2431(ՎԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղափացիական դալաաը (այսուհես՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությաաը Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությաաը դատավորներ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐՁՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Մ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի հունվարի 26-ին

դնբաց դատական նիստում, քննելով Արարատ Մովսիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհես նաև՝ Դատարան) 31.07.2006 թվականի թիվ 06-1885 ֆաղափացիական գործով կայացրած վճռի դեմ՝ ըստ Շուտանիկ Գրիգորյանի (այսուհես նաև՝ հայցվոր) հայցի ընդդեմ Արարատ Մովսիսյանի (այսուհես նաև՝ դատասախանող)՝ գումարի բռնագանձման դախանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախադասմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը դախանջել է Արարատ Մովսիսյանից բռնագանձել 480.000 ՀՀ դրամ՝ որդես իր դեմ ներկայացրած անհիմն հայցի հեսանհով կրած վնաս:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին աալանի դատարանի 03.04.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 31.07.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Մույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Արարատ Մովսիսյանը:

Վճռաբեկ բողոքին դատասախան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դախանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հեսկյալ հիմքի սահմաններում ներհոիեյալ հիմնավորումներով.

Դասարանը չի կիրառել ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, ինչի հետևանքով խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Արարտ Մովսիսյանը, դիմելով դատարան, իրականացրել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաժադանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաժխավորված դատական դաժադանության իր իրավունքը: Հետևաբար, Շուբանիկ Գրիգորյանի կատարած ծախսերը՝ կադված սլյալ գործով իրավաբանական օգնություն ստանալու հետ, չեն կարող դիտվել որդես վնաս:

Բացի այդ, իրավունքների դաժադանության հայց հարուցելը հանդիսանում է օրինաչափ գործողություն, իսկ ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրինաչափ գործողություններով դատաձառված վնասը հասուցվում է օրենքով նախատեսված դեղմերում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դախանջել է բեկանել ՀՀ ֆաղափացիական գործերով վերաբնիչ դատարանի 31.07.2006 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հայցվորը և դատաստանողը հանդիսանում են «Թալին-1» սահմանափակ դատաստանափությանը ընկերության մասնակիցներ:

2) ՀՀ սնեստական դատարանի 27.10.2005 թվականի վճռով մերժվել է Արարտ Մովսիսյանի հայցն ընդդեմ Շուբանիկ Գրիգորյանի՝ «Թալին-1» սահմանափակ դատաստանափությանը ընկերության 30.12.2002 թվականի արտաերթ ժողովի որոշումը անվավեր ճանաչելու դախանջի մասին սլյալ դախանջով դատարան դիմելու համար օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու դատաձառաբանությանը:

3) Վերը նշված գործով դատաքննությանը մասնակցելու համար Շուբանիկ Գրիգորյանը «Դեֆենդր» ՍՊԸ-ի հետ 20.08.2005 թվականին կնքել է իրավաբանական ծառայությունների մատուցման դայմանագիր, որով ՍՊԸ-ն դատարարվել է վերոհիշյալ ֆաղափացիական գործով ներկայացնել Շուբանիկ Գրիգորյանի ատերը որդես վերջինիս ներկայացուցիչ:

5) Նշված դայմանագրի 4.1-րդ կետի համաձայն՝ մատուցված ծառայության դիմաց Պատվիրատուն կատարողին վճարում է 480.000 ՀՀ դրամ:

4. Վճռաբեկ դատարանի դատաձառաբանությունները և եզրահանգումները.

Նշված հիմքի սահմաններում քննելով վճռաբեկ բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությանը.

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ դետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչդես նաև չսացված եկամուտները, որոնք այդ անձը կատարած ֆաղափացիական արջանառության սովորական դայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Միակ բացառությունը օրենսդիրը կասարել է ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատախազության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հասուցելու դատարանական գործընթացում: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հասուցման հիմք է հանդիսանում դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն դատաստանողն իրավունք ունի վնասների հասուցման դատարանով դիմելու դատարան:

Այսպիսով, ՎՃՌԱԲԵԿ դատարանը գտնում է, որ օրենսգրքի 129-րդ հոդվածի հիմքով դատարանի կողմից ակնհայտ անհիմն գնահատված հայց ներկայացրած անձի դեմ վնասների հասուցման դատարանով դատարան դիմելու դեպքից զրկելու և այլ դեպքում դատաստանողի մոտ հայցվորի նկատմամբ դատարան դիմելու հետևանքով իրեն դատառնված վնասները հասուցելու դատարանի իրավունք չի առաջանում:

Քաղաքացիական իրավունքում վնաս դատառնելու հետևանքով ծագած դատարանական գործընթացումը դադարեցված է վնասի առաջացման և վնաս դատառնած անձի գործողությունների դատառնախեղություններից կազմով, մեղքի առկայությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Երկրագործական անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ դադարեցված չէ իր իրավունքների, ազատությունների և օրինական արդարության դատարանի կողմից: Նշված իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և ազատությունների դատարանական մասին» եվրոպական կոնվենցիայով:

Անձի՝ իրավունքների և ազատությունների (թեկուզև ենթադրյալ) դատարանական դատառնության իրավունքի իրականացումը ինքնին չի կարող դիմելու որդես ոչ իրավաչափ գործողություն: Անձի՝ դատարանական դատառնության իրավունքի իրականացումը առանց իրավական հիմնավորման չի կարող դիմելու որդես այլ անձին (մասնավորապես, դատավարության մյուս կողմին) վնաս դատառնելու դրսևորում:

Արարտ Մովսիսյանը, դիմելով դատարան, իրականացրել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դատարանական մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատարանական դատառնության իր իրավունքը: Հետևաբար, Շուրաբյանի Գրիգորյանի կասարած ծախսերը, կադված սվյալ գործով իրավաբանական օգնություն ստանալու հետ, չեն կարող դիմելու որդես վնասներ:

Միակ բացառությունը օրենսդիրը կասարել է ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատախազության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հասուցելու դատարանական գործընթացում: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հասուցման հիմք է հանդիսանում դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն դատաստանողն իրավունք ունի վնասների հասուցման դատարանով դիմելու դատարան:

Այսպիսով, ՎՃՌԱԲԵԿ դատարանը գտնում է, որ օրենսգրքի 129-րդ հոդվածի հիմքով դատարանի կողմից ակնհայտ անհիմն գնահատված հայց ներկայացրած անձի դեմ վնասների հասուցման դատարանով դատարան դիմելու դեպքից զրկելու և այլ դեպքում դատաստանողի մոտ հայցվորի նկատմամբ դատարան դիմելու հետևանքով իրեն դատառնված վնասները հասուցելու դատարանի իրավունք չի առաջանում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ դասասխանողը, օգտվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաժախանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դասական դաժախանության իրավունքից, չի չարաճախել այն, չի օգտվել դրանից անբարեխղճորեն, հետևաբար Վճռաբեկ դասարանը գտնում է, որ վերջինիս գործողություններում բացակայում են ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ դասասխանողին վնաս դասճանաչելու կամ այլ կերպ վերջինիս իրավունքները խախտելու հասկանիչները:

Վճռաբեկ դասարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ ֆաղափացիական դասավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դասարանի դասական ակտը փոփոխելու վճռաբեկ դասարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաժախանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ով ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն ֆաղափացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դասարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դասաքննության իրավունքի սարք, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վնասն են դարձնակալում նշված իրավունքի խախտման ճեղքանկությունից: Այս դեպքում Վճռաբեկ դասարանի կողմից ստորադաս դասարանի դասական ակտը փոփոխելը բխում է արդարադասության արդյունավետության շահերից:

Այսպիսով, Վճռաբեկ դասարանը սույն բողոքի հիմքը հիմնավոր է համարում և դրա առկայությունը ՀՀ ֆաղափացիական դասավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դասարանի 31.07.2006 թվականի վճիռը բեկանելու և փոփոխելու բավարար հիմք է դիտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափացիական դասավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Արարատ Մովսիսյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դասարանի 31.07.2006 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Շուշանիկ Գրիգորյանի հայցն ընդդեմ Արարատ Մովսիսյանի մերժել:

2.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման պահից և ենթակա չէ բողոքաբերման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով
վերաքննիչ դատարանի վճիռ
ֆաղաֆաղիական գործ թիվ 06-1761/2006թ.
Նախագահող դատավոր՝ Կ.ՀԱԿՈԲՅԱՆ
Դատավորներ՝ Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆ

Քաղաֆաղիական գործ թիվ 3-28(ՎԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալարը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐԶՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2007 թվականի հունվարի 26-ին

1) ՀՀ *սնտեսական դասարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 198-րդ և 201-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 31.10.1996 թվականի թիվ 351 որոշումը, որով սխալ է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված դեպքում դասառաքանել է հետևյալ փաստարկներով.

Եթե համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված բաժնետոմսերի նկատմամբ հայցվորի ամուսինը համատեղ սեփականության իր իրավունքը չի գրանցել բաժնետերերի ռեեստրում, առաջ հնարավոր անբարենդաս հետևանքների ռիսկը լուրջ է կրի ինքը, քանի որ դասասխանողը, հիմք ընդունելով ռեեստրի սվյալները և օբյեկտիվորեն բաժնետոմսերի սեփականատեր համարելով Թ.Պետրոսյանին, դասառ կարգով նրանից ձեռք է բերել բաժնետոմսեր՝ չիմանալով բաժնետոմսերի նկատմամբ այլ համասեփականատեր առկայության մասին, հետևաբար նաև բաժնետոմսերի առուվաճառքի գործարքի կնքման հարցում վերջինիս համաձայնության կամ անհամաձայնության մասին:

Նման դեպքում հնարավոր հետևանքների ռիսկը լուրջ է կրի առուվաճառքի գործարքը կնքած ամուսինը և ոչ թե գնողը, քանի որ վերջինս ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում է բաժնետոմսերի բարեխիղճ ձեռքբերող: Մինչդեռ Թ.Պետրոսյանը և նրա ամուսին՝ Յ.Միլիսոսյանը չեն դափնցել ՀՀ կառավարության վերը նշված որոշման դափնցներ՝ իրենց իրավունքները դասառ կարգով չեն գրանցել ռեեստրում:

Բողոք բերած անձը դափնցել է բեկանել ՀՀ սնտեսական դասարանի 16.11.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դասարան՝ այլ կազմով նոր ֆննդության:

3. Վճռաբեկ բողոքի ֆննդության համար նշանակություն ունեցող փաստեր.

Վճռաբեկ բողոքի ֆննդության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 01.08.1972 թվականին գրանցվել է Յուլյա Միլիսոսյանի և Թագուց Պետրոսյանի ամուսնությունը: Ամուսնությունը լուծված չէ:

2) Թագուց Պետրոսյանը ղեկավարել է բաժնետոմսերի մասնավորեցման 29.11.2002 թվականի թիվ 157-Մ դայմանագրով ձեռք է բերել Ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը:

3) Թագուց Պետրոսյանը 16.08.2004 թվականին կնքված առուվաճառքի դայմանագրով Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը առանց ամուսնու՝ Յ.Միլիսոսյանի համաձայնության, վաճառել է Ժաննա Ղազարյանին:

4. Վճռաբեկ դասարանի դասառաքանություններ և եզրահանգումներ.

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դասարանը գտնում է, որ՝

1) *Ժ.Ղազարյանի բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված դայմանագրով:

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համատեղ

սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը սնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության սնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների ղախանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե աղյացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն ղեխ է իմանար այդ մասին:

Նույն օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձի անունից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անունից և ի օտո նրա, եթե մյուս անձը (ներկայացվողը) հեսագայում ուղղակի հավանություն չի տալիս սվյալ գործարքին:

Վերը հիշատակված նորմերի վերլուծության հիման վրա ՎՃՌԱԲԵԿ ղասարանը գտնում է, որ դրանք ստրտեն փոխկաղակցված են և իրավակիրառական ղրակտիկայում դրանցից յուրաքանչյուրը ղեխ է մեկնաբանվի մյուսների բովանդակության և տամաբանության տիրոյթում:

Մինչդեռ սույն գործով, ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիման վրա բաժնետոմսերը ղիտարկելով որղես ամուսինների համատեղ սեփականություն, և աղյացուցված համարելով այն հանգամանքը, որ Ժաննա Ղաղարյանը իմացել է Թաղուց Ղեսրոյանի և Յուակ Միղիտոյանի ամուսիններ հանղիտանալու հանղամանի մասին, տնետական ղասարանը այղ հանղամանքը բավարար է համարել եղրակացնելու համար, որ Ժ.Ղաղարյանը իմացել է կամ ակնհայտորեն ղեխ է իմանար բաժնետոմսերի՝ Թ.Ղեսրոյանի և Յ.Միղիտոյանի համատեղ սեփականությունն հանղիտանալու և Թ.Ղեսրոյանի մոտ բաժնետոմսերի աղուվաճաղի գործարքի կնքման համար անհրաժեշտ լիազորության բացակայության մասին:

ՎՃՌԱԲԵԿ ղասարանը գտնում է, որ ղասարանը սիտալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասում ամրաղրված դրոյթն այն մասին, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը սնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Սույն գործի փաստերի համաձայն՝ ամուսիններ Թ.Ղեսրոյանի և Յ.Միղիտոյանի միղջ այլ բան նախատետղ համաձայնություն չի եղել: Այսինքն, Թ.Ղեսրոյանը՝ որղես համատեղ սեփականության մասնակից, ունեցել է համատեղ սեփականություն հանղիտացղղ բաժնետոմսերը տնօրինելու իրավունք: Հետևաբար, ՎՃՌԱԲԵԿ ղասարանը գտնում է, որ Յ.Միղիտոյանի կղղմից բաժնետոմսերի աղուվաճաղի գործարքը անվավեր ճանաչելու ղախանջը ղասարանի կղղմից կարղղ եր բավարարվել միայն Թ.Ղեսրոյանի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության և դրա մասին գործարքի մյուս կղղմի՝ գնողը Ժ.Ղաղարյանի կղղմից իմանալու կամ դրա մասին ողղամտորեն ենթաղրելու ակնհայտ հնարավորության աղկայության փաստը աղյացուցված համարելու դեպքում:

ՎՃՌԱԲԵԿ ղասարանը գտնում է, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կղղմից կնքված՝ ընդհանուր սեփականության սնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների (Թ.Ղեսրոյանի և Յ.Միղիտոյանի) ամուսիններ հանղիտանալու մասին գնողի (Ժ.Ղաղարյանի) տեղեկացված լինելը: Թ.Ղեսրոյանի և Յ.Միղիտոյանի իմանաղը և այղ հիմնով բաժնետոմսերի՝ ամուսինների համատեղ սեփականություն հանղիտանալու մասին

Ժ.Ղազարյանի կողմից իմանալու հնարավորությունը բավարար համարելով, սնտեսական դասարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի լուրջ հետևանքները հետևյալ լուրջառաքանությամբ.

Ղասարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Ժ.Ղազարյանն իմացել է կամ ղեկ է իմանար այն մասին, որ Թ.Պետրոսյանը բաժնետոմսերը օտարելու լիազորություն չի ունեցել, հետևաբար, կնքված վիճելի գործարքը հակասում է օրենքի լուրջ հետևանքներին: Մինչդեռ ՀՀ սնտեսական դասարանի վճռում վկայակոչված փաստերով կարելի էր միայն հիմնավորված համարել, որ Ժ.Ղազարյանն իմացել է կամ ղարտավոր էր իմանալ, որ Յ.Միլիսոսյանը և Թ.Պետրոսյանն ամուսիններն են: Սակայն, Վճռաբեկ դասարանը հաշվի առնելով ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վերը նշված կարգավորումը, գտնում է, որ միայն այդ փաստի հաստատումը բավարար հիմք չէ ենթադրելու, որ Թ.Պետրոսյանը համատեղ գույքը սնորհներու լիազորություն չի ունեցել, քանի որ համատեղականատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի սնորհներու համատեղ գույքը, եթե համատեղականատերերից ոչ մեկը չի առարկում նրա նման գործողությունների դեմ, ընդ որում, ընդհանուր սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության սնորհման գործարքը մնացած մասնակիցների լուրջ հետևանքով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե աղաքուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն ղեկ է իմանար այդ մասին:

Վճռաբեկ դասարանը գտնում է, որ սույն գործի դասաֆնությունը չի աղաքուցվել այն հանգամանքը, որ Ժ.Ղազարյանը իմացել է կամ ակնհայտորեն ղեկ է իմանար համատեղականատերերի միջև համաձայնության բացակայության մասին:

ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ղեկ է աղաքուցի իր լուրջ հետևանքների և առարկությունների հիմնում ընկած հանգամանքները: Մինչդեռ, սույն գործով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն լուրջ հետևանք ներկայաքող երրորդ անձ Յուլակ Միլիսոսյանը Թագուց Պետրոսյանի՝ վիճելի գործարքը կնքելու համար անհրաճեց լիազորությունների բացակայության, և այդ մասին գործարքի մյուս կողմի՝ գնորդ Ժ.Ղազարյանի կողմից իմանալու կամ իմանալու ակնհայտ հնարավորության առկայությունը հիմնավորող որևէ հիմնավոր աղաքուցյց չի ներկայաքրել դասարանին:

Այսդիտով, Վճռաբեկ դասարանը գտնում է, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության սնորհման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորադեպ, գնորդի սեղեկաքված լինելու փասքը: Նման լուրջ հետևանքը դասարանի կողմից կարող է բավարարվել միայն, եթե միաճամանակ առկա են երկու դայամաներ՝

1) համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաճեց լիազորությունների բացակայություն.

2) գործարքի մյուս կողմի՝ այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը:

ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի կիրառելիության մասին սույն բողոքի հիմքը Վճռաբեկ դասարանն անհիմն է համարում հետևյալ լուրջառաքանությամբ:

Համաձայն ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի առաջին մասի՝ եթե գույքը հասուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարելիդձ ձեռք բերող), աղա սեփականատերն

իրավունք ունի ձեռք բերողից սվյալ գույքը դահանգել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է սիրադեսման, կամ այն հափեսակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց սիրադեսմույից դուրս է եկել այլ ճանադարհով՝ անկախ նրանց կամփից:

Նված հողվածը վերաբերում է բարեխիղճ ձեռք բերողից գույքը հեճ դահանգելու հարաբերոթյուններին, որդիսի դահանգ սույն գործով ներկայացված չէ:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի կողմից ՀՀ կառավարոթյան 31.10.1996 թվականի թիվ 351 որոշման 7-րդ և 10-րդ կետերի վկայակոչմանը, ադյա դեճ է սսել, որ նված կարգի դրոյթները սարածվում են այն թողարկողների նկասմամբ, որոնց ռետսրի վարումը հանձնված չէ Հայասանի կենտրոնական դեդոզիսարիային: Մինչդեռ Ընկերոթյան հաշվետու թողարկող հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը սույն գործի դասաֆնոթյամբ չի դարգվել: Հետևաբար, սույն վեճի նկասմամբ ՀՀ կառավարոթյան վերը նված որոշման կիրառելիոթյան վերաբերյալ սույն բողոքի հիմքը Վճռաբեկ դասարանը նույնդես անհիմն է համարում:

ՀՀ ֆադաֆացիական դասավարոթյան օրենսգրքի 236-րդ հողվածի առաջին մասի 4-րդ կետի համաձայն՝ դասական ակետերի վերանայման արդյունում վճռաբեկ դասարանը բեկանում և փոփոխում է ստորադաս դասարանի դասական ակսը, եթե ստորադաս դասարանի կողմից հասսասված փասսական հանգամանքները հնարավորոթյուն են սալիս նման փոփոխոթյան, և դա բխում է արդարադասոթյան արդյունավետոթյան շսհերից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազասոթյունների դասեդյանոթյան մասին» եվրոդական կոնվենցիայի 6-րդ հողվածի համաձայն՝ յուրաֆանչյուր ոք ունի ողջամիճ ժամկետում իր գործի ֆնոթյան իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դասարանը գսնում է, որ գործը ողջամիճ ժամկետում ֆնները հանդիսանում է Կոնվենցիայի վերը նված հողվածով ամրագրված՝ անձի արդար դասաֆնոթյան իրավունքի սար, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վսանգ են դարունակում նված իրավունքի խախսման տեսանկյունից:

Վճռաբեկ դասարանը գսնում է, որ սվյալ դեդոքում անհրաճեճ է կիրառել ՀՀ ֆադաֆացիական դասավարոթյան օրենսգրքի 236-րդ հողվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դասարանի դասական ակսը փոփոխելու վճռաբեկ դասարանի լիազորոթյունը հետևյալ հիմավորմամբ:

Սույն գործով վեճի առարկայի նկասմամբ ինքնուրույն դահանգ ներկայացնող երրորդ անձ Յուլիա Միլիսոյանը Թագուճ Պետրոյանի մոճ վիճելի գործարքը կնեկելու համար անհրաճեճ լիազորոթյունների բացակայոթյան և այդ մասին գործարքի մյուս կողմի՝ գնորդ Մ.Ղազարյանի կողմից իմանալու կամ իմանալու ակնհայտ հնարավորոթյան առկայոթյունը հիմնավորող ունե հիմնավոր ադյացույց չի ներկայացրել դասարանին: Նման դայմաններում Յ.Միլիսոյանի հայցը ճնեսական դասարանի կողմից ենթակա էր մերժման:

Այադիսով, Վճռաբեկ դասարանը սույն բողոքի հիմքը մասնակի հիմնավոր համարելով՝ դրա առկայոթյունը ՀՀ ֆադաֆացիական դասավարոթյան օրենսգրքի 226-րդ հողվածի ուճով ՀՀ ֆադաֆացիական գործերով վերաֆնիչ դասարանի 31.07.2006 թվականի վճիռը բեկանելու և փոփոխելու բավարար հիմք է դիսում:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ ֆադաֆացիական դասավարոթյան օրենսգրքի 236-239-րդ հողվածներով՝ Վճռաբեկ դասարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ժամանա Դազարյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ սնտեսական դատարանի 16.11.2006 թվականի վճիռը Ֆոլակ Միլիսոսյանի հայցը բավարարելու մասով և այդ մասով վճիռը փոփոխել: Ֆոլակ Միլիսոսյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրատարակման լրացուցիչ և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnruqropjուն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnruqropjուններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով
վերաքննիչ դատարանի վճիռ
Քաղաֆաղիական գործ թիվ 06-3098/2006թ.
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան
Դատավորներ՝ Տ.Սահակյան
Ա.Թումանյան

Քաղաֆաղիական գործ թիվ 3-496(ՎԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալաբը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Մ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի մարտի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 06-3098/2006 ֆաղաֆաղիական գործով կայացրած վճռի դեմ՝ ըստ հայցի Չոյա Շատրյանի ընդդեմ Ընկերության՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր դատադորդի գումարի բռնագանձման դախանջների մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախադասմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը դախանջել է դատավորեցնել Ընկերությանն իրեն վերականգնել նախկին աշխատանքում և վճարել հարկադիր դատադորդի գումարը:

Երևանի Արաբկիր և Քանախեռ-Չեյթուն համայնքների առաջին այսանի դատարանի 2006 թվականի հուլիսի 21-ի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2006 թվականի հոկտեմբերի 27-ի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքին դատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դախանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհոիբյալ հիմնավորումներով.

1) Վերաֆննիչ դասարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը:

Բողոք բերած անչը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաֆննիչ դասարանը իր վճռում չի անդրադարձել այն հանգամանքին, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է, որ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները չդահողանելու դեպքում գործատուն դարձավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանոց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին ժամային աշխատավարձի չափը: Մինչդեռ նշված դրույթի դահանջը գործատուի կողմից դատաբան կատարվել է:

2) Վերաֆննիչ դասարանը կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասը, որը չդիմաց է կիրառել:

Բողոք բերած անչը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Գործատուի մոտ անաշխատունակությունը հաստատող փաստաթուղթ չի եղել, ավելին՝ դասարանին են ներկայացվել աղյուցակներ, որ հայցվորը ժամանակավոր անաշխատունակության քերթիկում նշված ժամանակահատվածում ներկայացել է աշխատանքի և կատարել է իր աշխատանքային դարձակադրությունները: Ուժսի, քանի դեռ հայցվորի կողմից նրա ժամանակավոր անաշխատունակության փաստը հաստատող փաստաթղթի՝ ժամանակավոր անաշխատունակության քերթիկի բնօրինակը չի ներկայացվել Ընկերությանը, ակնհայտ է, որ վերջինս որդես գործատու չի խախտել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի դահանջները:

3) Վերաֆննիչ դասարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի դահանջները, որոնք դիմաց է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածը:

Բողոք բերած անչը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.

Ընկերությունը 2005 թվականի հոկտեմբերի 3-ից գործում է կազմակերպական նոր կառուցվածքով, և հայցվորի նախկին դատարանն ու կառուցվածքային միավորը գոյություն չունեն, մինչդեռ Վերաֆննիչ դասարանն անտեսել է նշված հանգամանքը՝ խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածը:

Վճարելի բողոք բերած անձը դահանջել է բեկանել Վերաֆննիչ դասարանի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը և գործն ուղարկել նույն դասարան՝ այլ կազմով նոր ֆննության:

3. Վճարելի բողոքի ֆննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարելի բողոքի ֆննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 1970 թվականից Չոյա Ծասրյանը աշխատել է կադրի համակարգում որդես հեռախոսավարուհի:

2) Ընկերությունը սնօրենների խորհրդի 27.09.2005 թվականի թիվ 537 որոշմամբ 2005 թվականի հոկտեմբերի 3-ից գործում է կազմակերպական նոր կառուցվածքով, որի հետևանքով այն կառուցվածքային միավորը, որտեղ աշխատել է հայցվորը, ներկայիս գործող վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի:

3) 2006 թվականի մայիսի 25-ին Չոյա Ծասրյանը ծանուցվել է 2006 թվականի ապրիլի 29-ից աշխատանքից ազատման և Ընկերության հետ կնքած աշխատանքային դայմանագրի լուծման մասին:

4) Ընկերության սնօրենների խորհրդի 2006 թվականի մայիսի 25-ի թիվ 924-Կ

հրամանով Չոյա Շասրյանն ազատվել է աշխատանքից, և լուծվել է նրա հետ կնքված թիվ 9323 աշխատանքային դայանազիրը, ինչդեպես նաև որոշվել է վերջնահաշվարկ կատարել և ծանուցման ժամկետանց 56 օրվա համար վճարել սուժանի:

5) Գործում առկա թիվ 056872 անաշխատանքային թերթիկի համաձայն՝ Չոյա Շասրյանը 18.05.2006 թվականից մինչև 29.05.2006 թվականը գտնվել է ժամանակավոր անաշխատանքային մեջ:

6) Գործում առկա Ընկերության 04.10.2006 թվականի տեղեկանքի և աշխատաժամանակի տեղեկագրի համաձայն՝ Չոյա Շասրյանը մինչև 2006 թվականի մայիսի 29-ը ներկայացել է աշխատանքի:

4. ՎՃՌԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԱՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԵԳՐԱԿԱՆՈՒՄԸ.

Քննելով վճռաքել բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաքել դատարանը գտնում է, որ.

1) Բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաքել դատարանն արձանագրում է, որ սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը կայանում է հետևյալում՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի խախտումը կհանգեցնի արդյո՞ք աշխատանքային դայանազրի լուծման կադրակցությամբ ընդունված իրավական ակտի անվավերությանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված դայանազիրը լուծելիս գործատուն դարձավոր է այդ մասին աշխատողին ծանուցել նույն օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները չդիտարկելու դեպքում գործատուն դարձավոր է աշխատողին վճարել սուժանի՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին ժամային աշխատավարձի չափը:

Ընկերությունը հայցվորին ծանուցել է աշխատանքից ազատելուց ընդամենը չորս օր առաջ՝ խախտելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված ծանուցման ժամկետը:

Միևնույն ժամանակ Ընկերության գլխավոր սնօրենի 2006 թվականի մայիսի 25-ի թիվ 924-Կ հրամանում նախատեսվում է դատաստանողին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վճարել նրա միջին ժամային աշխատավարձը 56 օրվա համար:

Վճռաքել դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նշված իրավական հարցի գնահատականին (տե՛ս, օրինակ՝ Նունե Մանուկյանն ընդդեմ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության, ֆաղափացիական գործ թիվ 3-34(ՎԳ), 26.01.2007 թվական աշխատանքում վերականգնելու դիմումը), մասնավորապես նշելով, որ սլյալ դեղմունքի սուժանի գումարի վճարումը ազատում է դատաստանողին սլյալ նորմի խախտման հետ կապված հետագա ուղիքե դատաստանաձևությունից:

Այստիպով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործատուի դարձակառության չկատարման միակ իրավական հետևանք է հանդիսանում նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված սուժանի վճարումը և չի կարող հանգեցնել աշխատանքային դայանազրի լուծման կադրակցությամբ ընդունված իրավական ակտի անվավերության:

2) *Բողոքը երկրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ արգելվում է գործատուի նախաձեռնությամբ լուծել աշխատանքային դաշտանագիրը աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի արգելքը չի կարող սարսածվել այն դեղորայքի վրա, երբ աշխատողը, լինելով ժամանակավոր անաշխատունակության վիճակում, չի սեղեկացրել գործատուին այդ մասին, դեռ ավելին՝ անաշխատունակության թերթիկում նշված ժամանակահատվածում ներկայացել է աշխատանքի: Նշված դատաբանության հիման վրա Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ սվյալ դեղորայքում աշխատանքային դաշտանագիրը լուծելու մասին իրավական ակտը օրինական է և չի հակասում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:

Դատաբանության ընթացքում Ընկերության ներկայացուցիչը ղոնդել է, որ համադասախան անաշխատունակության թերթիկը դատարան ներկայացնելու փոխարեն այն ղետս է Ընկերությանը ներկայացնել, սակայն այդ փաստը դատարանի կողմից չի գնահատվել:

Նշված հետևություններին հանգելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ Ընկերության ներկայացուցիչը համադասախան թերթիկի բացակայությամբ վերաբերյալ դատարանում գործի ֆննության ժամանակ աղացույց է ներկայացրել:

Բողոքի այս հիմքի դատաբանությունից ուղղակիորեն բխում է, որ Վերաբնիչ դատարանը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի չի գնահատել գործում առկա աղացույցները:

3) *Բողոքը երրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Բողոքի սույն հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը ղետս է դասախանի հետևյալ իրավական հարցին. աղյո՞ք դատարանը ղետս է վերականգնի աշխատողին իր նախկին դատեսնում այն դեղորայքում, երբ Ընկերության գործող վարչակազմակերղչական կառուղվածքում գոյություն չունի այնղիսի հաստիային միավոր, որսեղ նախկինում աշխատել է հայղվորը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է՝ սնեստական, սեխնղղղիական, կազմակերղչական կամ այղ դատեսններով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերղղությունների վերականգնման անհնարինության դեղորայքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ դատարավորեղնելով գործատուին հարկաղիր դատարղորղի ամբողղ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուղում՝ միղին աշխատավարձի չաղով, մինչև դատարանի վճիռն ուժի մեղ մսնելը: Այս դեղորայքում դատարանի վճիռն օրինական ուժի մեղ մսնելու օղվանից աշխատանքային դաշտանագիրը համարվում է լուծված:

Ընկերղղղումը դատարանին ներկայացրել է բավարար աղացույցներ, որոնս հատատում են հայղվորի նախկին հատսիղի սսեղծման անհնարինղղությունը: Հետևաբար, սղյաղ դեղորայքում կիրառելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված աշխատողին աշխատանքում չվերականգնելու դեղորայք:

Դատարանի կողմից Ընկերղղղության վրա չի կարող ողրվել այնղիսի դատարավորղղություն, որի փատասղի կատարումն օղյեղկղիղորեն անհնար է:

Նման դեղորայքում դատարանի կողմից վերղղղյաղ հոդվածի չկիրառումը կհանգեղնի

գործատի համար լրացուցիչ դատարարության՝ ստեղծելու կառուցվածքային նոր միավոր, նոր հաստի:

Նման դատարարության սահմանումը կհանգեցնի գործատի՝ ՀՀ Սահմանադրության իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի երաշխիքային նորմերի և օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակման: Այդ իսկ նդատարարով օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատի իրավական հնարավորությունը՝ վերադառնալով դատարանին այդ վարձագծի իրավաչափության գնահատման իրավասություն՝ որոշելու ճշտության, ճեխնությունից, կազմակերպչական կամ այլ դատաճանդներով կամ գործատի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարիությունը՝ կոնկրետ գործի փաստերից ելնելով:

Այսդիտով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրատարակման դաից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnruգրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnruգրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
Տնտեսական դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ S-2919
Նախագահող դատավոր՝ Գ.Դարիբյան

Քաղաքացիական գործ թիվ 3-460(ՏԴ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007թ. մարտի 30-ին

դռնբաց դատական նիստում, ֆիննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դատական ծառայության վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 21.12.2006 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դատական ծառայության Արմավիրի սարածային հարկային տեսչության ընդդեմ «Նարոգ» արտադրական կոդերաշիվի՝ 306.400 դրամ բռնագանձելու դատարանի մասին թիվ S-2919 քաղաքացիական գործով,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատարանական նախադասմունքները.

Հայցվորը, դիմելով դատարան, դատարանին է «Նարոգ» արտադրական կոդերաշիվից հոգուս ՀՀ դատական բյուջեի բռնագանձել 306.400 դրամ:

ՀՀ տնտեսական դատարանի 21.12.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի, այն է՝ «Նարոգ» արտադրական կոդերաշիվից հոգուս ՀՀ դատական բյուջեի վճռվել է բռնագանձել 186.900 դրամ՝ որդես դատական տուրքի վճարումն ուսացնելու համար հաշվարկված տույժ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դատական ծառայությունը:

Վճռաբեկ բողոքին դատարանի չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դատարանը.

Սույն վճռաբեկ բողոքը ֆիննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներհոյակալ հիմնավորմամբ.

Ինչ վերաբերում է 2005 թվականի հերթական ղեկավարական տարիի և դրա ուժացման համար հաշվարկված սուբսիդի ընդամենը 119.500 դրամ գումարի բռնագանձման դատահանջի մեծմանը, ադա այդ մասով բողոքը հիմնավոր է՝ հետևյալ դատաճառաբանությամբ.

«Պետական տարիի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արժույթի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցվելու դեպքում (բացառությամբ կասեցված լինելու ժամանակահատվածում դիմումի համաձայն ՀՀ օրենսդրությամբ արժույթի, թույլտվության կամ լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչման դեպքերի) հերթական տարեկան ղեկավարական տարիների գումարները ենթակա են վճարման՝ անկախ արժույթի, թույլտվության կամ լիցենզիայի գործողության կասեցման հիմքերից ու ժամկետներից:

Նշված հոդվածի վերլուծության հիման վրա Վճարեկ դատարանը գտնում է, որ կասեցման ժամանակահատվածի ավարտից հետո արժույթները, թույլտվությունները կամ լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում հերթական տարեկան ղեկավարական տարիների գումարները ենթակա են վճարման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարի 10.10.2005 թվականի թիվ 923-Ս հրամանով «Նարոգ» արտադրական կոդիցիայի թիվ Կ-XX-000341 դեղատեսակին գործունեության լիցենզիայի գործողությունը կասեցվել է մինչև 01.10.2006 թվականը: Նշված լիցենզիայի գործողության դադարեցման վերաբերյալ ընկերության դիմումը ներկայացվել է 02.10.2006 թվականին, իսկ լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել 04.10.2006 թվականին՝ ՀՀ առողջապահության նախարարի 04.10.2006 թվականի թիվ 1124-Ս հրամանի համաձայն, այսինքն՝ կասեցման ժամանակահատվածի ավարտից հետո: Այսինքն՝ դատախազանոսի մոտ առաջացել է հերթական տարեկան ղեկավարական տարիի վճարման դատարարությունը, հետևաբար Դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական տարիի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասը:

Այսպիսով՝ Վճարեկ դատարանը սույն բողոքի հիմքը հիմնավոր է համարում և դրա առկայությունը դիտում է որդես բավարար հիմք՝ ՀՀ սնտեսական դատարանի 21.12.2006 թվականի վճիռը հայցադատահանջը մեծելու մասով բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 226-րդ, 236-239-րդ հոդվածներով՝ Վճարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ սնտեսական դատարանի 21.12.2006 թվականի վճիռը՝ հայցադատահանջը մեծելու մասով, և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դատից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
ֆաղափացիական գործերով
վերաքննիչ դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ 06-3761
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան
Դատավորներ՝ Կ.Հակոբյան
Վ.Ավանեսյան

Քաղաքացիական գործ թիվ 3-608(ՎԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղափացիական լիցիտացիայի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2007 թվականի մարտի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՀՀ Գեղարձակի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 21.11.2006 թվականի վճռի դեմ ըստ հայցի Հերիքնազ Կարապետյանի ընդդեմ «ՀՀ Գեղարձակի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սնուցումի՝ ազատման հրամանն անվավեր ճանաչելու և նախկին աշխատանքում վերականգնելու լիցիտացիայի մասին թիվ 06-3761 ֆաղափացիական գործով,

Պ Ա Ր Չ Ե Ց

1.Գործի դատարանական նախադասմունքներ.

Հայցվորը, դիմելով դատարան, խնդրել է իր մասով անվավեր ճանաչել 01.07.2005 թվականի «ՀՀ Գեղարձակի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սնուցումի ազատման հրամանը և իրեն վերականգնել նախկին աշխատանքում՝ որդես սարական դասարանների դատարան:

ՀՀ Գեղարձակի մարզի առաջին ասյանի դատարանի 29.12.2005 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 21.11.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել լիցիտացիայի «ՀՀ Գեղարձակի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սնուցումը:

Վճռաբեկ բողոքին լիցիտացիայի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքեր, փաստարկներ և դատահնչք.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 335-րդ, 342-րդ հոդվածների պահանջները, որոնք պետք է կիրառվեն:*

Բողոք բերած անձը բողոքի սույն հիմքը դատաճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Հայցվորը 1975 թվականից աշխատել է դատաստիսանող կազմակերպությունում: 01.07.2005 թվականի թիվ 24 հրամանով Հերիֆնազ Կարադեյանն ազատվել է աշխատանքից՝ դատաժամերի կրճատման և համադատաստիսան մասնագիտական կրթություն չունենալու հիմքով: Ազատման հրամանը Հ.Կարադեյանը ստացել է 07.07.2005 թվականին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հ.Կարադեյանը 07.07.2005 թվականին ստանալով աշխատանքից ազատման մասին 01.07.2005 թվականի հրամանը, դատարան է դիմել 29.11.2005 թվականին, դատախազության ընթացքում դատաստիսանող կողմը գրավոր միջնորդությամբ խնդրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կիրառել հայցային վաղեմություն և հայցը մերժել:

Մինչդեռ ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանը, դատաճառաբանելով, որ հայցվորը հայցային վաղեմության ժամկետը բաց է թողել սարբեր ղեկական մարմինների դիմելու դատաճառով, ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 342-րդ հոդվածի հիմքով նշված ժամկետի բաց թողումը հարգելի է ճանաչել և այն վերականգնել է: Սակայն Հ.Կարադեյանին հասցեագրված ՀՀ կրթության և գիտության նախարարության 07.10.2005 թվականի գրության բովանդակությունից դարձ է դառնում, որ հայցվորը ՀՀ նախագահին, ՀՀ վարչապետին և ՀՀ կրթության և գիտության նախարարություն դիմել է 2005 թվականի սեպտեմբեր ամսին, այսինքն՝ ազատման հրամանը ստանալուց մեկ ամիս լրանալուց հետո:

Բողոք բերած անձը դատահնչել է բեկանել ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 21.11.2006 թվականի վճիռը և օրինական ուժ սալ ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ասյանի դատարանի 29.12.2005 թվականի վճիռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սնօրենի 01.07.2005 թվականի հրամանով Հերիֆնազ Կարադեյանը 01.07.2006 թվականին ազատվել է աշխատանքից: Ազատման հրամանը Հ.Կարադեյանը ստացել է 07.07.2005 թվականին:

2) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սնօրենին հասցեագրված ՀՀ Գեղարքունիքի մարզի 07.11.2005 թվականի թիվ Կ-427/183 գրությամբ սնօրենին հանձնարարվել է մեկաբաթյա ժամկետում վերանայել 01.07.2005 թվականի հրամանը և Հերիֆնազ Կարադեյանին վերականգնել նախկին աշխատանքում:

3) Հայցվորն իր իրավունքների դատաքննության համար դատարան է դիմել 27.11.2005 թվականին:

4) 29.12.2005 թվականի թիվ 271 գրավոր միջնորդությամբ դատաստիսանողը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն և այդ հիմքով հայցադատահնչքը մերժել:

4. Վճռաբեկ դատարանի դատառաքանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի դայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային դայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային դայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համադասասխան հրամանը ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հերիֆնազ Կարադեսյանն աշխատանքից ազատվել է սեփական 01.07.2005 թվականի հրամանով: Նշված հրամանը Հերիֆնազ Կարադեսյանը ստացել է 07.07.2005 թվականին, մինչդեռ իր իրավունքների դաժանության հայցով դատարան դիմել է 27.11.2005 թվականին, այսինքն՝ 01.07.2005 թվականի հրամանը ստանալուց չորս ամիս հետո՝ բաց թողնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ դատարան դիմելու վաղեմության ժամկետը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վեճի նկատմամբ ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը կիրառելի չէ հետևյալ դատառաքանությամբ:

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական դատարանների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են ֆաղափացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հասուկ օրենսդրությամբ:

Տվյալ դեպքում աշխատանքային օրենսդրությամբ աշխատանքի դայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային դայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային դայմանագիրը լուծելու հետ կապված վեճերով աշխատողին սրված է համադասասխան հրամանը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո մեկամսյա ժամկետում դատարան դիմելու իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքային վեճերով դատարան դիմելու մեկամսյա ժամկետը ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի իմաստով հայցային վաղեմության ժամկետ չի կարող համարվել, քանի որ այն, ըստ էության, սահմանում է դատարան դիմելու իրավունքի իրականացման ժամկետ: Իսկ ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 332-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետն ընդամենն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է ակնկալել իր իրավունքների դատարան դաժանություն: Այդ ժամկետը չի սահմանափակում դատարան դիմելու հայցվորի իրավունքը: ՀՀ ֆաղափացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմությունը կարող է կիրառվել միայն դատաստանողի համադասասխան միջնորդության հիման վրա, մինչդեռ աշխատանքային վեճերով դատարան դիմելու՝ աշխատանքային օրենսգրքով սահմանված մեկամսյա ժամկետը գործում է ուղղակիորեն, անկախ դատաստանողի կողմից միջնորդություն ներկայացված լինելու հանգամանքից, և այդ ժամկետի բացթողումը հայցադիմումի ընդունումը մերժելու կամ գործի վարույթը կարճելու անվերադարձ հիմք է հանդիսանում:

Գործում առկա՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթական վարչության 07.10.2005 թվականի թիվ 3122Կ-2276 գրությամբ հիմնավորվում է, որ Հ.Կարադեսյանի կողմից ՀՀ նախագահին, ՀՀ վարչապետին և ՀՀ կրթության և գիտության

նախարարությանը դիմում-բողոքներ ներկայացվել են 16.09.2005 թվականին, այսինքն՝ դարձյալ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո: Նշված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում Հ.Կարադեյանին առաջարկվել է 01.07.2005 թվականի հրամանը բողոքարկել Գեղարհունիքի մարզդեպարտմենտին կամ դասարան: ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթական վարչության 07.10.2005 թվականի թիվ 3122Կ-2276 գրության հիման վրա ՀՀ Գեղարհունիքի մարզդեպարտմենտին 07.11.2005 թվականի թիվ Կ-427/183 գրությամբ «ՀՀ Գեղարհունիքի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սնօրենին հանձնարարվել է մեկաբար ժամկետում վերանայել 01.07.2005 թվականի հրամանը և Հ.Կարադեյանին վերականգնել նախկին աշխատանքում:

Փաստորեն, Հ.Կարադեյանի կողմից վիճելի հրամանը ի սկզբանե վիճարկվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով դասարան դիմելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո: Այսինքն՝ մինչև ժամկետի բացթողման դասձառ հանդիսացող հանգամանքների առաջանալը, հայցվորն արդեն բաց էր թողել դասարան դիմելու օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, հետևաբար կորցրել է սվյալ հրամանը դասարանում վիճարկելու իրավական հնարավորությունը, իսկ վեճը ենթակա չի եղել դասարանում ֆննդության:

Համաձայն ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի՝ դասարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դասարանում ֆննդության:

Նույն օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, եթե գործի վարույթը կարճելու հիմքն ի հայտ է եկել ստորադաս դատարանում գործի ֆննդության ժամանակ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը զսնում է, որ սույն գործով գործի վարույթը կարճելու հիմքը ի հայտ է եկել ստորադաս դատարանում գործի ֆննդության ընթացքում, որովհետև դատարանում ֆաղափացիական գործի վարույթը ենթակա էր կարճման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը զսնում է, որ սույն գործով կայացված ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 21.11.2006 թվականի վճիռը ղեկ է բեկանել և ֆաղափացիական գործի վարույթը կարճել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 21.11.2006 թվականի վճիռը և ֆաղափացիական գործի վարույթը կարճել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դասից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
ֆաղաֆաղիական գործերով
վերաքննիչ դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ 06-3547
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան
Դատավորներ՝ Ա.Թումանյան
Տ.Մուկոչյան

Քաղաքացիական գործ թիվ 3-432 (ՏԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի մարտի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արա Միրզախանյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 06-3547 ֆաղաֆաղիական գործով կայացրած վճռի դեմ՝ ըստ Արա Միրզախանյանի (այսուհետ՝ Հայցվոր) հայցի ընդդեմ Դիանա Խաչատրյանի (այսուհետ՝ Պատասխանող) անչափահաս երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու դիմումից մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատարանական նախադասմունքները.

Դիմելով դատարան՝ հայցվորը դիմում է անչափահաս երեխայի՝ Անահիտ Միրզախանյանի խնամքն ու դաստիարակությունը հանձնել իրեն:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դատարանի 18.08.2006 թվականի թիվ 2-4046 վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 02.11.2006 թվականի թիվ 06-3547 վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արա Միրզախանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքին դատաստան է ներկայացրել Դիանա Խաչատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դատահնչքը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը կիրառել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ, 61-րդ, 63-րդ և 64-րդ հոդվածները, որոնք չդիմացել են կիրառել:

Բողոք բերած անչը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.

Նշված հոդվածները չեն կարգավորում անչափահաս երեխայի խնամքն ու դաստիարակությունը ծնողներից մեկին հանձնելու իրավահարաբերությունը:

2) Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անչը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Համաձայն նշված նորմի՝ ծնողների առանձին աղբյուր դեղմում երեխաների բնակության վայրը ծնողների համաձայնության բացակայության դեղմում որոշվում է դատարանի կողմից: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կաղվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, փոքրիկի ու եղբայրների հետ, երեխայի սարիքը, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, ծնողների բարոյական և այլ անձնական հատկանիշներ, երեխայի դաստիարակության ու զարգացման համար դայմանները ստեղծելու հնարավորությունը:

Նման դայմաններում դատարանը սխալ է գնահատել Պատասխանողի բարոյական բնութագրի վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայցվորի սոցիալական դայմաններն ավելի բարենպաստ են քան Պատասխանողին:

3) Դատարանը խախտել է ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անչը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը Պատասխանողի անբարոյական նկարագիրը հաստատող աղացույցը որակել է որդես «դատական կարգով երեխայի ճակատագիրը լուծելու համար, բացահայտություններ ստանալու միջոցով, աղացույցներ ստեղծելու իրավագործություններ ուսիականությունը չունի, առավել ևս, որ նշված դիմումը ներկայացվում է ոչ թե տուժողի, այլ սխալ իրավահարաբերության հետ կապ չունեցող բոլորովին այլ անձի կողմից»:

Բողոք բերած անձը դատահնչել է բեկանել ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 02.11.2006 թվականի թիվ 06-3547 վճիռը և օրինական ուժ սալ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դատարանի 18.08.2006 թվականի թիվ 2-4046 վճիռին:

2.1. Վճռաբեկ բողոքի դատասխանի հիմքերը և փաստարկները.

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը, ըստ որի՝ հանձնաժողովը նպատակահարմար է գտել իրենց անչափահաս երեխայի խնամքն ու դաստիարակությունը հանձնել Հայցվորին, հիմնավորված չէ: Հանձնաժողովը օբյեկտիվ չի մոտեցել հարցին և ըստ էության միակողմանի է կատարել թե՛ սեղատեսությունը և թե՛ երեխայի բարենպաստ դայմանների ստուգումը, այդ իսկ դատաճառով էլ հանգել է սխալ եզրակացության:

Դատարանը նման վեճեր քննելիս դատարարի աղաժողովում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ներկայացուցչի ներկայությունը դատական նիստին, սակայն նրանց եզրակացությունը օրենքով սահմանված կարգով չի դատահնչվում և չի կարող դրվել վճիռի հիմքում:

Քաղաքացիական գործով անցնող բոլոր վկաները հանդիսանում են Հայցվորի հարևանները, որոնք շատ մեծ խնայողությամբ մեջ են վերջինիս հետևել, բնականաբար, դեմք է փնտրելին Պատասխանողին, սակայն համաձայն ՀՀ քաղաքացիական դատարանի 51-րդ հոդվածի՝ վերջիններիս ցուցմունքները չեն կարող դիտարկվել որպես դատարանի ապացույցներ:

Հայցվորը բացակայում է իր բնակության վայրից, չի վճարում երեխայի խնամքի համար ՀՀ քաղաքացիական գործերով վերաբերյալ դատարանի 08.12.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ 06-3658 վճռով սահմանված ալիմենտի գումարը և չի ցանկանում ռեգիստրացիայի հետևել:

3. ՎՃՈՒՔԵԿ ԲՈՂՈՒՄԻ ԲՆՈՒՄՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՐԳՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ:

Վճռաբեկ բողոքի բնույթի համար էական նշանակություն ունեն հետևյալ վիճակները՝

1) Արա Միրզախանյանը և Դիանա Խաչատրյանը 2000 թվականից փաստական ամուսնական հարաբերությունների մեջ են գտնվել: Համատեղ կյանքի ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ Անահիտ Միրզախանյանին՝ ծնված 29.08.2001 թվականին: Ընտանեկան անախորհությունների դատաճառով ծնողները բնակվում են առանձին:

2) Համաձայն Երևանի Ավանի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 03.08.2006 թվականի եզրակացության Անահիտ Միրզախանյանի խնամքը նույնպես հարմար է թողնել հորը՝ Արա Միրզախանյանին:

3) 24.06.2006թ., 26.06.2006թ., 07.07.2006 թվականին ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժանմունքում կազմվել են արձանագրություններ բացատրություն վերցնելու մասին, որոնք Հայցվորը ներկայացրել է դատարան որդես Պատասխանողի վարձագծի մասին ապացույցներ:

4) Արա Միրզախանյանի և Դիանա Խաչատրյանի համատեղ բնակության վայրի հարևանները սույն գործի բնույթի ժամանակ տեղեկություններ են հայտնել սույն գործով կողմերի վերաբերյալ:

4. ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵԳՐԱԿԱՆՈՒՄՆԵՐԸ:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածը սահմանում է ծնողական իրավունքներից զրկելու կարգը, 61-րդ հոդվածը՝ ծնողական իրավունքներից զրկելու հետևանքները, 63-րդ հոդվածը՝ ծնողական իրավունքները սահմանափակելու կարգը, իսկ 64-րդ հոդվածը՝ ծնողական իրավունքները սահմանափակելու հետևանքները:

Սույն քաղաքացիական գործով կողմերն իրենց ծնողական իրավունքներից զրկված չեն, ինչպես նաև դրանք սահմանափակված չեն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքը բերած անձի փաստարկն այն մասին, որ նշված նորմերը սլյալ վեճը լուծելիս կիրառման ենթակա չեն, քանի որ այս դեպքում խոսվում է անչափափաս երեխայի խնամքն ու դաստիարակությունը առանձին աղյուղ ծնողներից մեկին հանձնելու մասին՝ առանց մյուս ծնողին իր իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ ընտանեկան օրենսդրությունը չի կարգավորում անչափափաս երեխայի խնամքն ու դաստիարակությունն առանձին աղյուղ ծնողներից մեկին հանձնելու իրավահարաբերությունը: Սակայն, քանի որ

վեճի առարկան ըստ էության հանդիսանում է երեխայի ծնողներից մեկի հետ բնակվելը, հետևաբար այս դրամաներում կիրառելի է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածը:

2) *Բողոքը երկրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Դատարանը հայցը մերժելով նշել է, որ երեխայի բնակվելը մոր հետ բխում է երեխայի ցահերից, քանի որ Հայցվորը չի ներկայացրել որևէ աղացույց այն մասին, որ երեխան կառավարությունը չունի մոր հետ, մոր բարոյական և անձնական այլ հասկանիչները վնաս են դատաճառում երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը, ինչդեպես նաև ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունների մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքը բերած անձի դատաճառաբանությունը, որ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածը, քանի որ նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծնողների միմյանցից առանձին ադրեյտի դեմ երեխաների բնակության վայրը ծնողների համաձայնության բացակայության դեմքում որոշվում է դատարանի կողմից: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կառավարությունը ծնողներից յուրաքանչյուրի, փոքրիկի ու եղբայրների հետ, երեխայի սարիքը, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, ծնողների բարոյական և այլ անձնական հասկանիչներ, երեխայի դաստիարակության ու զարգացման համար դրամաները ստեղծելու հնարավորությունը:

Տվյալ իրավանոմի իմպերատիվ դրամաներից առաջացնում է ծնողներից յուրաքանչյուրի հետ երեխայի կառավարությունը ստուգելու դատարանի դատաբանություն, այնինչև տվյալ դեմքում դատարանն անդրադարձել է այս հարցին միայն Հայցվորի մասով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողների միմյանցից առանձին ադրեյտի դեմ երեխաների բնակության վայրը ծնողների համաձայնության բացակայության դեմքում որոշելիս դատարանը ղեկ է համեմատական գնահատականի և դատաճառաբանի թե որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի ցահերից և նույնպես երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը:

3) *Բողոքը երրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղաֆաղական դատարանության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատարանը յուրաքանչյուր աղացույց գնահատում է գործում եղած բոլոր աղացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանը վճռում նշել է, որ «ՀՀ նսիկանության Երևան ֆաղաֆի Նոր Նորքի սարածի նսիկանության դեմ ուղղված Հայցվորի դիմումի ու դրա կառավարությամբ վերցված բացառությունների ուսումնասիրմամբ վերաբերյալ դատարանը գտնում է, որ նշվածով ոչ միայն հնարավոր չէ դատաբանություններ անել Պատասխանողի բարոյական նկարագրի մասին, այլև անհասկանալի է նման բացառություններ վերցնելու իրավական հիմնավորվածությունը, առավել ևս դրանք ֆաղաֆաղական գործով որդես աղացույցներ ներկայացնելը, քանի որ «Նսիկանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նսիկանությունը «դատական կարգով երեխայի ճակատագիրը լուծելու» համար բացառություններ ստանալու միջոցով աղացույցներ ստեղծելու իրավագործություններ չունի, առավել ևս, որ նշված դիմումը ներկայացվում է ոչ թե սուծողի, այլ տվյալ իրավահարաբերության հետ կառավարյալ չունեցող բոլորովին այլ անձի հետ»:

Փաստորեն, դատարանը գնահատել է ոչ թե ներկայացված աղացույցը, այլ նսիկանության գործողությունների իրավաչափությունը, որոնք սույն գործով չեն վիճարկվում:

ՀՀ ֆաղաֆացիական դասավարտության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ադաօույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դասարանը դարգում է գործին մասնակցող անձանց դահանջները և առարկությունները հիմնավորող, ինչդես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Նշված բացատրություններում առկա են տեղեկություններ դասասխանողի վարագծի վերաբերյալ, որոնք սույն գործով ենթակա էին դասարանի կողմից գնահատման ծնողների բարոյական և այլ անձնական հասկանիչները որոշելիս: Վճռաբեկ դասարանը գտնում է, որ վերագրյալ նորմի հիմքով նշված բացատրությունները հանդիսանում են սույն վեճի նկատմամբ վերաբերելի ադաօույցներ, և դասարանը դեռ է գնահատե դրանք բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտյամբ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքին ներկայացված դասասխանում նշված փաստերին, ադա դրանք հերքվում են վճռաբեկ բողոքի վերաբերյալ վճռաբեկ դասարանի դասճառաբանություններով:

Վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաննիչ դասարանի 02.11.2006 թվականի թիվ 06-3547 վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դասարանը գտնում է, որ սույն գործով անհրաճես է կիրառել ՀՀ ֆաղաֆացիական դասավարտության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ առաջին ասյանի դասական ակտին օրինական ուժ տալու լիազորությունը հետևյալ դասճառաբանությամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշտանության մասին» եվրոդական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք:

Սույն ֆաղաֆացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար:

Վճռաբեկ դասարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դասաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վսանգ են դարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Բացի այդ, Երեխայի իրավունքների մասին 1989 թվականի նոյեմբերի 20-ի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ադաօույցի հարցերով զբաղվող դեղական կամ մասնավոր հիմնարկների, **դասարանների**, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն տեսիլին: Վճռաբեկ դասարանը գտնում է, որ սույն գործով երեխայի խնամքի հարցի լուծման հարդադումը չի բխի երեխայի լավագույն տեսիլից և հետևաբար՝ արդարադասության արդյունավետության տեսիլից:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դասարանի 18.08.2006 թվականին սույն գործով կայացրած թիվ 2-4046 վճիռը հիմնավորված է, բավարար դասճառաբանված և դրանով ըստ էության ձիտ է լուծվել վեճը:

Վերագրյալի հիման վրա առաջին ասյանի դասարանի սույն գործով կայացրած վճիռն օրինական ուժ տալը բխում է արդարադասության արդյունավետության տեսիլից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դասավարտության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արա Միրզախանյանի ներկայացուցիչ Ներսես Հարությունյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դասարանի 02.11.2006 թվականի թիվ 06-3547 վճիռը և օրինական ուժ սալ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դասարանի 18.08.2006 թվականի թիվ 2-4046 վճռին:

2. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարսկման դսհից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
Տնտեսական դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ ՏՍ6-37
Նախագահող դատավոր՝ Բ.Մկրտչյան

Քաղաքացիական գործ թիվ 3-498 (ՏԴ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
3) ՀՀ կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադաստրի ղեկական կոմիտեի Նոր Նորք սարաժֆային ստորաբաժանման կողմից 16.02.2006 թվականին Լաուրա Ամիրյանին սրվել է Երևանի Մյասնիկյան դղողսայի թիվ 57/1 և 57/2 հասցեներում գտնվող անճարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2135727 վկայականը:

4) Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ասյանի դասարանի 25.04.2006 թվականի թիվ 2-1560 ֆաղաֆաղիական գործով կայացրած վճռով հաստատված է համարվել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Թամարա և Շամամ Պողոսյանները հանդիսացել են Լաուրա Ամիրյանի հարազատ մորաբույրերը:

5) ՀՀ Կենտրոն նոսարական սարաժֆի նոսարի կողմից 17.05.2006 թվականին Լաուրա Ամիրյանին սրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր՝ Թամարա և Շամամ Պողոսյանների գույքի նկատմամբ ժառանգ հանդիսանալու վերաբերյալ:

6) Վճռաբեկ դասարանի 16.06.2006 թվականի թիվ 3-1173(Ա) որոշմամբ բեկանվել է Արաբկիր և Քանաֆեռ-Չեյթուն համայնքների առաջին ասյանի դասարանի 05.05.2005 թվականի թիվ 2-4914 ֆաղաֆաղիական գործով կայացրած վճիռը և դիմումը թողնվել առանց քննության:

7) 10.07.2006 թվականին Լաուրա Ամիրյանի և Վիլեն Գաբրիելյանի միջև կնքվել է անճարժ գույքի առուվաճառքի դայանաագիր, որը վավերացվել է «Նոր Նորք» նոսարական սարաժֆի նոսարի կողմից:

8) Նվաճ ղայմանագրից ծագող իրավունքները 13.07.2006 թվականին գրանցվել են ՀՀ կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադաստրի ղեկական կոմիտեի Նոր Նորք սարաժֆային ստորաբաժանման կողմից և Վիլեն Գաբրիելյանին ու Լիլիթ Սևոյանին սրվել է Երևանի Մյասնիկյան դղողսայի թիվ 57/1 և 57/2 հասցեներում գտնվող անճարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի թիվ 2219651 վկայականը:

9) Արաբկիր և Քանաֆեռ-Չեյթուն համայնքների առաջին ասյանի դասարանի 01.09.2006 թվականի թիվ 2-1812 ֆաղաֆաղիական գործով կայացրած վճռով հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Եղիսաբեթ Ծերունի Ալավերդյանը հանդիսանում է Թամարա և Շամամ Պողոսյանների՝ Երևանի Մյասնիկյան դղողսայի թիվ 57/1 և 57/2 հասցեներում գտնվող անճարժ գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

4. Վճռաբեկ դասարանի դասառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նվաճ հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դասարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեկկյալ սլասնառաբանությանը:*

ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 163-րդ հոդվաժի 1-ին մասի համաճայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչվաժ ու դահողանվող իրավունքն է՝ իր հայեցողոթյամբ սիրողեկելու, օգսագործելու և ճնօրհնելու իրեն դասկանող գույքը:

Տիրադատման իրավունքը գույքը փաստացի տիրադատելու իրավաբանորեն ադախովված հնարավորությունն է: Տնօրինման իրավունքը գույքի ձակասագիրը որոշելու իրավաբանորեն ադախովված հնարավորությունն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն դասկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենսդրական չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով դրանցով սահմանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որդես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրադատման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Գործի փաստերի համաձայն՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է, որ Եղիսաբեթ Ալավերդյանը հանդիսանում է Թամարա և Շամամ Պողոսյանների ժառանգությունն ընդունած ժառանգ:

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին դասկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի դեպքում գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման: Չնայած այն հանգամանքին, որ Եղիսաբեթ Ալավերդյանը վիճելի ժառանգության իր մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր չի ստացել և դրանից ծագող վերջինիս սեփականության իրավունքը դեպքում գրանցում չի ստացել, այնուամենայնիվ, այդ գույքը դասկանում է Եղիսաբեթ Ալավերդյանին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի 16.06.2006 թվականի որոշմամբ դադարել է վիճելի գույքն օտարելու Լաուրա Ամիրջանի իրավունքը, Երևանի Արաբկիր և Քանախեռ-Չեյթուն համայնքների առաջին ասյանի դատարանը հիմնավոր կերպով 16.03.2006 թվականի վճռով անվավեր է ճանաչել նրա և Վիլեն Գաբրիելյանի միջև կնքված առուվաճառքի գործարքը և դրանից բխող՝ Վիլեն Գաբրիելյանի Լիլիթ Սևոյանի սեփականության իրավունքի գրանցումը, նկատի ունենալով, որ Լաուրա Ամիրջանը գործարքը կնքել է գույքն օտարելու օրինական հիմքերի բացակայությամբ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի դատախազանում նշված այն փաստարկին, թե Վիլեն Գաբրիելյանը հանդիսանում է վիճելի գույքի բարեխիղճ ձեռք բերող, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը սույն ֆաղափացիական գործով որևէ էական նշանակություն չունի հետևյալ դատաբանականությամբ:

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գույքը հասցումամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ադախ սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից սվյալ գույքը դատախազել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրադատման, կամ այն հավիճակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրադատումից դուրս է եկել այլ ճանադարհով անկախ նրանց կամից:

Նշված հոդվածից հետևում է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի դատախազներին հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու դատախազը մեծելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով դատախազանված չէ սեփականատերից՝ գույքը վերադարձնելու դատախազից, եթե գույքը վերջինիս տիրադատումից դուրս է եկել անկախ նրա կամից:

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին

դասկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի ղեկավար գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Եղիսաբեթ Ծերունի Ալավերդյանը ճանաչվել է Թամարա և Շամսադ Պողոսյանների՝ Երևանի Սյասնիկյան դողոսայի թիվ 57/1 և 57/2 հասցեներում գտնվող գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ: Փաստորեն, Լաուրա Ամիրյանի կողմից վիճելի գույքի օտարմամբ, Եղիսաբեթ Ալավերդյանի իրադատությունից այդ գույքը դուրս է եկել իր կամից անկախ դասաճանաչման:

Բացի այդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված դրամաներով: Այսպիսով, Վերաբեկյանի դատարանը վճիռ կայացնելիս խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածով սահմանված սեփականության անձեռնմխելիության իրավունքը, քանի որ Երևանի Արաբկիր և Քանափեռ-Չեյթուն համայնքների առաջին ասյանի դատարանը 01.09.2006 թվականի թիվ 2-1812 ֆաղափարակալ գործով կայացրած վճռով արդեն իսկ Եղիսաբեթ Ծերունի Ալավերդյանին ճանաչել է Թամարա և Շամսադ Պողոսյանների Երևանի Սյասնիկյան դողոսայի թիվ 57/1 և 57/2 հասցեներում գտնվող գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ: Նման դիրքորոշումն է արժանաչել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը մեկնաբանելիս՝ «Մեքսիկո» հունական նավթարդյունաբերական գործարաններն ընդդեմ Հունաստանի ֆաղափարակալ գործով:

Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկներին, որ Վերաբեկյանի դատարանը լուրջապես էր կիրառել ՀՀ ֆաղափարակալ օրենսգրքի 303-305-րդ հոդվածները, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վեճի սխալ լուծման դարազայում, Վերաբեկյանի դատարանը չէր կարող անվավերության հետևանքներ կիրառել, ինչը իրավաբաններն կիրառել է Դատարանը, որը բխել է վեճին ըստ էության ճիշտ լուծում սալուց:

2) *Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:*

ՀՀ ֆաղափարակալ դատարանի օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր աղյուցյուց գնահատում է գործում եղած բոլոր աղյուցյուցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ, սույն գործում առկա՝ Երևանի Արաբկիր և Քանափեռ-Չեյթուն համայնքների առաջին ասյանի դատարանի 01.09.2006 թվականի թիվ 2-1812 ֆաղափարակալ գործով կայացրած վճիռը և Վճռաբեկ դատարանի 16.06.2006 թվականի թիվ 3-1173(Ա) որոշումը Վերաբեկյանի դատարանի կողմից բազմակողմանիորեն չի ուսումնասիրվել և գնահատվել:

Փաստորեն, Վերաբեկյանի դատարանը, մանրամասն չուսումնասիրելով Լաուրա Ամիրյանի սեփականության իրավունքի գրանցման իրավական հիմքերը, մերժել է Եղիսաբեթ Ալավերդյանի հայցը՝ խախտելով ՀՀ ֆաղափարակալ դատարանի օրենսգրքի 52-րդ հոդվածի դատախազները, որի համաձայն՝ նախկինում ֆունկցիոնալ ֆաղափարակալ գործով օրինական ուժի մեջ մնած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ ֆունկցիոնալ կրկին չեն աղյուցյուցվում:

3) *Վճռաբեկ բողոքը երրորդ հիմնով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:*

ՀՀ ֆաղափարակալ դատարանի օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և

2-րդ կետերի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքերի հետևանքով գործի վերանայման հիմք են գործի համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ, չնայած հայտնի են եղել, սակայն նրանցից անկախ դատաճանաչման չեն ներկայացվել դատարան:

Նշված կետերի բովանդակությունից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներ կարող են ներկայացնել միայն գործին մասնակից դարձած անձինք, այդ հանգամանքները ղեկավար է անհայտ եղած լինեն գործին մասնակցող անձանց, կամ հայտնի լինեն, սակայն դրանց ներկայացումը դատարան անհնար եղած լինի և սլյալ հանգամանքները գործի համար ղեկավար է ունենան էական նշանակություն:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի նոր երևան եկած հանգամանքի վերաբերյալ դատաճառաբանությանը, առաջին վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան ֆաղափ Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դատարանի 15.03.2006 թվականի որոշումը չի կարող հանդիսանալ որդես նոր երևան եկած հանգամանք, քանի որ սլյալ դատարանի թիվ 2-ԱԱ/2006թ-ի ֆաղափաղական գործով հայցի ադախովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը ներկայացվել է հայցվոր Երիսաբեթ Ալավերդյանի կողմից, այսինքն՝ նրան ի սկզբանե հայտնի է եղել գույքը արգելանքի տակ գտնվելու հանգամանքը, որն, ի դեպ, վերաբերում է դատարանում որդես ադախույց չի ներկայացվել:

Մինչդեռ հանգամանքը կարող է ճանաչվել նոր երևան եկած, եթե այն գործի ըստ էության բնութագրի ժամանակ գոյություն է ունեցել, սակայն դատավարությանը մասնակցող անձի համար օբյեկտիվ դատաճանաչման անհնարին է եղել դրա ներկայացումը դատարան:

Ուստի վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի 15.03.2006 թվականի որոշումը սույն գործի համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանք չի կարող ճանաչվել ՀՀ ֆաղափաղական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դատաճանաչման չի չի սլյալում հիմքով:

Միաժամանակ վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Արաբկիր և Քանափեռ-Չեյրոն համայնքների առաջին ասյանի դատարանը սույն գործով յուրաքանչյուր ադախույց գնահատել է գործում եղած բոլոր ադախույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ և 16.03.2007 թվականին կայացրել է հիմնավորված և օրինական վճիռ: Հետևաբար, ելնելով դատական բնութագրի արդյունավետության սկզբունքից, վճռաբեկ դատարանը սույն գործով հարկ է համարում կիրառել ՀՀ ֆաղափաղական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ասյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ սալու լիազորությունը, քանի որ առաջին ասյանի դատարանի կողմից սույն գործով կայացված հիմնավոր և օրինական վճիռի առկայության դատարաններում բացակայում է գործի նոր բնութագրի անհրաժեշտությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերը վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում և դրանց առկայությունը բավարար է դիտում ՀՀ ֆաղափաղական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների ուժով վերաբերող դատարանի 08.06.2007 թվականի թիվ 07-1905 ֆաղափաղական գործով կայացրած վճիռը մասնակիորեն բեկանելու և Արաբկիր և Քանափեռ-Չեյրոն համայնքների առաջին ասյանի դատարանի 16.03.2007 թվականի թիվ 2-576 ֆաղափաղական գործով հիմնավորված և դատաճառաբանված վճիռն օրինական ուժ սալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափաղական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ ֆաղաֆացիական վերաքննիչ դատարանի 08.06.2007 թվականի թիվ 07-1905 ֆաղաֆացիական գործով կայացրած վճիռը՝ ըստ հայցի Վիլեն Գաբրիելյանի ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի և Գոհար Պողոսյանի՝ սեփականափրոջ իրավունքի խախտումը վերացնելու դատանքի մասը և ըստ հայցի Եղիսաբեթ Ալավերդյանի ընդդեմ Լաուրա Ամիրջանի, Վիլեն Գաբրիելյանի, Լիլիթ Սևոյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անձարժ գույքի կադաստրի դեպարտման կոմիտեի Չեյթուն սարածֆային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, անձարժ գույքի առուվաճառքի դայմանագիրը, դրա հիման վրա կադաստրի միասնական մասյանում կասարված գրանցումն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հեճևանքներ կիրառելու դատանքների մասերը և այդ մասերով օրինական ուժ չալ Երևանի Արաքիլի և Քանաֆեռ-Չեյթուն համայնքների առաջին աճյանի դատարանի 16.03.2007 թվականի թիվ 2-576 ֆաղաֆացիական գործով կայացրած վճռին:

2. ՀՀ ֆաղաֆացիական վերաքննիչ դատարանի 08.06.2007 թվականի թիվ 07-1905 ֆաղաֆացիական գործով կայացրած վճիռը՝ ըստ հայցի Լաուրա Ամիրջանի ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի, Գոհար Պողոսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ-սեփականաճեր ճանաչելու դատանքի մասով և ըստ հայցի Եղիսաբեթ Ալավերդյանի ընդդեմ Լաուրա Ամիրջանի, Վիլեն Գաբրիելյանի, Լիլիթ Սևոյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անձարժ գույքի կադաստրի դեպարտման կոմիտեի Չեյթուն սարածֆային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մնում հրադարակման դատից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrudroptjuni
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrudroptjuninler*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական վերաբնիչ
դատարանի վճիռ

Քաղաֆաղիական գործ թիվ 3-1435 (ՎԳ)
2007թ.

Քաղաֆաղիական գործ թիվ 07-1155/2007թ.
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան
դատավորներ՝ Գ.Մասինյան
Գ.Վարդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալալալը (ալալուիե՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահող դատավոր Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցող դատավորներ Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒԻԲՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի հոկտեմբերի 10-ին

դռնբաղ դատական նիստում, ֆննելով Մանվել Մարիբեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղաֆաղիական վերաբնիչ դատարանի 06.07.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Վոլոդյա և Միլա Նիկողոսյանների ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մանվել Մարիբեկյանների և Քնարիկ Աղազարյանի՝ բնակալառնության օգազորնման իրավունքը փոխհասնոցմամբ դադարեցնելու և բնակելի սնից վարելու դահանջի մասին, ըստ հակընդդեմ հայցի Մանվել Մարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի ընդդեմ Վոլոդյա և Միլա Նիկողոսյանների՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեֆականության իրավունքը ձանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկալազիրը և սեֆականության իրավունքի վկալալանը մասնակի անվավեր ձանաչելու դահանջների մասին, ինչդես նաև ըստ Մանվել Մարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի հայցի ընդդեմ Վոլոդյա և Միլա Նիկողոսյանների՝ հողալալառնի նկալամամբ սեֆականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ձանաչելու դահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատալարական նախադասմությունը.

Դիմելով դատարան՝ Վոլոդյա և Միլա Նիկողոսյանները դահանջել են Երևան ֆաղաֆի Բաֆֆու փողոցի թիվ 51 սան նկալամամբ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մանվել Մարիբեկյանների, Քնարիկ Աղազարյանի ունեցած բնակելի արառնության օգազորնման իրավունքները 738.922 (յոթ հարյուր երեսունուր հազար ինը հարյուր ֆասներկու) ՀՀ դրամ գումարի փոխհասնոցմամբ դադարեցնել և նրանց վարել վերոգրալ բնակելի սնից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մանվել Մարիբեկյանը և Քնարիկ Աղազարյանը դահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ձանաչել իրենց

սեփականության իրավունքը Բաֆֆու փողոցի թիվ 51 սան բակում կառուցված բնակելի սենյակի և դրան կից օժանդակ հարմարությունների սակ զգնվող 48 քմ հողամասի նկատմամբ և այդ մասով անվավեր ճանաչելով հակընդդեմ հայցով դասասխանողներ՝ Վոլոդյա և Միքա Նիկողոսյաններին սրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի գրանցման վկայականը:

Առանձին հայցով դիմելով դատարան՝ Մանվել Սարիբեկյանը և Քնարիկ Աղազարյանը դատանջել են մասնակի անվավեր ճանաչել Բաֆֆու փողոցի թիվ 51 սան նկատմամբ անճարժ գույքի կադաստրի գրանցամասյանում դասասխանողների՝ Վոլոդյա և Միքա Նիկողոսյանների սեփականության իրավունքի գրանցումը:

Երևանի Արաբկիր և Քանախեռ-Չեյթուն համայնքների առաջին ասյանի դատարանի 26.12.2006 թվականի վճռով Վոլոդյա և Միքա Նիկողոսյանների հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է դադարեցնել Երևան ֆաղափ Բաֆֆու թիվ 51 սան նկատմամբ Սոֆիկ, Մելանյա և Սամվել Սարիբեկյանների բնակելի սարածության օգտագործման իրավունքը 443350 (չորս հարյուր քառասուններեք հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարի փոխհատուցմամբ: Հայցը մնացած մասով մերժվել է:

Նշված վճռով Մանվել Սարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի հակընդդեմ հայցը բավարարվել է:

Երևանի Արաբկիր և Քանախեռ-Չեյթուն համայնքների առաջին ասյանի դատարանի 19.03.2007 թվականի վճռով Մանվել Սարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի հայցը բավարարել է:

ՀՀ ֆաղափաղիական վերսննիչ դատարանի 02.05.2007 թվականի «Թիվ 07-1155 և թիվ 07-1960 ֆաղափաղիական գործերը մեկ վարություն միացնելու մասին» որոշմամբ նշված ֆաղափաղիական գործերը միացվել են:

ՀՀ ֆաղափաղիական վերսննիչ դատարանի 06.07.2007 թվականի վճռով Վոլոդյա և Միքա Նիկողոսյանների հայցը բավարարվել է, իսկ Մանվել Սարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի հակընդդեմ հայցը և առանձին ներկայացված հայցը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանվել Սարիբեկյանը:

Վճռաբեկ բողոքին դասասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դատանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի աստիճաններում ներհոիւցյալ հիմնավորումներով.

ՀՀ ֆաղափաղիական վերսննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղափաղիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ ֆաղափաղիական օրենսգրքի 172-րդ, 280-րդ և ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ ֆաղափաղիական օրենսգրքի 163-րդ, 178-րդ, 274-րդ և 277-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառվեին, խախտել է ՀՀ ֆաղափաղիական դասավարտության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված ղնդումը դասճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Հայցվորների հայրը՝ Բաբկեն Նիկողոսյանը, որը հանդիսանում է Բաֆֆու փողոցի թիվ 51 հասցեի հողամասի սեփականատերը, 1960-ական թվականներին առաջարկել է Սարիբեկ Սարիբեկյանին իր ընտանիքի անդամների հետ նրա կողմից չօգտագործվող հողամասում կառուցել տուն՝ բնակության նպատակով: Բաբկեն Նիկողոսյանը երբևիցե չի խոչընդոտել Սարիբեկ Սարիբեկյանի կողմից հողասարածի օգտագործմանը:

Բաբկեն Նիկողոսյանը ՀՀ ֆաղափաղիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի իմաստով իր գործողություններով փաստացի հրաժարվել է հողամասի այդ

մասի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքից, իսկ Սարիբեկ Սարիբեկյանն ու նրա իրավահաջորդներն իրենց հերթին Բաբկեն Նիկողոսյանի կողմից իրենց սրամաղրված հողասարածի այդ մասի վրա կառուցել են բնակելի տուն և բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ իրադրեցնելով այդ գույքը՝ դարձել են դրանով փաստացի զբաղեցրած հողամասի սեփականատերեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դատախազել է բեկանել ՀՀ ֆաղափարական վերահսկիչ դատարանի 06.07.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երբաղխարհրդի գործովնի հազվեցեխիսնիկական բյուրոյի 31.08.1988 թվականի թիվ 937 սեխիսնիկական անձնագրի համաձայն՝ Բաբկեն Նիկողոսյանին սեփականության իրավունքով տասկանել է Արաբկիի 44 փողոցի (քննարկվող գործով՝ Բաֆֆու փողոցի) թիվ 51 հասցեում գտնվող տունը և օգտագործման իրավունքով 918 քմ հողամասը: 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հողվածի 4-րդ մասի ուժով նշված հողամասը դարձել է Բաբկեն Նիկողոսյանի սեփականությունը:

2) Երևանի Բաֆֆու փողոցի բնակիչներ Ավեխիֆ և Էմմա Աղամիրյանների, Արաբյա Հակոբյանի, Վոլոդյա Սեյրանյանի, Աղվան Գրիգորյանի և Զիրավարդ Զազյանի 29.11.2006թ. հայտարարության համաձայն՝ 1964 թվականին Բաբկեն Նիկողոսյանը Սարիբեկ Սարիբեկյանին գյուղից սեղափոխվելու նդասակով Երևանի Բաֆֆու 51 հասցեի հողամասի որոշ հասկված հասկացրել է նրան բնակելի տուն կառուցելու և բնակություն հասսասելու համար:

3) «Շենքերի, շինությունների դատադանում և սդասարկում» ՓԲԸ-ի սեփական սնասիրությունը սդասարկող թիվ 12 սեղամասի 21.11.2006թ. սեղեկանքի համաձայն՝ Մանվել Սիրաբեկյանը 1964 թվականից բնակվում է Երևանի Բաֆֆու 51 հասցեում:

4) Սարիբեկ Սարիբեկյանի կողմից կասարվել է 1994-1997 թվականների, 1999 և 2004 թվականների համար Երևանի Բաֆֆու 51 հողի հարկի վճարումները (գ.թ. 16-21):

5) Բաբկեն Նիկողոսյանը մահացել է 04.03.1996 թվականին: Բաբկեն Նիկողոսյանի մահվանից հետո բացված ժառանգական գույքն ընդունած ժառանգներ են ձանաչվել նրա որդիները՝ Միշա և Վոլոդյա Նիկողոսյանները, որոնք հավասար բաժիններով ժառանգել են Բաֆֆու փողոցի թիվ 51 հասցեում գտնվող Բաբկեն Նիկողոսյանին տասկանող անշարժ գույքը: Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններին 17.01.2006 թվականին սրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական, որում հողամասի չափը նշվել է 0,3386 հա:

6) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադասրի դեսական կոմիսեի Արաբկիի սարածֆային ստորաբաժանման 08.12.2006 թվականի թիվ Ս/Շ Ել-3766^Ա գրության համաձայն՝ Բաֆֆու 51 հասցեի հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 388,6 քմ (երեք հարյուր ուստունուստ ամբողջ վեց սասնորդական), որից ֆաղափարցիներ Մանվել Սարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի ինքնական զբաղեցրած հողասարածքը կազմում է 24,3 քմ (ֆասնչորս ամբողջ երեք սասնորդական), որը ծանրաբեռնված է ինքնական շինություններով. շինությունների ներքին մակերեսների գումարը կազմում է 22,9 քմ (ֆասներկու ամբողջ ինը սասնորդական):

4. Վճռաբեկ դասարանի դասճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դասարանը գտնում է, որ

բողոքն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեղմերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչդեպ նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Սույն օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ ֆաղաֆացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն դասկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնդպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի սիրադեմումից, օգտագործումից և սնուցումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք դադարեցնելու մտադրության:

ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆաղաֆացին կամ իրավաբանական անձն, որն անբարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն օտար անձի ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ սիրադեմում է որդես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի դրամային արժեքի վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից՝ **այդ իրավունքի դադարման** միջոց:

ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերադրամայինների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. սիրադեմումը դեմք է լինի բարեխիղճ: Տիրադեմման բարեխիղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրադեմմանը անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրադեմմանը դեմք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրադեմողի մոտ դեմք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրադեմումը դեմք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրադեմողին կարող է սալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրադեմելու է որդես սեփականություն,

2. փաստացի տիրադեմողը գույքը դեմք է տիրադեմի որդես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրադեմողը դեմք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ սանի դրա դաժարման համար, ինչդեպ իր սեփական գույքի դեմքում: Անձը դեմք է գույքը տիրադեմի ինչդեպ սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում,

3. տիրադեմումը դեմք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրադեմումը չդեմք է ընդհատվի: Տիրադեմումը կարող է ընդհատվել կամ տիրադեմողի կամով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրադեմումից (գույքը դուրս է գալիս նրա տիրադեմումից), կամ գույքի սեփականատերից կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն,

4. տիրադեմումը դեմք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրադեմողը գույքը չդեմք է տիրադեմի երրորդ անձանցից գաղտնի եղանակով:

Սույն ֆաղաֆացիական գործով Երևանի Րաֆֆու փողոցի բնակիչներ՝ Ավետիսի և

Էմմա Աղամիրյանների, Արաբյա Հակոբյանի, Վոլոդյա Մեյրանյանի, Աղվան Գրիգորյանի և Ջիրավարդ Չազյանի 29.11.2006թ. հայտարարության համաձայն՝ 1964թ. Բաբկեն Նիկողոսյանը Սարիբեկ Սարիբեկյանին գյուղից տեղափոխվելու նպատակով Երևանի Բաֆֆու 51 հասցեի հողամասի որոշ հատված հասկացրել է բնակելի տուն կառուցելու և բնակություն հաստատելու համար: Իսկ «Շենքերի, շինությունների դահլիճում և սոյաբույսերում» ՓԲԸ-ի սեփական սնասիրությունը սոյաբույսերով թիվ 12 տեղամասի 21.11.2006թ. տեղեկանքի համաձայն Մանվել Սիրաբեկյանը 1964 թվականից բնակվում է Երևանի Բաֆֆու 51 հասցեում: Սարիբեկ Սարիբեկյանի կողմից կատարվել է 1994-1997 թվականների, 1999 և 2004 թվականների համար Երևանի Բաֆֆու 51 հողի հարկի վճարումները:

Վերոնշյալ հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտարկել է բավարար հիմք արձանագրելու համար, որ գույքի փաստացի տիրապետող Մանվել Սիրաբեկյանը 10 տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ և որդես սեփական գույք տիրապետել է վեճի առարկա հողատարածքը, ինչի ուժով դրա նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում այն հանգամանքը, որ Սարիբեկյանի Աղազարյանի կողմից զբաղեցված հողատարածքի՝ **10 տարի անընդմեջ** տիրապետումը ուղղակիորեն հիմնավորվում է Երևանի Բաֆֆու փողոցի բնակիչների և «Շենքերի, շինությունների դահլիճում և սոյաբույսերում» ՓԲԸ-ի սեփական սնասիրության հայտարարությամբ, որոնցում նշվում է Մանվել Սիրաբեկյանի կողմից 1964 թվականից գույքի տիրապետման փաստը, **բացահայտությունը** հիմնավորվում է տիրապետման մասին իրենց իրազեկվածությամբ (հողատարածքի սեփականատերից և նույն փողոցի բնակիչների), այսինքն՝ տիրապետումը չի եղել հողատարածքի սեփականատերից և այլ անձանցից գաղտնի եղանակով, իսկ **բարեխղճությունը** հիմնավորվում է այն հանգամանքով, որ հողամասի սեփականատեր Բաբկեն Նիկողոսյանը անձամբ է հրավիրել Մանվել Սիրաբեկյանին և հասկացնելով առանձին հողատարածք թույլատրել այդ հողամասի վրա կառուցել բնակելի տուն: Այսինքն՝ հողատարածքի սեփականատերից կողմից Մանվել Սիրաբեկյանին **տուն կառուցելու նպատակով** հողամաս սրամադրելը, վերջինիս բավարար հիմք է սվել ենթադրելու, որ նա այդ հողատարածքը տիրապետելու է որդես սեփական գույք, իսկ Բաբկեն Նիկողոսյանը, թույլատրելով կառուցել տուն և 1991 թվականից սկսած (այն դահլիճ երբ նա դարձել է հողատարածքի սեփականատեր) այն հետ չդահլիճելով, փաստացի կատարել է այնպիսի գործողություններ, որոնք վկայում են իր կողմից այդ հողամասից հրաժարվելու մասին:

Ինչ վերաբերում է վեճի առարկա հողատարածքը **որդես սեփական գույք տիրապետելուն**, առաջ դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ Մանվել Սիրաբեկյանը մասնակցել է գույքի կառավարմանը՝ կառուցել է տուն, հոգ է տարել դրա դահլիճում համար՝ վճարելով հողի հարկի գումարները:

Ինչ վերաբերում է սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու դահլիճին, առաջ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն հարցին, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ դարձնակող փաստաթուղթ, և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անհարժ գույքի գրանցման մասյանի գրանցումը (իրավական հիմնավորումը տես Միսիանի ֆաղափարտարան ընդդեմ Շահեն Սարգսյան, երրորդ անձինք ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Միսիանի ստորաբաժանում, Կորյուն Օհանյան, 26.10.2006 թվական, ֆաղափարտարան գործ թիվ

3-1920/ՎԳ (2002 թվականի օգոստոսի 26-ին կնքված դայմանագիրը լուծելու, Շահեն Սարգսյանի և Կորյուն Օհանյանի միջև 11.09.2002 թվականին կնքված անճարժ գույքի առուվաճառքի դայմանագիրը, ինչդեպ նաև Կորյուն Օհանյանին սրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու դահանջներով)):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն ֆաղափարակալ գործով անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, թե երբ է ներկայացվել սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադաշտանը:

Սույն ֆաղափարակալ գործով սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադաշտանը ներկայացվել է 2006 թվականի նոյեմբերի 16-ին կայացած դատական նիստի ընթացքում, այսինքն՝ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման կայացումից 20 օր անց: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ ժամանակահատվածը բավարար չէր իրավախախտության որակաչի կայուն Վճռաբեկ դատարանի համադատաստան դիրքորոշման արմատավորման համար: Հետևաբար, այդ դայմաններում հայցվորը, ողջամտորեն կարող էր բարոնակել ենթադրել, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը վիճարկելով, ըստ էության վիճարկում է սեփականության իրավունքի գրանցումը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն վեճով սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու դահանջի նկատմամբ կարող է անբարենպաստ դատավարական հետևանքներ առաջացնել հացվորի համար: Մասնավորապես, նա սխիդված կլինի նույն իրավունքի դատարանության համար կրկին դիմել դատարան, այս անգամ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու դահանջով:

Վճռաբեկ դատարանը մնան իրավիճակը դիտում է որդես անձի արդար դատարանության իրավունքի ոչ արդյունավետ իրացման օրինակ, և այդ իսկ դատաճառով հնարավոր է համարում սույն գործով ներկայացված սեփականության իրավունքի գրանցման վկայականի անվավերության դահանջը նոր ֆննության ժամանակ դիտել որդես սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու դահանջ:

Այսդիտով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ ֆաղափարակալ դատարարություն օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափարակալ դատարարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղափարակալ վերաֆննիչ դատարանի 06.07.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել ՀՀ ֆաղափարակալ վերաֆննիչ դատարան՝ այլ կազմով նոր ֆննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrtaqrotyuny
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrtaqrotyuninler*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ սննտական դատարանի վճիռ
ֆաղաֆաղական գործ թիվ Տ-1915
Նախագահող դատավոր՝ Կ.Զիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ 3-1462(ՏԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղական դալարը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒԻՐՉՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2007 թվականի հոկտեմբերի 10-ին

դռնբաց դատական նիստում, ֆննելով ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային
դեղական ծառայության վճռաբեկ բողոքը ՀՀ սննտական դատարանի (այսուհետ՝
Տննտական դատարան) 19.06.2007 թվականի թիվ Տ-1915 ֆաղաֆաղական գործով
կայացրած վճռի դեմ՝ ըստ «Ուռնելի» ՓԲԸ-ի դիմումի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր
Հարկային դեղական ծառայության Ծահույանի հարկային տեսչության (այսուհետ՝
Ծառայություն)՝ 22.01.2007 թվականի թիվ 1022992 ստուգման ակտն անվավեր ճանաչելու
դախանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1.Գործի դատարական նախադասմությունը.

Դիմելով դատարան՝ «Ուռնելի» ՓԲԸ-ն դախանջել է անվավեր ճանաչել
Ծառայության 22.01.2007 թվականի թիվ 1022992 ստուգման ակտը:

Տննտական դատարանի 19.06.2007 թվականի վճռով «Ուռնելի» ՓԲԸ-ի դիմումը
քավարարվել է մասնակի՝ թիվ 1022992 ակտի 1-ին և 4-րդ կետերը ճանաչվել են անվավեր և
Ծառայությանը դարտադրվել է վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 7-օրյա ժամկետում
կատարելու վերահազվարկ և «Ուռնելի» ՓԲԸ-ի անձնական հազվի ֆարտից դուրս գրելու ակտի
1-ին և 4-րդ կետերի հիման վրա հազվեգրված լրացուցիչ հարկային դարտավորություններ
գումարները:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքին դատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, վասարկները և դախանջը.

Սույն վճռաբեկ բողոքը ֆննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներհիլիլյալ
հիմնավորմամբ.

*Դատարանը չի կիրառել ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն
որոշմամբ հաստատված Կարգի 21-րդ կետը, «Ծահույանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ*

հողվածի 2-րդ մասի «ժա» կեսը, 33-րդ հողվածը, «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հողվածի 1-ին կեսը, 43-րդ հողվածը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հողվածները: Բողոք բերած անձը նշված դեպքերում ղախտներ են հետևյալ փաստարկներով.

ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի) դեբիտորական դրամադրամային հնարավոր կորուստների դիտարկում (դիտարկում) ձևավորման դեբիտորական և կրեդիտորական դրամադրամային անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ և 22-րդ կետերի համաձայն՝ կրեդիտորական դրամադրամային կեսանցված դառնալու 366-րդ օրվանից համարվում է անհուսալի, իսկ անհուսալի ճանաչված կրեդիտորական դրամադրամային ենթակա են դուրսգրման՝ անհուսալի դառնալու հաշվետու տարին: Դուրս գրված անհուսալի կրեդիտորական դրամադրամային հաշվի է առնվում կազմակերպության հաշվետու տարվա հարկվող բաժնույթը (վնասը) որոշելիս՝ որդես եկամուտ: Ստուգմամբ դարգվել է, որ «Ունեմի» ՓԲԸ-ի կրեդիտորական դրամադրամային 01.01.2005 թվականի դրությամբ կազմել է 15.077.100 դրամ, որից 5.537.600 դրամը՝ համաձայն վերը նշված կարգի՝ համարվել է անհուսալի: Ստուգմամբ դարգվել է նաև, որ 7.660.000 դրամը ընկերության կրեդիտորական դրամային է «Երևանի էլեկտրակայան» ՊՓԲԸ-ին և նշված կրեդիտորական դրամադրամային ՀՀ սննդամթերքի դասարանի 17.01.2006 թվականի թիվ S-1028 ֆադայագիական գործով կայացրած վճարի համաձայն՝ 2005 թվականի հաշվետու տարվա համար ճանաչվել է հայցային վաղեմության ժամկետը լրացված դրամադրամային (նշված 7.660.000 դրամը հաշվադատարեն ձևակերտվել է «Ունեմի» ՓԲԸ-ի կողմից): Փաստորեն, 2005 թվականի ընթացքում «Ունեմի» ՓԲԸ-ն 7.660.000 դրամի չափով ունեցել է դրամադրամայինների նվազում, որը, համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հողվածի «ժա» կեսի՝ որդես դրամադրամայինների ներումից ստացվող եկամուտ, ենթակա է ներառման համախառն եկամտի մեջ: Համաձայն «ՀՀ հաշվադատական հաշվառման սահմանադրամային մասին» ՀՀ կառավարության 22.12.2005 թվականի թիվ 2159-Ն որոշման 10-րդ սահմանադրամային (հաշվադատական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեբիտոր)՝ ընկերությունը հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող ճգնաժամային ենթակա փոփոխությունները մինչև ֆինանսական հաշվետվությունը հարկային մարմինն ներկայացնելու ժամանակահատվածը չի արձանագրել 2005 թվականի ֆինանսական հաշվետվություններում, ուստի «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հողվածի համաձայն՝ հաշվարկվել է շահութահարկի գծով հարկի գումար՝ 2.639.500 դրամ և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հողվածներով՝ տույժ և տուգանք, ընդհանուր՝ 3.732.200 դրամ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում դրամական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում հաշվարկվող գործարքների գործառնությունների (հարկվող երջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (դրամադրամային) են՝ բացառությամբ սույն հողվածի 1-ին կեսում սահմանված դեբիտորի: Այդ դեբիտորից են՝ 2005 թվականի ընթացքում միանվագ գործարքի համար 100.000 դրամը, իսկ հաշվետու ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 1 միլիոն դրամը: Ստուգման ընթացքում ստուգողներին ներկայացված փաստաթղթերից դարգվել է, որ ընկերությունը 2005 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում հարկային ռեզուլտատներ ներկայացրած ԱԱՀ-ի հաշվարկներում ՀՀ սարածքում ձեռք բերված ադրամայինների և մասնագրված ծառայությունների գծով ԱԱՀ-ի հաշվանցման ենթակա գումարների մեջ է ընդգրկել նաև այն գումարները, որոնց համար սվյալ եռամսյակում բանկային փոխանցումներ չի կատարել և այդ

գումարները գերազանցել են «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված թույլատրելի չափը: Հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները՝ ընկերությանը ակտի 4-րդ կետով ԱԱՀ-ի գծով զանձման է ենթակա լրացուցիչ 2.146.200 դրամ գումար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը ղախանջել է բեկանել սնեստական դասարանի վճիռը՝ դիմումի բավարարման մասով:

3. Վճռաբեկ բողոքի ֆինուքյան համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի ֆինուքյան համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային ղեսական ծառայության Ըահումյանի հարկային սեսչության 22.01.2007 թվականի թիվ 1022992 ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ 01.01.2005 թվականի դրությամբ «Ուռենի» ՓԲԸ-ի կրեդիտրական դարսբերից 5.537.600 դրամը 2005 թվականին դարձել է անհուսալի:

2) «Երևանի էլեկտրացանց» ՊՓԲԸ-ի նկասմամբ դիմողի ունեցած 7.660.000 դրամ կրեդիտրական դարսբը ՀՀ սնեստական դասարանի 17.01.2006 թվականի վճռով 2005 թվականի հաւվեսու սարվա համար ձանաչվել է որղես հայցային վաղեմության ժամկեսը լրացած դարսավորություն:

3) ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային ղեսական ծառայության Ըահումյանի հարկային սեսչության 22.01.2007 թվականի թիվ 1022992 ակտի 4-րդ կետով արձանագրվել է, որ «Ուռենի» ՓԲԸ-ին «Ավելյացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կեսի խախտում է վերագրվել, ֆանի որ «Ուռենի» ՓԲԸ-ի կողմից 2005 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում հարկային սեսչություն ներկայացված ԱԱՀ-ի հաւվարկներում որղես հաւվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներ են ցույց սրվել ՀՀ սարածում ձեռք բերված այնղիսի աղրանցների և ծառայությունների գծով հարկային հաւվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց դիմաց բանկային փղխանցումներ չեն կասարվել: Այս կաղակցությամբ սուղողները հաւվարկել և դիմողին լրացուցիչ վճարման են առաջաղրել 985.500 դրամ ԱԱՀ, 569.500 դրամ սույժ և 591.200 դրամ սուղանք:

4. Վճռաբեկ դասարանի դասձառաբանությունները և եղրահանցումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դասարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պասձառաբանությամբ.

Վճռաբեկ դասարանը գտնում է, որ Ծառայության 22.01.2007 թվականի թիվ 1022992 ակտի 1-ին կետում կասարված հղումը՝ 5.537.600 դրամ կրեդիտրական դարսբը 2005 թվականին անհուսալի դարձած լինելու մասին, արձանագրվել է դասաւ հիմքերի բացակայությամբ, ֆանի որ 01.01.2005 թվականի դրությամբ դարսբի առկայության փաստը, որը դասաֆնության ընթացղում հասսասվել է նաև «Ուռենի» ՓԲԸ-ի գլխավոր հաւվաղաի կողմից սուղողներին սրամաղրված սեղեկանղով, բավարար չէ դարսբի կեսանցի օղր որոեղելու համար (նւված սեղեկանղը որնէ սեղեկություն չի դարունակում կեսանցի կոնկրես օղրա մասին), իսկ կեսանցի օղր հայցնի չլինելու դեղղում հնարավոր չէ որոեղ այղ դարսբն անհուսալի դառնաղու օղր:

ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որումամբ հասսասված «Կաղանկերղությունների (բացաղությամբ բանկերի) դեբիտրական դարսբերի հնարավոր կորուսների ղախուսի (ղախուսաֆղղի) ձևավորման դեբիտրական և կրեդիտրական դարսբերի անհուսալի ձանաչման և դորագղման» կարղի (այսղուես՝ Կարղ) 21-րդ կեսի

համաձայն՝ կրեդիտորական դարձվելու կեսանցված դառնալու 366-րդ օրվանից համարվում է անհուսալի: Նույն Կարգի 4-րդ կետի համաձայն՝ կրեդիտորական դարձվելու համարվում է կեսանցված, եթե այն չի մարվել Կարգի 2-րդ կետում նշված հիմքերով (դրամանագրով, օրենսդրությամբ կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով) սահմանված ժամկետում, ընդ որում, կրեդիտորական դարձվելու մարման ժամկետը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվելու դեպքում կրեդիտորական դարձվելու համարվում է կեսանցված նոր ժամկետում չմարելու դեպքում, իսկ մարման ժամկետ սահմանված չլինելու և ցուցահանջ կրեդիտորական դարձվելու դեպքում՝ այդ դարձվելու առաջացնող գործարքի (գործառնության փաստի) կասարման օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում չմարվելու դեպքում: Վկայակոչված նորմերում դարձանակվող բառերի առաջին նշանակությունից ակնհայտ է, որ կրեդիտորական դարձվելու անհուսալիության մասին դատարանները անելու համար անհրաժեշտ է սույնը ստեղծելություններ ունենալ այդ դարձվելու ծագման հիմքերի և մարման ժամկետի մասին, որոշիչ ստեղծելությունների բացակայությունը բացառում է դարձվելու կեսանցման փաստի ճշգրիտ արձանագրման հնարավորությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ վիճելի դարձվելու անհուսալի է համարվել 2005 թվականի դրությամբ: Իսկ դարձվելու կեսանցված նորմերում համար անհրաժեշտ է նախ դարձվել դարձվելու մարման վերջնաժամկետը: Իսկ վերջնաժամկետը նորմերում համար անհրաժեշտ է համադասարանական աղյուսակով, որով կարող է հաստատվել դարձվելու սրամադրման օրվա և այն մարելու ճշգրիտ ժամկետը: Միայն այդպիսի և հնարավոր նորմերով դարձվելու կեսանցի օրը, իսկ դրա հիման վրա՝ դարձվելու անհուսալի դառնալու դեպքում:

Վերոնշյալ հիմնավորումներով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների խախտման մասին բողոքի փաստարկեր Վճռաբեկ դատարանին անհիմն է համարում, քանի որ եթե հայտնի չէ դարձվելու առաջացման և մարման ճշգրիտ ժամկետը, առաջ խոսք չի կարող գնալ դրա կոնկրետ ամսաթվի դրությամբ որդես անհուսալի դարձվելու ճանաչելու և դրա հետևանքով հարկային ենթադրյալ դարձվելու դրամային չկասարման համար հաշվարկված սույժերի և սուգանքների մասին:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Ծառայության 22.01.2007 թվականի թիվ 1022992 ակտի 1-ին կետի ղեկումն այն մասին, որ «Երևանի էլեկտրատրանսպորտի ՊՓԲԸ-ի նկատմամբ «Ուռեմի» ՓԲԸ-ի ունեցած 7.660.000 դրամ կրեդիտորական դարձվելու 2005 թվականի հաշվետու տարվա համար ճանաչվել է որդես հայցային վաղեմության ժամկետը լրացած դարձվելու դրամային, չի բխում Տնտեսական դատարանի 17.01.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի բովանդակությունից, քանի որ նշված վճռի համաձայն՝ 7.660.000 դրամ գումարի մասով դարձվելու առաջացել է մինչև 2002 թվականը և դարձվելու արդյունքում իր իրավունքի խախտման մասին իմացել է մինչև 2002 թվականը:

Ինչ վերաբերում է Ծառայության 22.01.2007 թվականի թիվ 1022992 ակտի 4-րդ կետին, առաջ նշված կետով «Ուռեմի» ՓԲԸ-ին վերագրված խախտումը արձանագրվել է դատաճառ հիմքերի բացակայությամբ, քանի որ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի երկրորդ մասի՝ արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրառայության տարածման իրականացված գործարքների մասով ոչ բանկային փոխանցումներով վճարված գումարները հաշվանցվում են, եթե աղյուսակների մասնակարարման և ծառայությունների մատուցման գործարքի գումարը (առանց ավելացված արժեքի հարկի)՝ 2005 թվականի ընթացքում միանվագ գործարքի համար չի գերազանցում 100.000 ՀՀ դրամը, իսկ հաշվետու ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ մեկ միլիոն դրամը:

Սույն գործի փաստերից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման ակտում նշված սահմանափակումների դահանջները «Ուռենի» ՓԲԸ-ի կողմից խախտված լինելու հանգամանքը հիմնավորված չէ, իսկ դրա վերաբերյալ որևէ հիմնավորում դատարանին չի ներկայացվել: Հետևաբար, սույն բողոքի՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետը և 43-րդ հոդվածը չկիրառելու վերաբերյալ հիմքը Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, քանի որ Տնտեսական դատարանը ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի դահանջներին համադասասխսան, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է գործում առկա բոլոր աղացույցները և կայացրել է հիմնավոր և դասճանաչանված վճիռ՝ վեճին սալով ըստ էության ճիշտ լուծում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ տնտեսական դատարանի 19.07.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարսկման դասից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ Տնտեսական դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ S-2153/2007թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Զիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ 3-1489(ՏԴ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղափացիական դալարը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐԶՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի հոկտեմբերի 10-ին

դռնբաց դատական նիստում, ֆիննելով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 17.07.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ «Ս.Մ.ԱՆԱՍՏԱՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և Անաստաս Սեդրակյանի՝ թայմանագրերի լուծման և գումարի բռնագանձման դաժանագրերի մասին,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1. Գործի դատարանական նախադասնությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը դաժանագրել է լուծել 23.03.2006 թվականին Ընկերության հետ կնքված թիվ 066546 հիմնական վարկային թայմանագիրը, ինչպես նաև 24.03.2006 թվականին կնքված թիվ 066546/1 վարկ սրամադրելու մասին լրացուցիչ համաձայնագիրը և թայմանագրերից համադարձության կարգով հոգոտ Բանկի բռնագանձել 18.915.761 (սասնոթ միլիոն ինը հարյուր սասնհինգ հազար յոթ հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ, Բանկի վճարած դեժակական տուրքի գումարը, ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի առաջին մասի առաջին դարբերության և 4-րդ մասի համաձայն դատարանի կողմից վճիռ կայացնելու օրվանից մինչև թայմանագրերի կողմից դաժանագրվող գումարն ամբողջությամբ Բանկին վճարելն ընկած ժամանակահատվածի համար վարկի մնացորդի համար հաժվարկվող տկոսները՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած հաժվարկային տկոսադրույքի չափով:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամի բռնագանձման դաժանագրի մասով հայցը մերժվել է:

Մույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքին թայմանագրային չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմները, փաստարկները և դաժանագրը.

Մույն վճռաբեկ բողոքը ֆիննելում է հետևյալ հիմքի սահմաններում.

Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 447-րդ հոդվածը: Բողոք բերած անձը նշված դեպքում ղախտներ են հետևյալ փաստարկներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել 24.03.2006 թվականին կնքված թիվ 066546/1 վարկ սրամադրելու մասին լրացուցիչ համաձայնագրի (այսուհետև նաև՝ Համաձայնագիր) 4.7 կետը, համաձայն որի՝ վարկի մարումները սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում Վարկառու է վճարում և սուգանք վարկի 20 տոկոսի չափով: Դատարանը նշված կետում օգտագործվող «վարկ» բառը մեկնաբանել է որդես կետանցված (ժամկետանց) վարկ՝ հիմք ընդունելով ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 447-րդ հոդվածը: Սակայն նույն համաձայնագրի 4.7 կետում հստակ գրված է «վարկ», այլ ոչ թե ժամկետանց վարկ: Նշվածից և Համաձայնագրի 4.5 կետի վերլուծությունից հետևում է, որ Համաձայնագրի կողմերը Համաձայնագիրը ստորագրելիս հստակ գիտակցել են, թե որ դեպքում են որդես սուգանքի հաշվարկման բազա ընդունում ամբողջ գումարը և որ դեպքում՝ գումարի միայն ժամկետանց մասը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը ղախտներ է բեկանել ՀՀ սնտեսական ղատարանի 17.07.2007 թվականի վճռի հայցը մերժելու մասը և այն փոփոխել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և Ընկերության միջև 23.03.2006 թվականին կնքված թիվ 066546 հիմնական վարկային ղայմանագրի հիման վրա 24.03.2006 թվականին կնքվել է թիվ 066546/1 վարկ սրամադրելու մասին լրացուցիչ համաձայնագիրը, որի քջանակներում Ընկերությունը Բանկից ստացել է 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամ վարկ՝ 20 ամիս ժամկետով՝ մինչև 03.12.2007 թվականը, և սարեկան 20 տոկոս տոկոսադրույով:

2) 28.12.2006 թվականից սկսած Ընկերությունը դադարեցրել է վարկի և տոկոսների մարմանն ուղղված վճարումների կատարումը:

3) Համաձայնագրի 4.7 կետի համաձայն՝ նույն լրացուցիչ համաձայնագրով սրված վարկի մարումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում վարկառու է վճարում և սուգանք վարկի 20 տոկոսի չափով և յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով:

4) Դատարանը կիրառելով ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 447-րդ հոդվածը՝ եկել է այն եզրահանգման, որ Համաձայնագրի 4.7 կետում ղարունակվող «վարկ» բառը ղետք է մեկնաբանել որդես կետանցված վարկ՝ չներառելով վարկի գումարի ղատարած վերադարձված մասերը և այն մասերը, որոնց վերադարձման ժամկետը դեռևս չի լրացել:

4. Վճռաբեկ ղատարանի ղատարանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ ղատարանը գտնում է, որ

բողոքն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ղայմանագրի ղայմանները մեկնաբանելիս ղատարանը ղետք է ելնի նրանում ղարունակվող բառերի և արտահայտությունների սառաքի նշանակությունից: Պայմանագրի ղայմանի սառաքի նշանակությունը ղարգ չլինելու դեպքում այն սահմանվում է ղայմանագրի մյուս ղայմանների և ղայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի առաջին կետում ղարունակվող կանոնները հնարավորություն չեն սալիս որոշելու ղայմանագրի

բովանդակությունը, ադա դեֆ է դարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով դայմանագրի նդասակը:

Վերոնշյալ հողվածով նախատեսված է դայմանագրի դայմանների մեկնաբանության երկու կանոն. նախ, դայմանագիրը մեկնաբանելիս դասարանը դեֆ է ելնի դրանում դարունակող բառերի և արտահայտությունների սառաջի նեանակությունից, իսկ դրա դարզ չլինելու դեղում՝ դայմանագրի մյուս դայմանների և դայմանագրի ամբողջական իմաստի հեճ համադրելու միջոցով (ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրի 447-րդ հողվածի 1-ին մաս): Այսինքն առաջին կանոնի հիմնում ընկած է կողմերի կամահայտությունը: Իսկ կողմերի կամահայտությունը դարզելու անհնարինության դեղում դասարանը դեֆ է կիրառի նույն հողվածի 2-րդ մասով նախատեսված դայմանագրի դայմանների մեկնաբանման կանոնը՝ վերհանելով կողմերի ընդհանուր կամքը:

Սույն գործով Դասարանը կիրառելով ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրի 447-րդ հողվածը և գալով այն եգրահանգման, որ Համաձայնագրի 4.7 կետում դարունակվող «վարկ» բառը դեֆ է մեկնաբանել որդես կետանցված վարկ՝ չներառելով վարկի գումարի դասաձ վերադարձված մասերը և այն մասերը, որոնց վերադարձման ժամկետը դեռևս չի լրացել, չի նեել թե ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրի 447-րդ հողվածով նախատեսված դայմանագրի մեկնաբանման կոնկրետ որ կանոնն է կիրառել, որի արդյունում եկել է նման եգրահանգման: Վճարքեկ դասարանը գնում է, որ Համաձայնագրի 4.7 կետի Դասարանի մեկնաբանությունը չի համադասասխանում ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրի 447-րդ հողվածին հեճկյալ դասաձառաբանությամբ.

Համաձայնագրի 4.7 կետի համաձայն՝ նույն համաձայնագրով սրված վարկի մարումները սահմանված ժամկետում չկատարելու դեղում վարկառուն վճարում է սուգանք վարկի 20 տոկոսի չափով, և յուրաֆանչյուր ուեացված օրվա համար տոյժ՝ վճարման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «վարկ» բառի բովանդակությունը միանեանակ չի ընդունվում Բանկի և Ընկերության կողմից և դեկավարվելով ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրի 447-րդ հողվածով նախատեսված դայմանագրի դայմանների մեկնաբանման կանոններով և դրանց կիրառման հերթականությամբ՝ Վճարքեկ դասարանը գնում է, որ դայմանագրի 4.7 կետը դեֆ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրի 447-րդ հողվածի 1-ին մասով նախատեսված կանոնով, այսինքն՝ համադրելով մեկնաբանվող համաձայնագրի այլ դայմանների հեճ:

Այդդիտով, «վարկ» բառը օգսագործվում է Համաձայնագրի մի եարք կետում այդ թվում՝ 1.2, 1.3, 2.1, 3.1.1, 3.1.2, 4.1 և այլ կետերում: Նեված կետերի վերլուծությունից հեճնում է, որ «վարկ» բառի սակ Համաձայնագրում նկատի է ունեցվում 20.000.000 (ֆան միլիոն) ՀՀ դրամը: Սասնավորադես, ֆնարկվող համաձայնագրի 1.2 կետի համաձայն. «Սույն լրացուցիչ համաձայնագրով Բանկը «Վարկառուին» սրամարում է 20.000.000 (ֆան միլիոն) ՀՀ դրամ վարկ: Վարկը սրամարվում է կանխիկ»: Այսինքն՝ նեված կետում կողմերն առաջին անգամ «վարկ» բառն օգսագործելիս նեում են նրա չափը՝ ֆան միլիոն ՀՀ դրամ: Նույն կետի երկրորդ նախադասության մեջ արդեն ուղղակի նեվում է «վարկ» բառն առանց դրա մեծությունը նեելու՝ նկատի ունենալով առաջին նախադասության մեջ նեված մեծությունը: Նույնը վերաբերում է նաև մնացած կետերին, որեղ «վարկ» ասելիս կողմերը նկատի են ունենում 20.000.000 (ֆան միլիոն) ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճարել դատարանը գտնում է, որ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սույն ֆաղափարակային գործով կիրառելի չէ, քանի որ դրա կիրառման անհրաժեշտությունը ծագում է բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված այլմեծի հաշվարկման կանոնի կիրառմամբ այլմեծի չափը որոշելիս ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար սահմանված նվազագույն աշխատավարձի չափից դրական է դառնում:

Ինչ վերաբերում է ««ԻԹԲ» Միջազգային Առևտրային Բանկ» ՓԲԸ-ի 16.02.2007 թվականի թիվ 000077 անդորրագիրը և «Երևան» համասիրության նախագահի 22.02.2007 թվականի և 24.02.2007 թվականի սեղեկանիքները Վերաբերողից դատարանի կողմից չզննահասվելու մասին բողոքի փաստարկներին, ադա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված անդորրագիրը չէր կարող սույն գործով միանգամայն հետևություններ անելու համար հիմք հանդիսանալ, քանի որ այն հավաստի սեղեկություն ճանաչվելու դեպքում անգամ դեռ է համարվել անողորակի ադացույց, քանի որ նախ` դրա բովանդակության ուսումնասիրումից հնարավոր չէր ասել, թե ով է փոխանցում կատարողը, իսկ որդես ստացող նշված է Արևիկ Ավագյանը և ոչ թե Քնարիկ Գևորգյանը կամ Ռուզաննա Ադիլխանյանը: Իսկ համասիրության սեղեկանիքները վերաբերում են Քնարիկ Գևորգյանի և նրա երեխաների բնակության վայրին: Հետևաբար նշված անդորրագիրն ու սեղեկանիքներն ինքնին սույն գործի ադացուցման առարկայում ընդգրկված ոչ մի հանգամանք չեն ադացուցում:

2) Վճռաբեկ դատարանը *բողոքի երկրորդ հիմքին* չի անդրադառնում, քանի որ վճռաբեկ բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ և 6-րդ հոդվածների խախտումը դատաճառարանված չէ:

Այսպիսով, բողոքի առաջին հիմքի մասնակիորեն հիմնավոր լինելը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների համաձայն, Վերաբերողից դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով` Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաբերողից դատարանի 21.06.2007 թվականի վճիռը` հայցը բավարարելու մասով և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան` այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրատարակման դասից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ` usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ` usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական վերաքննիչ
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 3-1046(ՎԴ)
2007թ.

Քաղաքացիական գործ թիվ 07-1143
Նախագահող դատավոր՝ Գ.Մասինյան
Դատավորներ՝ Դ.Խաչատրյան
Վ.Ավանեսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալարը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահող դատավոր Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի նոյեմբերի 9-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Սիլվա Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղաֆաղիական վերաքննիչ դատարանի 14.03.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Սիլվա Խաչատրյանի հայցի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), ՀՀ սոցիալական աղանակագրության հիմնադրամի՝ (այսուհետ՝ Հիմնադրամ) ծառայությունների վճարովի մատուցման դայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու դայահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախադասմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը դայահանջել է անվավեր ճանաչել Բանկի և Հիմնադրամի միջև 28.11.2001 թվականին կնքված Ծառայությունների վճարովի մատուցման դայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1 կետի «գ» ենթակետը:

Երևանի Կենտրոն և Նոր-Մարա համայնքների առաջին ասյանի դատարանի 20.12.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.03.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն վճռաբեկ բողոքը ներկայացրել է Սիլվա Խաչատրյան:

Վճռաբեկ բողոքին դատասխան է ներկայացրել Հիմնադրամը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դայահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներհոիեյալ հիմնավորումներով.

1)Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաքանել «Պեսական կենսաքոչակների

մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ ֆաղսֆաղսիական օրենսգրքի 305-րդ, 438-րդ հոդվածները, 328-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 5-րդ մասը, որոնք պետք է կիրառվեն:

Բողոք բերած անձը նշված դեպքում զրգանքներ է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել վճռի այն դեպքում, թե «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, համաձայն որի՝ կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում, որևէ կադ չունի դայմանագրով սահմանված 12-օրյա ժամկետի հետ և այդ 12-օրյա ժամկետը նույնպես վերաբերում է հաջորդ ամսվա: Բացի այդ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դայմանագիրը դեմք է համադասարանի այն կնիքով դառնում գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար դատարանի կանոններին (իմդերաշիվ նորմերին), իսկ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով: Հետևաբար, կենսաթոշակների վճարման 12-օրյա կամ 15-օրյա ժամկետ սահմանելը չի բխում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի դատարանից: Այսինքն՝ հիմնադրամին իրավունք վերադառնալով չէ ընտրություն կատարել, թե հաջորդ ամսվա ո՞ր օրերին դեմք է կենսաթոշակառուի ստանալ իր կենսաթոշակը:

Հիմնադրամի և Բանկի միջև 28.11.2001 թվականին կնքված դայմանագրի դատարանը՝ 30 օրացուցային օրվա ժամկետի սահմանափակման վերաբերյալ, խախտում է կենսաթոշակառուների սոցիալական իրավունքը և կենսաթոշակի գումարներն ազատ սնուցելու սահմանադրական իրավունքը (ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդված):

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ ֆաղսֆաղսիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասը, որը չպետք է կիրառվի, չի կիրառել 446-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք պետք է կիրառվեն:

Բողոք բերած անձը նշված դեպքում զրգանքներ է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սեփական հայեցողությամբ դայմանագրի դայմանները որոշելու իրավունքը սահմանափակված է այն դեպքերով, երբ դայմանագրի համադասարանի դայմանի բովանդակությունը սահմանվում է օրենքով:

Վերաքննիչ դատարանը զննահատման չի արժանացրել նաև Պայմանագրի կնքման նդատակը, ինչի իրականացման դայմաններում կդարձվեք, որ Պայմանագիրը կնքվել է հոգուս երրորդ անձի, սլյալ դեպքում՝ հոգուս կենսաթոշակառուների:

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ֆաղսֆաղսիական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը, համաձայն որի՝ երրորդ անձի կողմից դայմանագրով իր իրավունքից օգտվելու ցանկությունը դատարանին հայտնելու դատարանի կողմերն առանց երրորդ անձի համաձայնության չեն կարող լուծել կամ փոփոխել իրենց կնքած դայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ դայմանագրով:

Կողմերը դայմանագիրը փոփոխել են ՀՀ ֆաղսֆաղսիական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասի դատարանի խախտմամբ:

3) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ֆաղսֆաղսիական օրենսգրքի 926-րդ հոդվածը, որը պետք է կիրառվի:

Բողոք բերած անձը նշված դեպքում զրգանքներ է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կենսաթոշակառու Սիլվա Խաչատուրյան Հիմնադրամի օտարառու լինելուց զատ, միաժամանակ Բանկի ավանդատու է, և իր բանկային հաշվում եղած դրամական միջոցները սնուցելու

իրավունքները չի թույլատրվում սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերում հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց՝ ինչդեպ ամրագրված է ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 926-րդ հոդվածով:

4) *Դասարանը խախտել է ՀՀ ֆաղաֆաղիական դասավարտության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:*

Բողոք բերած անձը նշված դեպքում դասճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաբերյալ դասարանը վճռի դասճառաբանական մասում չի հիմնավորել, թե վիճարկվող դայմանագրի 2.1 կետի «գ» ենթակետը՝ կենսաթոշակառուի կողմից կենսաթոշակը Բանկի միջոցով ստանալու իրավունքի ժամկետի սահմանափակման դրույթը որքանով է համադասասխանում ՀՀ օրենսդրության դասանշաններին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դասանշան է բեկանել ՀՀ ֆաղաֆաղիական վերաբերյալ դասարանի 14.03.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճարել բողոքի դասասխանի հիմքեր և փաստարկներ.

Բողոքի բազմաթիվ ենթադրություններն այն մասին, որ Պայմանագիրը կնքվել է ՀՀ օրենսդրության, մասնավորապես ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի դասանշանների խախտմամբ և դարձնակալում է հայցվորի՝ կենսաթոշակը ստանալու իրավունքի ժամկետը սահմանափակող դրույթ՝ անհիմն է հետևյալ դասճառաբանությամբ:

Կենսաթոշակները և սոցիալական ծրագրերի գծով իրականացվող այլ վճարումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, այդ թվում՝ Բանկի հետ կնքված Պայմանագրի հիման վրա: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը սահմանում է սլյալ ամսվա կենսաթոշակը հաջորդ ամսվա ընթացքում վճարելու իմդերասիվ դրույթը, որն ի կատար ածելու համար դասասխանողների միջև ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի դասանշաններին համադասասխան կնքվել է Պայմանագիրը:

Պայմանագրում վճարման 15-օրյա ժամկետ սահմանելիս Հիմնադրամը, որդես վարչական մարմին, առաջնորդվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով իրեն վերադասված հայեցողական լիազորություններով և ընտրել հնարավոր իրավաչափ լուծումներից մեկը, այն է՝ վճարման համար սահմանել է որոշակի ժամկետ՝ հետևյալ նկատառումներից ելնելով.

«Բյուջեսային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36.2-րդ հոդվածը սահմանում է դասարանի սոցիալական աղահովազրության բյուջեի մուտքերի աղբյուրները, որոնց թվին են դասվում դասարանի սոցիալական աղահովազրության վճարները: «Պարտադիր սոցիալական աղահովազրության վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դասարանի սոցիալական աղահովազրության վճարները դասարանի սոցիալական աղահովազրության դեսական ծրագրերի ֆինանսավորման նոդասակով աղահովաղիների կողմից դասարանի կարգով վճարվող միջոցներն են: Իսկ նույն օրենքի 6-րդ հոդվածը սոցիալական վճարներ կատարող սարքեր աղահովաղիների համար սահմանում է դրանք հաշվարկելու և դասարանի սոցիալական աղահովազրության բյուջե փոխանցելու սարքեր ժամկետներ, ինչը բացառում է բոլոր աղահովաղիների կողմից սոցիալական վճարները միաժամանակյա փոխանցելու հանգամանքը, ինչն էլ հանգեցնում է կենսաթոշակները և սոցիալական ծրագրերի գծով իրականացվող այլ վճարումները սահմանված ժամանակացույցին համադասասխան կատարելուն:

Ինչ վերաբերում է հայցվորի կողմից մասնանված՝ ՀՀ ֆադաբաղիական օրենսգրքի 926-րդ հոդվածին, ադա հարկ է նեել, որ այդ հոդվածի դահանջը վերաբերում է բանկային հաեվում առկա դրամական միջոցների մնացորդներին, այլ ոչ թե՝ մոսֆագրման ենթակա և դեռևս չմոսֆագրված գումարներին: Իսկ Պայմանագրի դահանջներին համադասասխան, առանց ավանդասուի հանձնարարականի բանկը իրավումնֆ չունի ավանդագրել կենսաթոեակառուի կենսաթոեակի գումարը:

3. ՎՃռաբեկ բողոքի ֆննության համար նեանակություն ունեցող փասեեր.

ՎՃռաբեկ բողոքի ֆննության համար էական նեանակություն ունեն հեևկայ փասեեր՝

Սիլվա Խաչասուրովան 15.10.1996 թվականից հանդիսանում է ծերության կենսաթոեակառու:

2) 28.11.2001 թվականին Բանկի և Հիմնադրամի միջև կնֆվել է Պայմանագիր, որի 1.1. կեևի համաձայն՝ Բանկը դարսավորվել է Հիմնադրամի առաջարանֆով և վեջինիս կողմից հասկացված միջոցների հաեվին ՀՀ սարածֆում իրականացնել կենսաթոեակառուներին կենսաթոեակների վճարում:

3) Բանկի և Հիմնադրամի միջև կնֆվել է Համաձայնագիր (այսուհեև՝ Համաձայնագիր), որի 1.1.2. կեևի համաձայն՝ Պայմանագրի 2.1. կեևի «գ» ենթակեևը վերաեարադրվել է հեևկայ խմբագրությամբ՝ կենսաթոեակառուներին կենսաթոեակի յուրաֆանջյուր ամսվա վճարումը կասարել ֆինանսավորված գումարը «կասարողի» Բանկի մասնաձյուղերի ընթացիկ հաեիվներին ամրագրելուց հեևո 12 օրացուցային օրվա ընթացֆում:

Վերոհիեայլ Համաձայնագրի 1.1.2.-րդ կեևի «դ» ենթակեևի համաձայն՝ Պայմանագրի 2.1.-րդ կեևի «ը» ենթակեևից հեևո ավելացվել է «ժ» ենթակեև հեևկայ խմբագրությամբ. «վճարումը սույն Պայմանագրով սահմանված ժամկեևներում ավարեելուց հեևո, ավելացած գումարները վերադարձնել «Պասվիրասուիև» Հիմնադրամին 3 բանկային օրվա ընթացֆում»:

4) Բանկի և Հիմնադրամի միջև 11.12.2006 թվականին կնֆվել է Համաձայնագիր, որի 3-րդ կեևով նախասեավել է Պայմանագրի 2-րդ մասի «գ» ենթակեևում «12» թիվը փոխարիևել «15-ով»:

4.ՎՃռաբեկ դասարանի դասձառաբանություններ և եգրահանգումներ.

Քննելով վՃռաբեկ բողոքը նեված հիմնֆերի սահմաններում՝ ՎՃռաբեկ դասարանը գևնում է, որ՝

1) Բողոքն առաջին հիմնվոր հիմնավոր է հեևկայ պասձառաբանությամբ.

«Պեևական կենսաթոեակների մասին» ՀՀ օրենֆի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաֆանջյուր ամսվա կենսաթոեակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացֆում՝ ըս Հայասանի Հանրադեևությունում կենսաթոեակառուի փասացի բնակության վայրի:

«Պեևական կենսաթոեակների մասին» ՀՀ օրենֆի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենֆով սահմանված սարիֆային ադահովագրական կենսաթոեակի իրավումնֆ չունեցող անձին 65 սարին լրանալու դեդֆում նեանակվում է ծերության սցիալական կենսաթոեակ:

Այսիմֆն՝ սարիֆային ադահովագրական կենսաթոեակի իրավումնֆի բացակայությունը և անձի՝ 65 սարին լրացած լինելն այն իրավաբանական փասեերն են, որոնց առկայության դայամաններում անձի մոս ծագում է ծերության կենսաթոեակի իրավումնֆ, այսիմֆն՝ իրեն հասանելիֆ կենսաթոեակի գումարի նկասմամբ սեփականության իրավումնֆ:

Նման դիրֆորում է արժանապատեղի և ԶԶ սահմանադրական դատարանի 04.10.2006 թվականի թիվ 649 որոշմամբ, որի VII կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը ֆաղափարով վաստակած միջոցներն են և նրա սեփականությունը:

Կենսաթոշակի վճարումը սեփականատիրոջը սեփականությունը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ադապտացիայի միջոց լինելով հանդերձ կենսաթոշակառուի սեփականությունն է: Հետևաբար անհրաժեշտություն է ծագում դիտարկել Պայմանագրի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածների դրահանգներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու դաշտանությունը, իսկ երկրորդն հռչակում է անձին սեփականությունից զրկելու անթույլատրելիությունը:

Այս հարցի վերաբերյալ նույնդիսի դիրֆորում ունի նաև Եվրոպական դատարանը: Այսպես, Եվրոպական դատարանն, անդադառնալով վերոհիշյալ խնդրին, արժանապատեղի է հետևյալ տեսակետը. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշտանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում նախատեսված «սեփականություն» հասկացությունն ունի ինֆորմացիոն նշանակություն, որը չի հանգեցվում ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքին և որը կախված չէ ներդրման իրավունքի ձևական որակումներով: Գույքային մի շարք իրավունքներ և Եստեր նույնպես կարող են դիտարկվել որպես «սեփականության իրավունք» (են Բեյեյերն ընդդեմ Իսպանիայի գործով Դատարանի 05.01.2000 թվականի վճռի 100-րդ կետը):

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը նշել է, որ գործող օրենսդրությամբ սահմանված չափով նոյապ սահմանադրական իրավունքը, Կոնվենցիայի 1-ին արձանագրության առաջին հոդվածի իմաստով հանդիսանում է գույքային իրավունք: (են Գայգուսուզն ընդդեմ Ավստրիայի գործով Դատարանի 31.08.1996 թվականի վճռի 41-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ԶԶ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը դեմ է մեկնաբանել վերոհիշյալ լույսի ներքո, այսինքն, ոչ թե որպես կենսաթոշակառուի՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը կոնկրետ որոշակի ժամկետում սահմանադրական իրավունք, այլ որպես իրավասու դեմքական մարմնի՝ ոչ ուր քան մինչև սլյալ ժամկետի ավարտը կենսաթոշակի գումարը թուղակառուին վճարելու դաշտակառուություն:

Տվյալ դեմքում, հաճախ առնելով այն հանգամանքը, որ Միլվա Խաչասուրովան արդեն իսկ սեփականություն իրավունք ունի իրեն հասանելի կենսաթոշակի նկատմամբ, ուստի սլյալ ձևակերպումը չի կարող մեկնաբանվել որպես Միլվա Խաչասուրովայի դաշտակառուությունը հենց սլյալ ամսին սահմանադրական հասանելի գումարը և սահմանափակել վերջինիս՝ սլյալ ժամկետն անցնելուց հետո՝ իր սեփականությունն սահմանադրական իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը ԶԶ ֆաղափարի 305-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկն հիմնավոր է համարում:

2) *Բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ԶԶ ֆաղափարի 446-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգոս երրորդ անձի կնքված է համարվում այն դաշտանագիրը, որում կողմերը սահմանել են, որ դաշտադրանը դաշտավոր է դաշտավորությունը կատարել ոչ թե հոգոս դաշտատիրոջ, այլ՝ դաշտանագրում նշված կամ չնշված երրորդ անձի, որն իրավունք ունի դաշտադրանից դաշտանազել իր օգտին կատարելու դաշտավորությունը:

Տվյալ դեմքում Պայմանագրի առարկան ծառայություններն են, որոնք Ընկերությունը

դաճարարվել է մասնուցել Հիմնադրամին, ինչն արտահայտվել է Պայմանագրի 1.1. կետում, որի համաձայն՝ «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն դաճարարվել է Հիմնադրամի առաջադրանքով և վերջինիս կողմից հասկացված միջոցների հաշվին ՀՀ արածոմ իրականացնել կենսաթոշակների վճարումը կենսաթոշակառուներին:

Վերոհիշյալ նկատառումներով Պայմանագիրը չի կարող հանդիսանալ հոգոտ երրորդ անձի կնքված, քանի որ դրանով նախատեսված չէ դրույթ այն մասին, որ Պայմանագրի առարկան կազմող ծառայությունները կատարվելու են ոչ թե Հիմնադրամի օգտին, այլ որևէ այլ անձի:

3) *Բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 926-րդ հոդվածը վերաբերում է քանկային հաշվում եղած դրամական միջոցները սևօրինելու՝ հաճախորդի իրավունքների սահմանափակման անթույլատրելիությանը և որևէ կապ չունի սույն վեճի հետ:

4) ՀՀ քաղաքացիական դատարանի օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ բողոքում չի նշվել, թե Վերաքննիչ դատարանը որ աղացույցը չի հետազոտել գործում եղած բոլոր աղացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սույն բողոքի առաջին հիմքը հիմնավոր համարելով, դրա առկայությունը բավարար է դիտում ՀՀ քաղաքացիական դատարանի օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատարանի օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.03.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրատարակման ղահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnruագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnruագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական վերաբնիչ
դատարանի վճիռ
ֆաղաֆաղիական գործ թիվ 06-3399
Նախագահող դատավոր՝ Գ.Մասինյան
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան
Վ.Ավանեսյան

Քաղաֆաղիական գործ թիվ 3-1133(ՎԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահող դատավոր Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցող դատավորներ Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի նոյեմբերի 9-ին

դռնբաց դատական նիստում, ֆննելով Սերոբ Ավաղյանի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղաֆաղիական վերաբնիչ դատարանի 02.11.2006 թվականի թիվ 06-3399 վճռի դեմ՝ ըստ Սերոբ Ավաղյանի հայցի ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր դարադուրդի ընթացքում աշխատավարձ վճարելու դահանգի մասին.

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախադասությունը.

Դիմելով դատարան՝ Սերոբ Ավաղյանը դահանգել է վերականգնել նախկին աշխատանքում և վճարել հարկադիր դարադուրդի ընթացքում սահմանված աշխատավարձը (82.500 ՀՀ դրամի չափով)՝ մինչև վճռի կատարումը:

Երևանի Արաբկիր և Քանաֆեռ-Չեյթուն համայնքների առաջին այսանի դատարանի 06.05.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական վերաբնիչ դատարանի (այսուհետ՝ Վերաբնիչ դատարան) 02.11.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվոր Սերոբ Ավաղյանը:
Վճռաբեկ բողոքին դատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստերը և դահանգը.

Սույն վճռաբեկ բողոքը ֆննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներհիշյալ հիմնավորմամբ.

Դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 217-րդ հոդվածի 6-րդ կետի, 218-րդ հոդվածի և ՀՀ ֆաղափառական օրենսգրքի 342-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված դեպքումը դատաւարանել է հետևյալ փաստարկներով.

Ընկերությունը դեմ է դատարանին ներկայացրել կողմնակալ և աշխատանքային դրամանագրով նախատեսված դրույթներ, որով կադրացուցվել, որ հայցվորը դատարանը էր հսկել իր աշխատանքի վայրից՝ խանութից դուրս գնվող ցանկացած անձի և Ընկերությունում ծառայող հրաձիգ գործողությունները՝ թույլ չտալու համար նրանց կողմից խանութից գնված «Իգի» կամ «Սիմ» ֆաբրիկայի մեկ այլ գնով վաճառելու: Վերաբերյալ դատարանը կիրառել է հայցային վաղեմություն և հաշվի չի առել, որ հայցվորի մայրը ծանր ու անկողնային հիվանդ է եղել և հայցվորը գրառված է եղել մոր խնամքի ու բուժումը իրականացնելով, որն էլ ՀՀ ֆաղափառական օրենսգրքի 342-րդ հոդվածով համարվում է հարգելի դատաւար հայցային վաղեմության ժամկետի բացթողման համար: Այդ առումով դատարանին է ներկայացվել հայցվորի մոր՝ Լուսինյան Ամիրխանյանի հարևանների գրավոր վկայությունը: Պատասխանողը 13.02.2006 թվականին հայցվորին ազատել է աշխատանքից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 122-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Վ.Սարգսյան փողոցի վրա գնվող խանութ-սրահում բջջային հեռախոսափառեր բաց վիճակում վաճառելու, սահմանված՝ 7.800 դրամից ավել գնով վաճառել թույլատրելու և այն կանխելու ուղղությամբ ի ԵՊՀ Ընկերության միջոցներ չձեռնարկելու և դրանով իսկ իր նկատմամբ վստահությունը կորցնելու դատաւար: Սույն դեպքում վերաբերյալ կազմված արձանագրության համաձայն՝ սույն դատարանի խանութում առկա 198 ֆաբրիկայի և ոչ մեկը բաց վիճակում չի եղել, իսկ թվով երեք «Իգի» ֆաբրիկայի առ այսօր էլ օգտագործվում են հայցվորի ընտանիքի անդամների կողմից, հետևաբար ճշմարտությանը չի համապատասխանում հրամանի մեջ նշված այն միջոցը, թե հայցվորը հեռախոսափառեր վաճառել է բաց վիճակում, քանի որ, եթե դրանք իսկապես լինեին խանութին սրահադրված սույն դեպքում օրվա ֆաբրիկայի, ապա սույն դեպքում վերաբերյալ արձանագրության մեջ դեմ է նշվել ոչ թե 198 թիվը, այլ՝ 201, այնինչ դատարանը կողմի կազմած արձանագրությամբ արդեն իսկ հաստատվել է այն, որ այդ օրը խանութին սրված է եղել 198 ֆաբրիկայի, որոնք բոլորն էլ եղել են փակ վիճակում, այնպես որ, հայցվորի ընտանիքի համար ձեռք բերված ֆաբրիկայի չեն կարող հանդիսանալ հեռախոսափառեր բաց վիճակում վաճառելու համար աղացույց: Պատասխանողի հրամանում վկայակոչվել է, որ հայցվորը թույլատրել է սահմանված 7.800 դրամից ավել գնով հեռախոսափառերի վաճառել և այն կանխելու ուղղությամբ ի ԵՊՀ Ընկերության միջոցներ չի ձեռնարկել, սակայն հայցվորը մեծադեպ գնվել է խանութի ներսում և, բնականաբար, չէր կարող խանութ մտնող և դուրս ելող բազմաթիվ հաճախորդներից յուրաքանչյուրի դեմքում դուրս գալ և հսկել, թե նա արդյոք չի վերավաճառում իր կողմից արդեն գնված ֆաբրիկայի ցանկացած գնով, ինչպիսիք իրավունքից որ կարող էր օգտվել խանութի հսկիչ-հրաձիգը, որը մեծադեպ խանութից դուրս է գնվել և եթե նույնիսկ վերավաճառել է իր կողմից գնված ֆաբրիկայի, դա դեռ չի նշանակում, թե վերջինս այդ իրավունքը չուներ, կամ թե հայցվորը ի դատարանը էր թույլ չտալ հրաձիգին վաճառելու սեփականության իրավունքով վերջինիս դատարանը ֆաբրիկայի: 11.07.2002 թվականի աշխատանքային դրամանագրից դուրս չէ, թե դատարանը էր արդյոք հայցվորը հետևել յուրաքանչյուր գնորդի, այն էլ խանութի սարածից դուրս, որը չի համարվում հայցվորի աշխատանքային սարածի: Վերաբերյալ դատարանը հաշվի չի առել հրաձիգ Սուրեն Հախոյանի ինչպես առաջին այսպիսի դատարանում, այնպես էլ նրա կողմից գրավոր ձևով սրված բացատրություններն այն մասին, որ Ընկերությունում սրված իր բացատրությունները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ նա դրանք սվել է

հոգեկան խիստ ճնշման ազդեցության սակ, ֆանի որ ինքն ունի կոնսուզիա և չի դիմացել մի ֆանի անձանց միաժամանակյա դարսադրանքին, որոնք դահանջել են իրենից գրել ճշմարտությանը չհամադասաստանող սվյալներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դահանջել է բեկանել Վերաֆննիչ դասարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի վճիռը և գործն ուղարկել նույն դասարան՝ նոր ֆննության:

2.1. Վճռաբեկ բողոքի դասաստանի հիմքերը և փաստարկները.

Բողոքի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ դասառաքանությանը.

Հայցվորը աշխատանքից ազատվել է ոչ թե դասահական գնորդներին չհսկելու, այլ խանութում դահողանության ծառայություն իրականացնող ուսիկանի կողմից Ընկերության գործարար համբավը վնասող գործողությունները չկանխելու, ուսի ի շահ Ընկերության գործողություններ չձեռնարկելու համար, ինչով խախտել է Ընկերությունում գործող ներքին կարգադահական կանոնների դահանջները:

Աշխատողների աշխատանքային դարսականությունները սահմանվում են նախևառաջ գործող ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ադա գործատուների կողմից ընդունված ներքին և անհատական ակտերով:

Հիմնավոր չեն հայցային վադեմության ժամկետը բաց թողած լինելու փաստը բողոքաբերի կողմից հերժող դասառաքանությունները, ֆանի որ ՀՀ ֆադաբացիական դասավարության օրենսգրքի 104-րդ հողվածի 4-րդ կետի համաձայն՝ հայցը կամ դիմումն առանց ֆննության թողնելու համար հիմք ծառայած հանգամանքները վերանալուց հետո հայցվորը կամ դիմողն իրավունք ունի կրկին դիմել դասարան:

3. Վճռաբեկ բողոքի ֆննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի ֆննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Մերոք Ավագյանի միջև 11.07.2002 թվականին կնքվել է N3842 աշխատանքային դայմանագիրը:

2) Ընկերության 13.02.2006 թվականի N150-Կ հրամանի համաձայն՝ 14.02.2006 թվականից լուծվել է խանութների ցանցի վարչության ավագ մասնագետ Մերոք Ավագյանի հետ 11.09.2002 թվականին կնքված աշխատանքային դայմանագիրը և նա ազատվել է աշխատանքից՝ Ընկերության գլխավոր կոմերցիոն սնօրինության վաձառքի սնօրինության մանրաձախ ցանցի Վ.Մարգյան հասցեում զսնվող խանութ-սահում բջջային հեռախոսաֆարսեր բաց վիձակում վաձառելու, սահմանված 7.800 դրամից ավելի գնով վաձառքը թույլարելու և այն կանխելու ուղղությամբ ի շահ Ընկերության միջոցառումներ չձեռնարկելու ու դրանով իսկ իր նկատմամբ Ընկերության վսահությունը կորցնելու դասառաքով:

13.02.2006 թվականի N150-Կ հրամանի հիմք են՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հողվածի 1-ին մասի 7-րդ և 122-րդ հողվածի 3-րդ կետերը, ««ԱրմենՏել» ՓԲԸ-ում կարգադահական տույժերի կիրառման ժամանակավոր Կարգի» 8-րդ կետը, ավագ մասնագետ Ս.Ավագյանի 24.01.2006 թվականի, սահի հրաձիգ Ս.Հախոյանի 20.01.2006 թվականի բացարագիրը, Ընկերության ներքին աուդիտի սնօրինության աշխատակիցների 24.01.2006 թվականի կազմած արձանագրությունը, կոմերցիոն գլխավոր սնօրեն Վ.Մարտիրոսյանի 20.01.2006 թվականի և ներքին աուդիտի սնօրեն Բ.Մերսկյանի 24.01.2006 թվականի զեկուագրերը:

4. Վճռաբեկ դատարանի դատառաքանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հեկկյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 217-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ գործատու դարձավոր է կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային դրամանագրերով նախատեսված այլ դատարանություններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքային կարգադրությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր դարձնելով այլ նորմերով իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային դրամանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարձագծի կանոններն են, որոնց դարձավոր են ենթարկվել բոլոր աշխատողները, իսկ համաձայն 2-րդ կետի՝ կազմակերպության ներքին կարգադրական կանոնները (գործատուի ներքին իրավական ակտ) կանոնակարգում են աշխատողներին՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային դրամանագրի կողմերի հիմնական իրավունքները, դատարանությունները և դատաստանակարգությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների նկատմամբ կիրառվող խախտումների և կարգադրական դատաստանակարգության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.02.2006 թվականին Սերոբ Ավագյանն ազատվել է աշխատանքից խանութ-սրահում բջջային հեռախոսափաթեթ բաց վիճակում վաճառելու, սահմանված 7.800 դրամից ավել գնով վաճառքը թույլատրելու և այն կանխելու ուղղությամբ ի ԵՊՀ Ընկերության միջոցներ չձեռնարկելու և դրանով իր նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով: Մինչդեռ, սույն գնով վերաբերյալ կազմված արձանագրության համաձայն՝ սույն գնով դատարանից այդ օրը խանութում եղած 198 փաթեթից ոչ մեկը բաց վիճակում չի եղել, իսկ թվով երեք «Իգի» փաթեթը առ այսօր էլ օգտագործվում են Սերոբ Ավագյանի ընտանիքի անդամների կողմից, հետևաբար հեռախոսափաթեթերը վաճառվել են փակ վիճակում:

Ընկերության հրամանում վկայակոչվել է, որ հայցվորը թույլատրել է սահմանված 7.800 դրամից ավել գնով հեռախոսափաթեթի վաճառքը և այն կանխելու ուղղությամբ ի ԵՊՀ Ընկերության միջոցներ չի ձեռնարկել: Մինչդեռ, գործի փաստերի համաձայն՝ Սերոբ Ավագյանը մեծադեպ եղել է խանութի ներսում և, բնականաբար, չէր կարող խանութից դուրս գնվող սարածքում հաճախողներին միաժամանակ հսկել: Բացի այդ, Ընկերության և Սերոբ Ավագյանի միջև 11.07.2002 թվականին կնքված N3842 աշխատանքային դրամանագրի համաձայն՝ Սերոբ Ավագյանը դարձավոր չէ հետևել խանութի սարածքից դուրս, որը չի համարվում նրա աշխատանքային սարածքը, գնվող յուրաքանչյուր անձի:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի վճռում չի հիմնավորվել այն փաստը, որ Սերոբ Ավագյանը դարձավոր էր հսկել իր աշխատանքի վայրից՝ խանութից, դուրս գնվող անձի և Ընկերությունում ծառայող հրաձիգի գործողությունները՝ թույլ չհատնել համար նրանց կողմից խանութից գնված փաթեթ մեկ այլ գնով վաճառելու:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է դատարանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման դատառոտները կարող են

ճանաչվել հարգելի, եթե դրանք սեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ դակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Վերաբնիչ դասարանը կիրառել է հայցային վաղեմություն, չգնահատելով այն հանգամանքը, որ Սերոբ Ավագյանի մայրը անկողնային ծանր հիվանդ է, որը հաստատվում է Սերոբ Ավագյանի մոր՝ Լուսիկ Ամիրխանյանի, հարևանների գրավոր վկայությամբ և հիվանդի ամբուլասոր բժշկական փաթեթով, իսկ Սերոբ Ավագյանը զբաղվել է մոր խնամքի և բուժման հարցերով:

Այսպիսով, Վճռաբեկ դասարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի հիմնավոր լինելը, ՀՀ ֆաղաֆացիական դատարարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով Վերաբնիչ դասարանի 02.11.2006 թվականի վճիռը բեկանելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դատարարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղաֆացիական վերաբնիչ դատարանի 02.11.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դասարան՝ այլ կազմով նոր ֆննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դասից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՆ
Քաղաքացիական գործ թիվ S-1553
Նախագահող դատավոր՝ Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ 3-1585(ՏԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2007 թվականի նոյեմբերի 9-ին

դռնբաց դատական նիստում, ֆինելով ՀՀ գլխավոր դատախազի սեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ 04.05.2007 թվականի թիվ S-1553 քաղաքացիական գործով կայացրած վճռի դեմ՝ ըստ «Նիյազյանների ընտանիք» ՄՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) դիմումի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեկավարության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) սուղաման ակտն անվավեր ճանաչելու դիմումի մասին և Ծառայության հակընդդեմ հայցի՝ գումար բռնագանձելու դիմումի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախադասությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը դիմում է անվավեր ճանաչել Ծառայության 09.02.2007 թվականի թիվ 1023044 սուղաման ակտը:

Հակընդդեմ հայցով Ծառայությունը դիմում է բռնագանձել Ընկերությունից 18.397.900 ՀՀ դրամ:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ (այսուհետ՝ Դատարան) 04.05.2007 թվականի վճռով դիմումը և հակընդդեմ հայցը բավարարվել են մասնակիորեն:

Սույն վճռաբեկ բողոքը ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազի սեղակալը:

Վճռաբեկ բողոքին դատարանի չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքեր, փաստարկերը և դատանքը.

Սույն վճռաբեկ բողոքը ֆինելում է հետևյալ հիմքի սահմաններում ներհոիեյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշման պահանջները:

Բողոք բերած անձը նշված դիմումը դատախազին է հետևյալ փաստարկներով.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը մեկնաբանելիս Դատարանը հաշվի չի

առել այն հանգամանքը, որ Ընկերությունը դարգեցված հարկ վճարող չհանդիսանալու դայմաններում, դարգեցված հարկի հաշվառում է վարել՝ հարկային ռեսուրսները ներկայացնելով ակնհայտ կեղծ հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

Դասարանը, անդրադառնալով դիմողի ադրանախյին մնացորդի հաշվարկման համար ՀՀ ԿԱ ՀՊԾ ՕՀՎ 6-րդ բաժնի կողմից կիրառված բանաձևի իրավաչափ լինելու հարցին, գտել է, որ սուգման ընթացքում 01.01.2005 թվականի դրոթյամբ ադրանախյին մնացորդի հաշվարկման համար կիրառված բանաձևը չի հակասում որևէ նորմատիվ իրավական ակտի, սակայն դասաբնության ընթացքում ծառայոթյունը չի հիմնավորել 16.09.2005 թվականի դրոթյամբ մնացորդային 16.238.400 ՀՀ դրամ ադրանախյին մեջ ներառված՝ ներմուծված ադրանախյին վաճառքի արժեքը 9.000.000 ՀՀ դրամ կազմելու հանգամանքը: Ուստի սուգող սետույնների կողմից կիրառված բանաձևը հանդիսանում է ոչ իրավաչափ այնքանով, որ դրա միջոցով անհնար է դարգել 01.01.2005 թվականի դրոթյամբ Ընկերոթյան ադրանախյին մնացորդի ճգրհի չափը:

Դասարանի նեված եգրահանգումը հիմնավոր չէ, քանի որ Ընկերոթյունն իր գործունեոթյան ընթացքում չի վարել հաշվադահական հաշվառում, ինչի հեևանքով հնարավոր չէ դարգել ադրանախյին վաճառքի գինը: Նման իրավիճակում ենթակա է կիրառման ՀՀ կառավարոթյան 18.09.1998թ. թիվ 580 որոնամբ հաստատված՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեդերում ՀՀ հարկային ռեսուրսյան կողմից հարկվող օբյեկտների և հարկային դարսավորոթյունների հաշվարկման (գնահատման) կարգի դրոթյաները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դահանջել է բեկանել ՀՀ սնեսական դասարանի 04.05.2007 թվականի վճիռը և գործն ոդարկել նոր քննոթյան:

3. Վճռաբեկ բողոքի քննոթյան համար նեանակոթյուն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննոթյան համար էական նեանակոթյուն ունեն հեևայալ փաստերը՝

1) Ընկերոթյունը դարգեցված հարկ վճարող է և որդես այդդիսին գրանցված է սարածքային հարկային ռեսուրսներում:

2) Ըստ Ընկերոթյան կողմից հարկային ռեսուրսները ներկայացված հայտարարագրի՝ ընկերոթյան եջանառոթյունը 01.01.2005 թվականի դրոթյամբ չի գերազանցել 15 միլիոն ՀՀ դրամը:

3) Ընկերոթյունում կասարվել է սուգում, ինչի արդյունքում 09.02.2007 թվականին կազմվել է թիվ 1023044 սուգման ակտը, որով առաջարկվել է 16.558.100 ՀՀ դրամի չափով հարկային դարսավորոթյուն:

4) Սուգման ակտով արձանագրված խախտումների համար հիմք են հանդիսացել դիմողի կողմից սուգող սետույններին ներկայացված փաստաթղթերը, այդ թվում՝ 16.09.2005 թվականի գույքագրման արդյունքները, ադրանախյին ներմուծման մասնախյին փաստաթղթերը և վաճառքի փաստաթղթերը՝ հաշիվ -ադրանախյին, դրամարկղային օրդերներ և այլն:

5) 05.02.2007 թվականի թիվ 1 որոնամբ սուգում իրականացնող անձը որոնում է կայացրել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքից օգտվելու մասին, և հարկվող օբյեկտը որոնել է ինքնուրույն՝ որդես հարկվող օբյեկտ դիևելով վաճառքի գնի և մասնախյին արժեքի սարբերոթյունը:

4.Վճռաբեկ դասարանի դասձառարանոթյունները և եգրահանգումները.

Ըննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դասարանը

զճնում է, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվադատական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեղմերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կողմից խախտումներով, կամ ակնհայտ կեղծ սվյալներ է մտցնում հարկային ռեզուլտատներում, հաշվարարներում, հաշվառման հաշվառություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային դարձվածքները, առաջ հարկվող օբյեկտները և հարկային դարձվածքները հաշվարկում է հարկային ռեզուլտատները՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, մասնավորապես, հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման օբյեկտների ծավալների, հարկ վճարողի արժույթի և օբյեկտների ծախսերի, գույքագրման և չափագրման սվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների, համանման տվյալներում գործող այլ օբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադրման, այդ հարկ վճարողի վաճառվող առարկաների, աշխատանքների, ծառայությունների իրացման փաստացի գների ամրագրմանը և հսկիչ-դրամարկային մեքենաների շահագործման կանոնների դաշտում մասնավորապես ճշտությանն ուղղված հսկիչ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաթղթավորված սվյալների վրա:

Սույն հոդվածի վերլուծությունից բխում է, որ հարկային մարմինը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ինֆորմացիոն հարկվող օբյեկտները կարող է հաշվարկել միայն այն դեղմերում, երբ մասնավորապես կողմից հարկվող օբյեկտների գծով հաշվադատական փաստաթղթեր չեն ներկայացվում, դրանք վարվում են սահմանված կարգի կողմից խախտումներով, հարկային ռեզուլտատներում ներկայացված հաշվառություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում ակնհայտ կեղծ սվյալներ են մտցվում, և նվազ խախտումների դաշտում անհնար է հաշվարկել հարկ վճարողի հարկային դարձվածքները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը ստուգման ընթացքում ներկայացրել է սկզբնական հաշվառման փաստաթղթեր, այդ թվում նաև՝ առարկային մնացորդի չափի վերաբերյալ, իսկ դատարանի կողմից ընթացքում հարկային մարմինը չի առաջացրել ներկայացված փաստաթղթերով Ընկերության հարկային դարձվածքները հաշվարկելու անհնարիությունը: Հավելի առնելով նվազ, Վճռաբեկ դատարանը զճնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով ՀՀ կառավարության սահմանած կարգով հարկվող օբյեկտի հաշվարկումն անհիմն է, քանի որ հաշվադատական հաշվառման համար սահմանված կարգի ենթադրյալ խախտումն ինքնին հիմք չէ նվազ հոդվածի կիրառման համար:

Մինչդեռ, 05.02.2007 թվականի թիվ 1 որոշմամբ ստուգում իրականացնող անձը որոշել է օգտվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքից, և հարկվող օբյեկտները հաշվարկել է ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ կիրառելով մի բանաձև, որում որդես նվազելի է դիտել առարկաների վաճառքի գները, իսկ որդես հանելի՝ առարկաների մասնաշին արժեքը:

Վճռաբեկ դատարանը զճնում է, որ նման բանաձևի միջոցով հնարավոր չէ որոշել հարկվող օբյեկտները (սվյալ դեղմերում՝ առարկային օբյեկտները և առարկային

մնացորդը), քանի որ ադրբեյջանի մարտիկներին արժեքը չի ներառում ադրբեյջանի ամբողջ ինֆրաստրուկտուրան:

ՀՀ մարտիկներին օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ ադրբեյջանի մարտիկներին արժեքի բաղադրիչներն են՝

ա) արտադրության երկրում ադրբեյջանի ձեռքբերման գինը.

բ) մինչև ՀՀ մարտիկներին սահմանը ադրբեյջանի սեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ադրբեյջանից և համանման այլ ծախսերը.

գ) մինչև ՀՀ մարտիկներին սահմանը ադրբեյջանի սեղափոխման համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը, բացառությամբ ադրբեյջանի ձեռքբերման համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերի.

դ) մարտիկներին սահմանով սեղափոխվող ադրբեյջանի արտադրության և մասնավորապես նախատեսված գնորդի կողմից մասնավորապես անհատապես կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի սրամատչելի՝ ներմուծվող ադրբեյջանից համապատասխանաբար բաժնված՝

- ադրբեյջանի մեջ ներառված նյութերի, բաղադրամասերի և համանման այլ առարկաների արժեքը,

- ադրբեյջանի արտադրության մեջ օգտագործվող գործիքների և համանման այլ առարկաների օգտագործման արժեքը,

- ադրբեյջանի արտադրության մեջ սղառված նյութերի արժեքը,

- ադրբեյջանի արտադրության համար անհրաժեշտ և ներմուծման երկրից բացի այլ երկրում իրականացված ճարտարագիտական, ձևավորման, նախագծման և համանման այլ աշխատանքների արժեքը.

ե) գնորդի կողմից ադրբեյջանի վաճառքի անհրաժեշտ դրամային հանդիսացող ռոյալթիների և թույլտվությունների դիմաց մասնավորապես ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները.

զ) սարքի, փաթեթի և փաթեթավորման աշխատանքների արժեքը.

է) մարտիկներին սահմանով սեղափոխվող ադրբեյջանի հետագա վաճառքի, օգտագործման կամ սնօրինման դիմաց գնորդի կողմից մասնավորապես վճարման ենթակա գումարները:

Մինչդեռ, ՀՀ մարտիկներին օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն՝ ադրբեյջանի մարտիկներին արժեքում չեն ներառվում ադրբեյջանի ինֆրաստրուկտուրայի համարվող այնպիսի ծախսեր, ինչպիսիք են՝

ա) արտադրության երկրում վճարված կամ վճարման ենթակա անուղղակի հարկերը.

բ) ներմուծման երկրում կատարված ադրբեյջանի փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ադրբեյջանից, կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը.

գ) մասնավորապես հանդեպ գնորդի սահմանված ֆինանսական դրամատնային թույլտվություններից բխող տնային.

դ) էլեկտրոնային սլայդների կրիչներում ներառված սեղակատվության (ծրագրային) փաթեթներ և այլն) արժեքը.

ե) ՀՀ մարտիկներին սահմանով սեղափոխվող հետ գործարանների, մեքենաշինական սարքերի կամ սարքավորումների և ՀՀ մարտիկներին սահմանով սեղափոխված այլ ադրբեյջանից հետ կապված շինարարական, մոնտաժային, հավաքման, սեյսնիկական սպասարկման կամ

սեխնիկական օժանդակության աշխատանքների դիմաց կատարվող վճարները, եթե դրանք չեն մտնում այդ ադրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գումարի մեջ:

զ) ներմուծման երկրում ադրանքների ներմուծման համար գանձված կամ գանձման ենթակա տուրքերը, հարկերը և այլ դարձադր վճարները, եթե դրանք չեն մտնում ՀՀ մաքսային սահմանով սեղափոխված ադրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գումարի մեջ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիման վրա հարկվող օբյեկտը կամ հարկային դարձվորությունը որոշելիս ադրանքի վաճառքի գնի և ադրանքի մաքսային արժեքի տարբերությունը չի կարող դիտարկվել որդես հարկվող օբյեկտ (ադրանքային մնացորդ) այն դարձ դատաճառով, որ դրանից ենթակա են նվազման այն ծախսերը, որոնք մտնելով ադրանքի ինֆոարժեքի մեջ, մաքսային արժեքի տարբեր չեն հանդիսանում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառման նախադրյալներն առկա չեն եղել, իսկ վերը նշված բանաձևի միջոցով Ընկերության ադրանքային մնացորդի և Երջանառության հաշվարկումը կատարվել է առանց որևէ իրավական հիմնավորման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը, ճիշտ մեկնաբանելով և կիրառելով սույն բողոքի հիմքում նշված նորմերը, կայացրել է ըստ էության հիմնավոր և դատաճառաբանված վճիռ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ դատարանը ֆննդության առարկա չի դարձրել ՀՀ նստիկանության ՔԳՎ, ՀԿԳ ֆննդության վարչության վարույթում ֆննդող թիվ 69102506 ֆրեական գործով դարձաբանված և ադրացուցված հանգամանքները, ադրա այն չի կարող Վճռաբեկ դատարանի ֆննդության առարկա դառնալ, քանի որ դրանք գործի ըստ էության ֆննդության ընթացքում չեն ներկայացվել դատարանին: Ավելին, վճռաբեկ բողոքում չեն ներկայացվել բավարար և հիմնավոր փաստարկեր այդ հանգամանքը հաստատող ադրացույցները Դատարանին ներկայացնելու անհնարինության վերաբերյալ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սույն վճռաբեկ բողոքի հիմքերն անհիմն համարելով՝ գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ սնտեսական դատարանի 04.05.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դրանից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՆՈՂ՝ usnrwaqություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrwaqություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ սնտեսական դատարանի վճիռ
ֆաղափացիական գործ թիվ S-1311
Նախագահող դատավոր՝ Գ.Ղարիբջան

Քաղաքացիական գործ թիվ 3-1589(ՏԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ֆաղափացիական դատարան (այսուհետ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

*նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2007 թվականի նոյեմբերի 9-ին

դռնբաց դատական նիստում, ֆինելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դատական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ սնտեսական դատարանի 29.06.2007 թվականի թիվ S-1311 վճռի դեմ՝ ըստ «Աստմսերվիս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) դիմումի ընդդեմ Ծառայության՝ ակտի մասնակի անվավեր ճանաչելու դիմումի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատարանական նախադասությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը դիմում է մասնակի անվավեր ճանաչել Ծառայության 27.07.2006 թվականի թիվ 1014401 ստուգման ակտի 15-րդ կետը:

ՀՀ սնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.06.2007 թվականի վճռով Ընկերության դիմումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքին դատարանի կողմից ներկայացվել է:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դիմումը.

Սույն վճռաբեկ բողոքը ֆինելում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ ֆաղափացիական դատարանի օրենսգրքի 53-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասը և 244-րդ հոդվածի 5-րդ կետը, «Աշխատանքի վարչարարության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք չպետք է կիրառվեին և սխալ է մեկնաբանել «Առողջության համար վնասակար աշխատանքներ և մասնագիտությունների ու առողջության համար առանձնապես վնասակար առանձնապես ծանր աշխատանքների և մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.12.2003 թվականի թիվ 1907-Ն որոշումը:

Բողոք բերած անձը նշված դեպքում ղեկավարվում է հետևյալ փաստաթղթերով.

Դատարանը դատապարտել է գնահատման չի արժանացրել գործում առկա ՀՀ աշխատանքային շեշտադրման գործընթացն այն մասին, որ Ընկերության կողմից իրականացված աշխատանքները չեն հանդիսանում աշխատանքի վնասակար կամ առանձնապես ծանր ու վնասակար դեպքեր:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 183 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի նորմալ դաշտաններից շեշտադրման դեպքում աշխատանքի վարձատրությունը կատարվում է ավելի բարձր արժեքային դրույքով, քան նորմալ դաշտաններում: Վճարման չափը որոշվում է կոլեկտիվ կամ աշխատանքային դաշտանագրով:

«Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի նորմալ դաշտաններից շեշտադրման առկայության դեպքում գործատուների կողմից աշխատողներին տրվում են հավելումներ՝ սույն օրենքով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև աշխատանքային դաշտանագրերով սահմանված կարգով և չափերով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առողջության համար վնասակար աշխատանքի կատարման դեպքում աշխատողին վճարվում է հավելում՝ նրա արժեքային աշխատավարձի (դաշտանային դրույքաչափի) 50 տոկոսի չափով:

Նշված նորմերը վերաբերում են աշխատանքային նորմալ դաշտաններից շեշտադրման դեպքերին, իսկ Հայկական ասոնակայանում սարքավորումների տեղադրման, կարգավորման և փորձարկման աշխատանքներ կատարելը չի կարող դիտարկվել շեշտադրման աշխատանքի նորմալ դաշտաններից, քանի որ ՀՀ կառավարության 11.12.2003 թվականի թիվ 1907-Ն որոշմամբ հաստատված «Առողջության համար վնասակար աշխատանքների և մասնագիտությունների ցանկում» նշված աշխատանքները նախատեսված չեն: Հետևաբար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասը և 244-րդ հոդվածի 5-րդ կետը, «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սույն գործով կիրառելի չեն:

2) *Դատարանը խստիվ է ՀՀ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 10-րդ կետի 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերությունները:*

Ի հիմնավորումն այս դեպքում՝ բողոք բերած անձն իրավական փաստաթղթեր չի ներկայացրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դատապարտվել է բեկանել ՀՀ սնտեսական դատարանի 29.07.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության աշխատակիցները 07.07.2006 թվականից մինչև 27.07.2006 թվականը Ընկերությունում կատարել են բոլորից հետ փոխհարաբերությունների ձեռնարկի և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին դատապարտումների կատարման ձեռնարկի սույնում:

2) Ստուգման արդյունքում 27.07.2006 թվականին կազմվել է թիվ 1014401 ակտ, որով Երևանի քաղաքապետարանի և դատարանի սոցիալական վճարների գծով արձանագրվել են խախտումներ և Ընկերությանն առաջադրվել է վճարման համադասարանաբար 3.910.000 և 8.270.300 դրամի հարկային դատարանություններ՝ ներառյալ նշանակված սույնում ու սույնում, ընդամենը՝ 12.180.400 ՀՀ դրամ:

3) Ընկերության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ «Հայկական ԱԷԿ» թիվ 2 Էներգաբլոկի 2-րդ կոնսուրի համակարգերի նորմալ Երևանում գտնվող

փորձարկումներ, «Հայկական ԱԷԿ» թիվ 2 բլոկի հերմետիկ շինությունների համակարգերի փորձարկումների անցկացում, «Հայկական ԱԷԿ» թիվ 2 էներգաբլոկի էլեկտրաֆիկացման ամրակների հաղորդակների հարմարաբերում, «Հայկական ԱԷԿ» թիվ 2 էներգաբլոկի 2-րդ կոնսորի համակարգերի սարքավորումների և խողովակաշարերի ջերմային մեկուսացման փորձարկման և անձնագրավորման անցկացում:

4) Նաված աշխատանքների կատարումը ստուգողների կողմից դիտվել է որդես նորմալ աշխատանքային դայանոմներից շեղումներ և այդ հիմքով արձանագրվել են խախտումներ:

4. Վճռաբեկ դասարանի դասձառաբանություններ և եզրահանգումներ.

Զննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դասարանը գտնում է, որ բողոքի առաջին հիմքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ֆաղաֆացիական դասավարտության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դասարանը յուրաքանչյուր աղացույց գնահատում է գործում եղած բոլոր աղացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ աշխատանքային Տեսչությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 11.12.2003 թվականի թիվ 1907-Ն որոշման մեջ ընդգրկված աշխատանքների համար նախատեսված իրավունքից օգտվում են միջուկային ռադիացիոն անվտանգության Տեսչության և էներգետիկայի աշխատողները, իսկ 11.08.2005 թվականի թիվ 1384-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածում ընդգրկված աշխատանքների համար նախատեսված վնասակարության հավելում ստանալու իրավունքից օգտվում են միայն ԱԷԿ-ի աշխատողները, որոնց կողմից աշխատանքային օրվա ընթացքում կատարված աշխատանքների ամբողջ ծավալը ընդգրկում է նրանց հիմնական աշխատաժամանակը: Գործում առկա սույն փաստաթուղթը Դասարանի կողմից դաշտած գնահատման չի ենթարկվել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 244-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված աշխատանքի նորմալ դայանոմներից շեղումների դեղումն աշխատանքի վարձատրությունը կատարվում է ավելի բարձր սարիֆային դրույքով, քան նորմալ դայանոմներում կատարված աշխատանքի համար: Վճարման չափը որոշվում է կոլեկտիվ կամ աշխատանքային դայանոմագրով:

Նույն օրենսգրքի 244-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործատուն դարձավոր է աղաժողովել աշխատանքի նորմալ դայանոմներ, որդեսգի աշխատողները կարողանան կատարել աշխատանքի նորմաները, մասնավորապես, աշխատողների համար աղաժողովել առողջության համար աշխատանքի անվտանգ և անվնաս դայանոմները:

«Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի նորմալ դայանոմներից շեղումների առկայության դեղումն գործատուների կողմից աշխատողներին տրվում են հավելումներ՝ նույն օրենքով և իրավական այլ ակտերով, ինչդեպ նաև աշխատանքային դայանոմագրերով սահմանված կարգով և չափերով:

Նաված նորմերի վերլուծությունից բխում է, որ աշխատողներին հավելումների կամ աշխատանքի վարձատրությունը ավելի բարձր սարիֆային դրույքով վճարելու նախատեսված է հանդիսանում աշխատանքի նորմալ դայանոմներից շեղումների առկայությունը:

